«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Երևան – 2017

ՆԱԽԱԲԱՆ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է համալսարանի ներկայացրած դիմումի համաձայն: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից ՏԵՄՊՈՒՍ-ի GOVERN ծրագրի շրջանակներում իրականացվող ֆինանսավորմամբ :

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից. փորձագիտական այցին հետևել է մեկ միջազգային դիտորդ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև՝ հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) հավատարմագրման նպատակով իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2) որակի բարելավման նպատակով իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է ԳՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 16

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 16

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 17

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 20

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 20

ՉԱՓԱՆԻՇ I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 22

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 30

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 35

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 40

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 44

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 48

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 53

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 55

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 59

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ 64

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 65

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 67

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 69

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 71

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 72

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 73

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԳՊՀ փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ համալսարանը «ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որն ունի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացման, բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստման, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, լուսավորչական գործունեության ծավալման, արտաքին համագործակցության ընդլայնման, ինչպես նաև մարզի սոցիալ-մշակութային զարգացմանը նպաստելու» հավակնություններ:

Մինչ 2011 թվականը գործող պետական հավատարմագրման չափանիշների և կարգի համաձայն համալսարանը հավատարմագրում չի անցել: Հավատարմագրման ներկա գործընթացին ԳՊՀ-ն մասնակցել է իր դիմումի համաձայն:

ԳՊՀ-ն իրականացնում է բակալավրի կրթական աստիճանում 16 կրթական ծրագիր առկա ու հեռակա ուսուցման ձևերով և մագիստրոսի կրթական աստիճանում առկա ուսուցման ձևով՝ 13 կրթական ծրագիր: Ծրագրերը կառուցված են կրեդիտային հենքով և պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: Դրանք 2015թ. Վերանայվել են. որոշ կրթական ծրագրերի բարելավման համար ուսումնասիրվել են ՀՊՃՀ-ի ուսումնական պլանները: ԳՊՀ-ն չունի օտար լեզվով իրականացվող կրթական ծրագրեր, սակայն ներգնա շարժունություն ապահովելու նպատակով մշակվել են օտարալեզու դասընթացներ: RETHINKe ծրագրի շրջանակում Իսպանիայի Կորունա համալսարանի հետ համատեղ իրականացվում է «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությամբ կրկնակի դիպլոմի շնորհման ծրագիր:

ԳՊՀ-ը սկսել է ուսումնական գործընթացը իրականացնել վերջնարդյունքահեն մոտեցմամբ, կրթական ծրագրերի և առանձին դասընթացների համար մշակել է ակնկալվող ուսումնառության արդյունքներ, սակայն փորձագիտական խումբը դրանց ձևակերպումների վերանայման, ինչպես նաև ՈԱՇ-ի համապատասխան մակարդակների բնութագրիչների հետ քարտեզագրման անհրաժեշտություն է տեսնում:

ԳՊՀ-ում առկա ռեսուրսները բավարար չեն ուսումնառության արդյունավետ միջավայր ապահովելու և ծրագրերի կրթական վերջնարդյունքների ձևավորման համար: Բնագիտական մասնագիտությունների լաբորատորիայից բացի մյուս լաբորատորիաների, լինգաֆոնային կաբինետների և լսարանների հիմնական մասը բավարար հագեցված չէ անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով: Գրադարանները միջազգային գրադարանային ֆոնդերի հասանելության, գրականության արդիականացման և թվայնացման կարիք ունեն, իսկ համակարգչային լսարանները՝ հետազոտական և վիճակագրական վերլուծության ծրագրերի լիցենզավորված փաթեթների: Ֆինանսական հիմնական մուտքերը ձևավորվում են ուսանողների վարձավճարներից և պետական ֆինանսավորումից: ՄՈՒՀ-ի ֆինանսական կառավարման համակարգը չի ենթադրում ռեսուրսների բաշխում ըստ ռազմավարական ուղղությունների և կրթական ծրագրերի: Ֆինանսական ռեսուրսները բաշխվում են կարճաժամկետ (տարեկան) կտրվածքով և հիմնականում հատկացվում են աշխատավարձային ֆոնդին, այնուհետ՝ որոշ մասնաբաժիններով այլ հոդվածների:

---

[1]ՀԱՎԵԼՎԱԾ 1: Փորձագիտական խմբի անդամների համառոտ ինքնակենսագրականները

ԳՊՀ-ն իր առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար ունի անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմ: Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության հիմքում ընկած է համալսարանի դասընթացներն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորում ունեցող կազմի ձևավորումը, սակայն ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներն ընդհանրական են: Համալսարանում աշխատում է 145 դասավանդող, որից 15-ը ունի գիտությունների դոկտորի, իսկ 60-ը թեկնածուի գիտական աստիճան: Դասախոսների 31%-ը դոցենտ են, իսկ 5,5%-ը՝ պրոֆեսոր: Առկա են դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմներ, որոնց համաձայն համալսարանում իրականացվում է դասախոսի գիտամանկավարժական ու ուսումնական գործունեության գնահատում: Սակայն գործող մեխանիզմների կիրառումը համակարգման անհրաժեշտություն ունի, գործիքների և մեխանիզմների արդյունավետությունը գնահատված չէ: ԳՊՀ-ում իրականացվել են տարբեր վերապատրաստումներ, այժմ ներդրման փուլում են պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործմանն ուղղված գործընթացները: ՄՈՒՀ-ը բավական ակտիվ է երիտասարդ դասախոսների ներգրավման ուղղությամբ. երիտասարդ դասախոսները կազմում են 43,4%-ը:

ԳՊՀ-ում ուսանողների հավաքագրումը, ընտրությունն ու ընդունելությունն իրականացվում են համապատասխան կարգերի հիման վրա: Ուսանողների արդյունավետ ուսումնառությունը խթանելու նպատակով համալսարանը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ ուսանողները օժանդակություն և ուղղորդում ստանալու նպատակով կարող են դիմել անմիջապես վարչական անձնակազմին, համալսարանի ռեկտորին և համապատասխան արձագանք ստանալ, միևնույն ժամանակ ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացը համակարգման կարիք ունի: Պասիվ են ուսանողների կարերիայի կողմնորոշման ուղղված գործողությունները:

ԳՊՀ-ն կարևորում է անցումը դասական դասախոսակենտրոն մոտեցումից դեպի ուսուցման ուսանողակենտրոն մոտեցման: Այդուհանդերձ, անցումը դեռևս հստակ և ամբողջական չէ: Ուսանողների հետ հանդիպումները փաստեցին, որ ուսանողների պատկերացումներն ու նոր մոտեցման ընկալումը հստակ ձևավորված չեն:

ԳՊՀ-ում կազմակերպվում է ինտերակտիվ ուսուցում, սակայն դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը դեռ համակարգված չէ՝ պայմանավորված դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության համընդհանուր մոտեցման բացակայությամբ: ՄՈՒՀ-ում գործում է բազմագործոնային գնահատման համակարգ, որի մասին ուսանողները իրազեկվում են տրամադրվող կրթական ծրագրերի տեղեկագրքերի միջոցով: Բուհում մշակվել և ներդրվել են ուսանողների բողոքների քննարկման կարգ և ակադեմիական ազնվության հայեցակարգ: Փորձագիտական խումբը խնդիրներ է տեսնում, որ գնահատման մեթոդների փոխկապակցվածությունը դասավանդման և ուսումնառության մեթոդների և վերջնարդյունքների հետ թույլ է: Համալսարանը դեռևս չի իրականացնում դասավանդման և ուսումնառության մեթոդների, գնահատման մեթոդների ու վերջնարդյունքների քարտեզագրում:

Դեռևս հստակ սահմանված չեն հետազոտական ոլորտում համալսարանի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարությունը և դրան ուղղված քայլերը: Հետազոտական գործունեությունը ՄՈՒՀ-ում սահմանափակ է ինչպես միջազգային հետազոտությունների իրականացման, այնպես էլ ուսանողների և դասախոսների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածության տեսանկյունից: Բացակայում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող երկարաժամկետ ռազմավարության և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը: ԳՊՀ-ում առկա են ամբիոնային հետազոտական ուղղություններ, սակայն ծրագրերի տեսքով հստակ ձևակերպված չեն, և ամբիոնային հետազոտությունների ուղղությունները ոչ միշտ են կապակցված ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթությունների հետ: ԳՊՀ-ն, լինելով տարածաշրջանային ուսումնական հաստատություն, իր հետազոտական ուղղությունները չի բխեցնում տարածաշրջանի

զարգացման հիմնախնդիրներից: Համալսարանում **գիտական խորհրդից, ֆակուլտետների խորհուրդներից և ուսումնագիտական գծով պրոռեկտորից բացի գիտական գործունեությունը կանոնակարգող այլ կառույց կամ պատասխանատու չկա**:[2]: Գիտահետազոտական գործունեության զարգացման նպատակով ՄՈՒՀ-ը դեռևս չի որդեգրել միասնական ռազմավարական մոտեցում, իսկ հետազոտական ոլորտում հաջողությունները հիմնականում պայմանավորված են առանձին անհատների սեփական նախաձեռնություններով: ՄՈՒՀ-ում գիտահետազոտական գործունեության կառավարումը կանոնակարգված կերպով չի իրականացվում, իսկ միջամբիոնային հետազոտությունների և ամբիոնների միջև կուտակած փորձի փոխանակման բացակայությունը չի նպաստում համաչափ զարգացմանը ու ձեռքբերումների տարածմանը:

Որպես հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմ ՄՈՒՀ-ում դիտարկվում են կուրսային, ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը, սակայն ուսումնասիրված աշխատանքներն և թեզերը ցույց տվեցին, որ դրանցում հետազոտական և նորարարական բաղադրիչը փոքր է:

Համալսարանի ղեկավարությունը կարևորում է փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծումը: ՄՈՒՀ-ն ունի համագործակցության պայմանագրեր ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան մի շարք կազմակերպությունների հետ: ՄՈՒՀ-ը ներգրավված է 22 միջազգային ծրագրում, որոնց շրջանակներում համագործակցում է շուրջ 75 միջազգային կազմակերպության հետ: Միջազգային ծրագրերի շրջանակներում որոշ աշխատակիցներ մասնակցել են սեմինարների, վերապատրաստումների, աշխատաժողովների: Միջազգային գործունեության շրջանակներում ձեռք բերված լավագույն փորձի տարածման և բուհի գործընթացների վրա ծրագրերի ազդեցության գնահատման անհրաժեշտություն կա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի ջանքերը կրթական և այլ գործընթացներն արդյունավետ իրականացնելու ուղղությամբ: Այդուհանդերձ ԳՊՀ կառավարման համակարգն առավել հստակեցման և հետագա պարզեցման կարիք ունի: Փորձագիտական խումբը դրական է համարում կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթային հենքի առկայությունը, սակայան կառավարման համակարգի արդյունավետության գնահատման անհրաժեշտություն է տեսնում: Դասախոսներն ու ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը, սակայն շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը դեռևս գնահատված չէ: ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը համակարգված չէ: ԳՊՀ-ում քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը մասամբ է իրականացվում որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով. հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման կամ իրականացման փուլերում:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի ջանքերը ՈՆԱ համակարգի ներդրման ու գործարկման ուղղությամբ: Այնուամենայնիվ, համակարգի արդյունավետ գործարկմանն ուղղված քայլերը դեռևս համակարգված բնույթ չեն կրում: Չնայած ՄՈՒՀ-ը մշակել է որակի ապահովման ձեռնարկ, սակայն հստակեցված և ամբողջական չեն այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտային բուհին գնահատել բոլոր գործընթացների շարունակական բարելավման ընթացքը: Տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների և գործիքակազմի անկատարությունը ու վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չեն տալիս գնահատել ՈԱ գործընթացների ազդեցությունը ՄԿԾ-ների և համալսարանի գործունեության բարելավման վրա: Չնայած մշակվել է փաստաթղթային հենքը, ստեղծվել է համապատասխան ստորաբաժանում, այնուամենայնիվ որակի ապահովման համակարգը դեռևս ամբողջովին ինտեգրված չէ ՄՈՒՀ-ի գործընթացներում:

---

[2] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է «… ***Համալսարանում չկա գիտական գործունեությունը կանոնակարգող կառույց կամ պատասխանատու….***»:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. ԳՊՀ-ում առկա է առողջ աշխատանքային մթնոլորտ,
2. ՄԿԾ-ները մշակված են ՄՈՒՀ-ի առաքելությանն ու պետական կրթական չափորոշիչներին համապատասխան,
3. Ներքին շահակիցները հնարավորություն ունեն մասնակցելու իրենց վերաբերող որոշումների կայացման գործընթացներին,
4. Աշխատակազմը բաց է և պատրաստ բարեփոխումների,
5. Դասախոսական կազմը մոտիվացված է և նվիրված,
6. ԳՊՀ-ում կազմակերպվում է ինտերակտիվ ուսուցում,
7. ԳՊՀ վարչական կազմի կողմից ուսանողներին տրամադրվում է անհրաժեշտ խորհրդատվություն և ուղղորդում,
8. ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանությունը մշտական ուշադրության տակ է՝ պայմանավորված խմբերին կցված խորհրդատուների և ուսանողական խորհրդի համատեղ գործունեությամբ,
9. Համալսարանը ակտիվ ներգրավված է միջազգային ծրագրերում,
10. Համալսարանում հիմնվել է որակի ապահովման բաժին, մշակված է որակի ապահովման ձեռնարկ:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. Համալսարանի ռազմավարական ծրագրի նպատակներն ու խնդիրները հստակ և չափելի չեն, իսկ վերջիններիս իրականացման գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը բացակայում են,
2. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները փոխկապակցված չեն ուսումնառության վերջնարդյունքների հետ,
3. Արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՄԿԾ-ների մշակման, վերանայման և, առհասարակ, կրթական գործընթացներում պասիվ է,
4. ԳՊՀ համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեությունը դեռևս միտված չէ նրա կանոնադրական գործառույթների իրականացմանը՝ ուսանողների և շրջանավարտների կարիերայի ապահովում, աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացում, ինչպես նաև համալսարանի և գործատուների համագործակցությանը միտված ծրագրերի իրականացում,
5. Դասախոսական կազմի մասնգիտական զարգացմանն ուղղված աշխատանքներ ՄՈՒՀ-ում չեն իրականացվում,
6. Սակավ միջոցներ են տրամադրվում թե՛ դասախոսների, թե՛ուսանողների գիտահետազոտական աշխատանքը խրախուսելուն,
7. ԳՊՀ-ի ռեսուսներով ապահովվածությունը բարելավման կարիք ունի՝ մասնավորապես, տեխնիկապես հագեցված լսարանների և լաբորատորիաների ապահովում, նյութատեխնիկական բազայի հարստացում, հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար անհարժեշտ պայմանների ստեղծում: Գիտության զարգացման համար ռեսուրսային բազան թույլ է,
8. ԳՊՀ-ում օտար լեզվի իմացության մակարդակը ցածր է թե՛ դասախոսների, և թե՛ ուսանողների շրջանում,
9. Կառավարման համակարգում որակի ամբողջական կառավարման ՊԻԳԲ սկզբունքը (պլանավորում, իրականցում, գնահատում, բարելավում) ոչ լիարժեք է կիրառվում,

10.Որակի ներքին ապահովման համակարգը դեռևս ամբողջովին ինտեգրված չէ ԳՊՀ-ի գործընթացներում, որակի մշակույթը դեռևս ձևավորման փուլում է:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաքելությունը և նպատակները

1. Վերանայել և հստակեցնել համալսարանի առաքելությունը՝ սահմանելով առավել իրատեսական, շահակիցներին ընկալելի և չափելի հավակնություններ շնորհիվող որակավորումների և ակնկալվող արդյունքների առումով,
2. Լրամշակել համալսարանի ռազմավարական ծրագիրը՝ սահմանելով ռազմավարական ուղղություններ և/կամ գերակայություններ, մշակել կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունների ծրագրեր, ՌԾ-ի իրականացման հստակ ժամանակացույց,
3. ՌԾ մշտադիտարկման պլանում հստակեցնել քայլերը և դրանց իրականացման ժամկետները, պատասխանատուներին, նաև տվյալների համավաքագրման մեխանիզմներն ու աղբյուրները,

Կառավարումը և վարչարարությունը

4. Հստակեցնել և պարզեցնել ԳՊՀ կառավարման կառուցվածքը՝ ապահովելով ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների ու կառավարման համակարգի համահունչությունը, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների աշխատակիցների պարտականությունները և գործառույթները, ապահովել դրանց փոխգործակցությունները: Հստակեցնել տարբեր ստորաբաժանումներում պահվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
5. Ներդնել վարչական կառույցների և դրանց գործունեության արդյունավետության գնահատման, ինչպես նաև ամբիոնային և ֆակուլտետային աշխատանքի լավագույն փորձի բացահայտման ու տարածման մեխանիզմներ,
6. Մշակել կարճաժամկետ ու միջնաժամկետ գործողությունների ծրագրեր՝ նրանց իրականացման, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներով՝ ՌԾ-ում նախանշված նպատակների ձեռքբերումը երաշխավորելու համար,
7. Կառավարման բոլոր մակարդակներում համալսարանի քաղաքականությունների ու ընթացակարգերի վարչարարությունը որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով իրականացնելու համար վերանայել գործող մեխանիզմները և կանոնակարգերը,
8. Մշակել համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության, ինչպես նաև ՄԿԾ-երի ու իրականացվող գործընթացների արդյունավետության վերաբերյալ անհրաժեշտ հավաստի տվյալների հավաքագրման մեխանիզմներ և ընթացակարգեր:

Մասնագիտության կրթական ծրագրերը

9. Քարտեզագրել ՄԿԾ-ների վերջնարդյունքները ՈԱՇ-ի հետ՝ ցույց տալով դրանց համապատասխանությունը,
10. Ներդնել ՄԿԾ-ի և դասընթացների վերջնարդյունքներին հասնելու դասավանդման-ուսումնառության-գնահատման ընտրության քաղաքականություն՝ շեշտադրելով դրանց համապատասխանեցումը վերջնանդյունքներին և ուսանողակենտրոն մետեցումները,
11. Հստակեցնել կրեդիտների բաշխման և հաշվարկման քաղաքականությունը՝ փոխկապակցելով ուսումնառության վերջնարդյունքների հետ,
12. Վերանայել դասընթացների ծրագրերը՝ միտված հեռակա ուսուցման ձևով իրականացվող դասընթացների բովանդակությունը վերջնարդյունքներին համապատասխանեցնելուն, առկա և հեռակա ուսուցման ձևերում դասընթացների ծրագրերի տարբերությունները շտկելուն,
13. Մշակել թեզերի, կուրսային, ավարտական և ինքնուրույն աշխատանքների գնահատման հստակ չափանիշներ՝ վերջիններս փոխկապակցելով բովանդակային (հետազոտական և վերլուծական բաղադրիչներ) և տեխնիկական պահանջների հետ,
14. Իրականացնել բենչմարքինգ՝ համալսարանի ՄԿԾ-երը բովանդակային առումով նմանատիպ

այլ կրթական ծրագրերի հետ համահունչ դարձնելու նպատակով,

15. Արմատավորել ՄԿԾ-ների պարբերաբար մշտադիտարկման, նրանց իրականացման արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացներ ՄՈՒՀ-ում՝ ընդլայնելով շահակիցների կարիքների վերհանումը և ներգրավվածությունը դրանցում:

Ուսանողները

16. Մշակել համալսարանի դիմորդների՝ մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող գործառույթների արդյունավետության գնահատման մեխանիզմներ,
17. Կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման մեխանիզմները, կանոնակարգել լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություններ տրամադրելու գործընթացները,
18. Կանոնակարգել ուսանողների ուղղորդման և օժանդակության գործընթացները, ստեղծել կամընտրական դասընթացների ընտրությանն ուղղված մասնագիտական կողմնորոշման հնարավորություն,
19. Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեությունը նպատակաուղղել աշխատաշուկայի կարիքների հետազոտմանը, ԳՊՀ շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրությանը և նրանց հետ կայուն հետադարձ կապի ապահովմանը,
20. Մշակել մեխանիզմներ, որոնք կնպաստեն հետազոտական գործընթացներում ուսանողների ընդգրկվածության ընդլայնմանն ու ուսումնառողների մոտ հետազոտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը,
21. Ստեղծել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար հասանելի ուսումնական միջավայր՝ ապահովելով ուսումնառության մատչելիությունը նրանց համար:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

22. Մշակել մարդկային ռեսուրսների կառավարման հստակ և թափանցիկ մեխանիզմ և ներառել ՌԾ-ում՝ որպես ռազմավարության ուղղություն: Ամրագրել երիտասարդ դասախոսների ներգրավման գործընթացը,
23. Մշակել համալսարանի յուրաքանչյուր կրթական ծրագրով ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ՝ հաշվի առնելով կոնկրետ ՄԿԾ-ների առանձնահատկությունները:
24. Ներդնել դասախոսական կազմի կարիքների պարբերաբար վերհանման համակարգ, դրանց հիման վրա իրականացնել նրանց վերապատրաստումները,
25. Ներդնել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի գնահատման, ինչպես նաև խրախուսման և առաջխաղացման հստակ և կանոնակարգված մեխանիզմներ:

Հետազոտությունը և զարգացումը

26. Հստակեցնել հետազոտական ոլորտում համալսարանի հավակնությունները, հետաքրքրությունները և գործունեության կոնկրետ ուղղությունները: Մշակել հետազոտական ոլորտում ԳՊՀ-ի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող երկարաժամկետ ռազմավարություն,
27. Պլանավորել ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներն ըստ ՄՈՒՀ-ի գիտահետազոտական առաջնահերթությունների, իրականացնել դրանց մշտադիտարկումը: Նպաստել անհատական, ամբիոնային, միջամբիոնային հետազոտությունների իրականացմանը,
28. Ներդնել հստակ մեխանիզմներ գիտահետազոտական գործունեության կապը ուսումնառության գործընթացի հետ ապահովելու նպատակով: Մշակել քաղաքականություն, համաձայն որի գիտական հետազոտության իրականացումը կդառնա ուսումնառության մեթոդ,
29. Կատարել համապատասխան ֆինանսական ներդրումներ ՄՈՒՀ-ի գիտահետազոտական գործունեությունը զարգացնելու և գիտական աշխատանք կատարելու համար բարենպաստ

պայմաններ ստեղծելու նպատակով: Բյուջեում ֆինանսական միջոցներ տրամադրել հետազոտական ոլորտի զարգացմանը և շարունակել համալսարանի հետազոտական ծրագրերի համար արտաքին ֆինանսական աղբյուրներ որոնել,

30. Նպաստել հետազոտությունների առևտրայնացմանը՝ համալսարան-հետազոտություն- բիզնես կապի ամրապնդմամբ,
31. Մշակել հետազոտական գործունեության միջազգայնացման ռազմավարություն, խթանել այլ համալսարանների հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացումն ու միջազգային հրապարակումները:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

32. Բարելավել ԳՊՀ ենթակառուցվածքային ռեսուրսները՝ միջոցներ տրամադրելով լսարանների, լաբորատորիաների նյութատեխնիկական միջոցներով վերազինմանը, նորագույն սարքավորումների ձեռքբերմանը: Այն դիտարկել համալսարանի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը: Քայլեր ձեռնարկել հատուկ կարիք ունեցող ուսանողների համար ենթակառույցվածքային ռեսուրսներով ապահովելու ուղղությամբ: Վերլուծել՝ որքանով են առկա ռեսուրսները ապահովում անհրաժեշտ միջավայր՝ ռազմավարական պլանի նպատակներից բխող կրթական գործունեությունն իրականացնելու համար,
33. Համակարգել ԳՊՀ շահակիցների կարիքների բացահայտման գործընթացները՝ համալսարանի առաքելության և ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացման և անհրաժեշտ ռեսուրսներով ապահովման նպատակով,
34. Կատարել յուրաքանչյուր ՄԿԾ-ի իրականացման ու շարունակականության ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների վերլուծություն՝ խթանելով վերևից ներքև և ներքևից վերև պլանավորման մեխանիզմների գործարկումը,
35. Մշակել և ներդնել այնպիսի ֆինանսական կառավարման քաղաքականություն, որը կնպաստի ՄԿԾ-երի նպատակների իրականացմանն ու անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով համալսարանի ապահովմանը: Ներդնել ֆինանսական ռեսուրսների բաշխման և ծախսերի արդյունավետության գնահատման և վերլուծության մեխանիզմներ՝ ըստ ՄՈՒՀ-ի ռազմավարական ուղղությունների և առաջնահերթությունների,
36. Մշակել տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու միասնական քաղաքականություն՝ ներդնելով փաստաթղթաշրջանառության և տվյալների հավաքագրման էլեկտրոնային համակարգ,
37. Մշակել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հասարակական պատասխանատվությունը

38. Բարելավել հաշվետվողականության ապահովման մեխանիզմները ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման տեսանկյունից: Պարբերաբար գնահատել գործընթացի արդյունավետությունը՝ համապատասխանաբար բարելավելով հաշվետվողականության եղանակների հավաստիության և արդյունավետության ստուգման մեխանիզմներն ու գործիքները,
39. Կատարելագործել հասարակության լայն շրջանակների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները՝ կատարված աշխատանքների և տրամադրվող կրթության որակի վերաբերյալ պարբերաբար արձագանք ստանալու նպատակով,
40. Ստեղծել տեղեկատվության զետեղման քաղաքականություն՝ համապատասխան ժամանակացույցով ու ապահովել հասանելիությունը թիրախային շահառուներին,
41. Մշակել հասարակությանը գիտելիքի փոխանցման, ինչպես նաև լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականություն և ռազմավարություն, ընթացակարգեր և համապատասխան մեխանիզմներ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

42. Մշակել և ներդնել արտաքին կապերի հաստատումը և միջազգայնացումը խրախուսող ընթացակարգեր,
43. հստակեցնել համալսարանի արտաքին կապերի և միջազգային համագործակցության ֆունկցիոնալ գործառույթները,
44. Իրականացնել կարիքների վերհանում/վերլուծություն(ներ)՝ գնահատելու ՄՈՒՀ-ի միջազգայնացման ու արտաքին կապերի զարգացմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը և բարձրացնելու տեղեկացվածության աստիճանը: Գնահատել լեզվական հմտությունների զարգացմանը միտված լրացուցիչ դասընթացների արդյունավետությունը,
45. Մշակել և ներդնել միջազգայնացմանն ուղղված ֆինանսական միջոցների պլանավորման մեխանիզմներ:

Որակի ներքին ապահովումը

46. Վերանայել ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու նպատակները՝ ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը համապատասխանեցնելով վերջիններիս: Համալսարանի գործունեության շրջանակներում ստեղծել կրթության որակի ապահովման ցուցանիշների բազա և ռազմավարական ծրագրի իրականացմամբ ապահովել այդ ցուցանիշների բարելավումը,
47. Գնահատել որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման նպատակով բուհի տրամադրված մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարությունն ու արդյունավետությունը,
48. Պարբերաբար իրականացնել ՈԱ բաժնի գործունեության արդյունավետության գնահատում, անձնակազմի կարիքների վերհանում, իսկ արդյունքների հիման վրա վերապատրաստումներ և մասնագիտական զարգացման դասընթացներ՝ բաժնի առջև դրված նպատակների ձեռքբերումը երաշխավորելու նպատակով: Քայլեր ձեռնարկել ՈԱ բաժնի անկախությունը ավելացնելու ուղղությամբ,
49. Պարբերաբար գնահատել ՄՈՒՀ-ի տրամադրած ծառայությունների և ՄԿԾ-ների իրականացման արդյունավետությունը,
50. Կանոնակարգել տվյալների կառավարման գործընթացները և հստակեցնել ՄՈՒՀ-ի տարբեր ստորաբաժանումների միջև տեղեկատվության տարածման ու կառավարման մեխանիզմները: Առանձնացնել այնպիսի տեղեկատվության քանակ, գործարկել տեղեկատվության հավաքման այնպիսի մեխանիզմներ, որոնք ձևավորեն անհրաժեշտ հիմքեր որակի ապահովման ներքին և արտաքին գնահատումների համար,
51. Ապահովել ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը բուհի բոլոր գործընթացներում և կառավարման բոլոր մակարդակներում՝ նպաստելով որակի մշակույթի արմատավորմանը:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Գավառի պետական համալսարանի գործունեությունը, ըստ առաքելության, նպատակաուղղված է նաև ՄՈՒՀ-ի միջազգայնացմանը: Հետևապես, միջազգային փորձագետի խնդիրներից է եղել գնահատել, թե ՄՈՒՀ-ը որքանով է իրականացրել միջազգայնացմանը վերաբերող նպատակը և որակի ներքին ապահովման համակարգի ներդրումը՝ բոլոր ինստիտուցիոնալ գործընթացների շարունակական բարելավումը խթանելու համար: Եվրոպական չափանիշները և ուղենիշները (1-ին մաս), փորձագետների՝ այլ երկրներում ձեռք բերած որակի արտաքին ապահովման փորձառությունը, ինչպես նաև ՈԱԱԿ-ի կողմից պահանջվող որակի չափանիշների բավարարման աստիճանը հիմք են հանդիսացել Բոլոնիայի հռչակագրերի իրականացման գործընթացներում ՄՈՒՀ-ի ցուցաբերած առաջխաղացումը գնահատելու համար: Սույն դիտարկումներն ու խորհրդատվությունները ձևակերպվել են ԳՊՀ ինստիտուցիոնալ ինքնավերլուծության զեկույցի, ՄՈՒՀ-ի գործողությունների պլանն ու հնգամյա ռազմավարական ծրագրերը պարունակող փաստաթղթերի (դրանք անգլերեն լեզվով հասանելի են), ինչպես նաև փորձագիտական այցի ընթացքում դուրս բերված փաստերի հիման վրա:

Դիտարկումներ

- Ընդհանուր առմամբ, առկա են մեծ թվով փաստաթղթեր (ավելի քան 60 փաստաթուղթ), որոնք հավաստում են ՄՈՒՀ-ի կազմակերպական և ինստիտուցիոնալ ձևը: Այդուհանդերձ կան գործընթացներ, որոնք կանոնակարգված չեն իրականացվում, կան գործընթացներ, որոնք չափազանց շատ են կանոնակարգված, երբեմն գործընթացներն ու կանոնակարգերը անհամապատասխան են: Պետք է նշել, որ կանոնակարգերի և դրանց իրականացման միջև որոշակի բացթողում կա:
- ԳՊՀ-ն իր գործունեության ռազմավարական պլանավորումն սկսել է **2006թ.-ին «ԳՊՀ զարգացման հնգամյա ծրագիր 2006-2011թթ» փաստաթղթի մշակումով, որը վերանայվել է 2011թ. և 2016թ.-ին՝ վերանվանվելով «ԳՊՀ-ի հնգամյա ռազմավարական ծրագիր (2011-2016թթ.)», «ԳՊՀ զարգացման և բարեփոխման հայեցակարգ (հիմնադրույթներ)» և «ԳՊՀ-ի հնգամյա ռազմավարական ծրագիր (2016-2021թթ.)»**[3]: Ավելին, առկա է 2011-2016 թթ. գործողությունների պլանը: Չնայած գործողությունների պլանին, օրինակ, առաքելության և նպատակների իրականացման համար անհրաժեշտ ուղենիշները բացակայում են:
- Երբեմն հստակ չէ, թե տվյալ նպատակը որ խնդիրների լուծմանն է ուղղված: Ձևակերպված խնդիրները ոչ միշտ են շոշափելի և չափելի: Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանում նշված գործողությունների իրականացման ժամանակացույցը ներկայացված չէ ըստ տարիների, որը հնարավորություն կտար գնահատելու և վերլուծելու նպատակների ու գործողությունների իրականացման ընթացիկ արդյունավետությունը:
- ՄՈՒՀ-ն իր ռազմավարական ծրագիրը մշակելիս կարևորել է ներքին շահակիցների կարծիքները: Նրանց մասնակցությունն ապահովվում է անհատական առաջարկությունների և ինստիտուցիոնալ մակարդակում **վեցամսյա**[4] տարեկան հաշվետվությունների ներկայացման տեսքով: ՄՈՒՀ-ը նաև նպաստավոր պայմաններ է ստեղծում արտաքին շահակիցների ներգրավման համար: Այդուհանդերձ, արտաքին շահակիցների ներգրավման մեխանիզմները շարունակականությունն ապահովելու միտումով հստակ մշակված չեն: Աշխատաշուկայի կարիքների վերլուծություն որպես այդպիսին չի իրականացվում: Այն սահմանափակվում է որոշ դասընթացների բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացմամբ: Ավելին,

[3] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է «….*2011թ-ին*….»:
[4] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է «….*վեցամյա*….»:

արտաքին շահակիցների ներգրավման համակարգային ընդհանուր մոտեցում չկա, և շահակիցների հետ համագործակցության ձևաչափը տարբեր ամբիոններում տարբեր է:

- ԳՊՀ-ում իրականացվում են բակալավրի կրթական աստիճանում 16 կրթական ծրագիր առկա ու հեռակա ուսուցման ձևերով և մագիստրոսի կրթական աստիճանում առկա ուսուցման ձևով՝ 13 կրթական ծրագիր: Չնայած նպատակները, խնդիրները և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները սահմանված են կրթական ծրագրերի նկարագրերում, դրանց հասնելու համար անհրաժեշտ դասավանդման և ուսումնառության տարբերակված մեթոդների հետ կապը բացակայում է: Եվրոպական ուսանողակենտրոն մոտեցումը կիրառման փուլում է գտնվում, սակայն դեռևս ուսանողակենտրոն կրթության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման կարիք կա, ինչի մասին հաճախ նշել են ուսանողները: Չնայած ՄՈՒՀ-ը մշակել է կրեդիտային համակարգով ուսուցման վերաբերյալ կանոնակարգ, սակայն կրեդիտների բաշխման վերաբերյալ հստակ քաղաքականություն առկա չէ:
- ՄՈՒՀ-ը ձգտում է եռաստիճան կրթության աստիճանական իրականացմանը, որն էական նշականություն ունի ԵԲԿՏ-ի լիիրավ անդամ դառնալու համար:
- Առկա է ԳՊՀ-ում ուսուցանվող կրթական ծրագրերի մշտադիտարկման, մշակման բարելավման, հաստատման և իրականացման գործընթացների վերաբերյալ մշակված ընթացակարգ: Սակայն դեռևս առկա է բացթողում բարելավման չափումների և չափումների արդյունքների գնահատման միջև:
- Կրթության և գիտական հետազոտության միջև սերտ կապի ապահովումը պետք է ցանկացած ՄՈՒՀ-ի գլխավոր առանձնահատկություններից մեկը լինի: ԵԲԿՏ-ում գործող ՄՈՒՀ-երն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում արտաքին աղբյուրներից (ներառյալ միջազգային աղբյուրներից) ֆինանսավորվող հետազոտական ծրագրերում: ԳՊՀ-ում ամբիոններն իրենք են ընտրում հետազոտական ուղղություններ, սակայն ծրագրերի տեսքով հստակ ձևակերպված չեն և ամբիոնայի հետազոտությունների ուղղությունները ոչ միշտ են կապակցված ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթությունների հետ: ԳՊՀ-ն իրեն տարածաշրջանային ՄՈՒՀ է համարում, սակայն սահմանված չեն հետազոտական ուղղություններ, որոնք կբխեն տարածաշրջանի հիմնախնդիրներից:
- ԳՊՀ-ում չկա որևէ ստորաբաժանում, որի գործունեությունն ուղղված կլինի ՄՈՒՀ-ի գիտահետազոտական գործունեության կարգավորմանը: Բացակայում է նաև ՄՈՒՀ-ի երիտասարդ դասախոսների գիտահետազոտական գործունեության խթանման վերաբերյալ հստակ մշակված հայեցակարգը:
- ՄՈՒՀ-ն իր առաքելության մեջ արտաքին կապերի հաստատումն ու միջազգայնացումը սահմանել է որպես բարձր առաջնահերթություն ունեցող նպատակ: ԳՊՀ-ն մասնակցում է 22 միջազգային ծրագրերի, ներառյալ 11 ԵՄ ՏԵՄՊՈՒՍ ծրագրերի, և համագործակցում է շուրջ 75 միջազգային կազմակերպությունների հետ: ՄՈՒՀ-ը պլանավորում է մշակել նոր ծրագիր և ներկայացնել այն: Այսուհանդերձ, միջազգայնացմանն ուղղված գործունեության արդյունավետությունը դեռևս ուսումնասիրված չէ: Բացի այդ, ՄՈՒՀ-ում չկա որևէ ստորաբաժանում, որը պատասխանատու կլինի ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգային համագործակցության համար: Ավելին, հետազոտության արդյունքների և կրթության որակի բարելավման միջև ուղղակի փոխկապակցվածություն նույնպես չկա:
- Որակի ներքին ապահովման համակարգի գործադրման առաջընթացն առաջնային կարևորության խնդիր է որակի մշակույթի ներդրումը որպես հռչակված նպատակ իրականացնելու համար: ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման համակարգը գործում է շուրջ 6 տարի: ՄՈՒՀ-ը չունի որակի ներքին ապահովման համակարգի վերանայման հաստատված

քաղաքականություն և ընթացակարգ: Որակի ապահովման ընթացիկ մշտադիտարկման և գնահատման համակարգերը դեռևս պատշաճ կերպով տարածված չեն: Դրանց արդյունավետության վերաբերյալ վերլուծություններ դեռևս առկա չեն: Այդ պատճառով ՊԻԳԲ շրջափուլն ամբողջապես փակված չէ: ՄՈՒՀ-ի տարբեր գործընթացներ դեռևս պլանավորման և իրականացման փուլերում են գտնվում, իսկ գնահատումները մասնակի են իրականացվում, որի արդյունքում բարելավումները վերլուծական հենք չունեն: Չնայած ՄՈՒՀ-ի տարբեր գործընթացներ հաճախ են վերանայվում, փոփոխությունների կատարումը հիմնավորված չէ: Վերանայումը հաճախ հիմնավորված չէ գնահատման արդյունքներով և պայմանավորված չէ ուժեղ ու թույլ կողմերի վերլուծություններով: Դեռևս շատ վաղ է գնահատել որակի մշակույթի ձևավորումը:

Խորհրդատվություն՝

- ՄՈՒՀ-ի երկարաժամկետ ռազմավարությունը և ռազմավարական գործողությունների պլանները պետք է բարելավվեն ռազմավարական կառավարման մասնագիտական պահանջներին համապատասխան և մասնավորապես իրատեսական ու չափելի նպատակներին, ուղենիշներին, խնդիրներին և առաջադրանքներին համահունչ: Միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարության գնահատման համար անհրաժեշտ ընթացակարգի մշակման անհրաժեշտություն կա:
- Խորհուրդ է տրվում կառավարել տարածաշրջանային կողմնորոշման և միջազգայնացման միջև լարվածությունը. **տարածքաշրջանային կողմնորոշումը** պահանջում է կիրառական գիտություններ, տարածաշրջանային պահանջների վերլուծություններ, կողմնորոշվածություն դեպի տարածաշրջանային աշխատաշուկան, ժամանակակից պահանջների բավարարում և մարտահրավերների հաղթահարում, իսկ **միջազգայնացումը** պահանջում է նշանակալի հետազոտություններ, օտար լեզուների իմացություն (գրավոր և բանավոր), բարձր վարկանիշ ունեցող միջազգային հանդեսներում տպագրված աշխատանքներ, եվրոպական կամ անգամ միջազգային աշխատաշուկաներում պահանջվող որակավորումներ, ապագայի մարտահրավերների առերեսում:
- Պետք է մշակվեն ռազմավարական նպատակների իրականացումը գնահատող ցուցանիշներ, և սահմանվեն բարելավման առաջընթացը գնահատող մեխանիզմներ:
- Ռազմավարական նպատակների և ֆինանսական ռեսուրսների պլանավորման, կազմակերպման, իրականացման ու արդյունավետության գնահատման միջև կապը պետք է ավելի լավ սահմանված լինի, որպեսզի բարելավվի հետազոտության, միջազգայնացման և որակի ապահովման համար բաշխվող ռեսուրսների կառավարումը:
- Միջազգայնացման առկա մակարդակը պետք է արտացոլվի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում և դասընթացների ծրագրերում՝ ըստ դրա ռազմավարական կարևորության, որպեսզի միջազգայնացման մակարդակը բարձրանա: Ավելին, խորհուրդ է տրվում հիմնել ստորաբաժանում, որի գործունեությունը միտված կլինի ՄՈՒՀ-ի միջազգայնացմանը և որը կմշակի դրա կառավարման համակարգային մոտեցում:
- Հետազոտական գործունեությունը պետք է ավելի ամրապնդվի պրոֆեսորադասախոսական կազմի, հետազոտողների և ուսանողների օտար լեզվի իմացությունը բարելավելու, ինչպես նաև անգլերեն լեզվով հրատարակություններն ու մագիստրոսական թեզերը խթանելու միջոցով:
- Խորհուրդ է տրվում բարելավել Որակի ապահովման բաժնի աշխատակազմի մասնագիտական հմտությունները: Ավելին, ՈԱ մեխանիզմները և ռազմավարական նպատակները պետք է համապատասխանեցվեն:
- Որակի համակարգային մշակույթի ներդրման համար կարևոր է ՄՈՒՀ-ի բոլոր

աշխատակիցներին, ներքին ու արտաքին շահակիցներին ՈԱ գործընթացներում ներգրավելը, սակայն ուսանողների և արտաքին շահակիցների ներգրավվածության շրջանակը փոքր է: Բացի այդ, ինքնավերլուծության զեկույցի հեղինակները տեղյակ են այդ խնդրին: Խորհուրդ է տրվում ձևավորել և գործադրել խթանող համակարգ, որը թույլ կտա իրագեկել և ՈԱ գործընթացներում ներգրավել շահակիցների մեծամասնությանը:

- Խորհուրդ է տրվում մշակել ռազմավարություններ և բարելավել ՄՈՒՀ-ի կատարողականի ցուցանիշների տեսանելիությունը հասարակության, հատկապես Գեղարքունիքի մարզի հանրության համար:

06 ապրիլի 2017թ.

Անգին Մարտիրոսյան
Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից (տե՛ս կից հավելված 1՝ փորձագետների ինքնակենսագրականները)՝

- **Անգին Մարտիրոսյան՝** Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական վարչության պետ, տեխ.գիտ.թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար,
- **Արկադի Պապոյան՝** Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ավագ դասախոս, կենս.գիտ.թեկնածու,
- **Մհեր Մարկոսյան՝** Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ինֆորմատիկայի, հաշվողական տեխնիկայի և կառավարման համակարգերի ամբիոնի վարիչ, տեխն.գիտ.դոկտոր,
- **Մարգարեթ Բյուլոու Շրամ՝** Համբուրգի համալսարանի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր,
- **Մնացա Մարգսյան՝** Հայաստանի պետական կառավարման ակադեմիայի Իրավաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի մասնագետ, ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման պատասխանատու Անի Մկրտչյանը:

Թարգմանությունը կատարել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Որակի ապահովման կենտրոնի համակարգող Անի Շահինյանը:

Փորձագիտական խմբի աշխատանքները մշտադիտարկել է ՈԱԱԿ-ի տնօրենի օգնական Գայանե Անանյանը:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է համալսարանի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԳՊՀ-ն դիմել է ՈԱԱԿ 12.07.2016՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո (15.07.2016) ՈԱԱԿ-ի, GOVERN ծրագրի համակարգող հաստատության և ՄՈՒՀ-ի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր (23.07.2016): Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Համալսարանի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ՄՈՒՀ-ի ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև քարտուղարությունն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով պատասխանատուների (Ռ.Թոփչյան, Ա. Մակարյան) կողմից իրականացվել են հինգ վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշները և չափորոշիչները,
2. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
3. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
4. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
5. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները և թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[5]: **Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:**

Նախապատրաստական այց

Հաշվի առնելով ՄՈՒՀ-ի հեռավորությունը մայրաքաղաքից՝ որոշում է կայացվել նախապատրաստական այցի խնդիրները լուծել հեռավար եղանակով: 2016թ.-ի նոյեմբերի 21-25-ն ընկած ժամանակահատվածում ԳՊՀ-ի հետ առցանց քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա

[5]ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցերի ժամանակացույց

լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Հստակեցվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակների կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2016թ. դեկտեմբերի 5-ից 8-ը ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այնուհետև փորձագիտական խմբի անդամները քննարկել են գնահատման սանդղակը, որը ներառում է երկու մակարդակ՝ 1) **բավարարում/համապատասխանում է** չափանիշի պահանջներին, 2) **չի բավարարում/չի համապատասխանում** չափանիշի պահանջներին:

Այցին ներկա են գտնվել փորձագիտական խումբը, ՈԱԱԿ-ի համակարգողը, դիտորդը և թարգմանիչը:

Փորձագիտական այցն սկսվել և ավարտվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ ՄՈՒՀ-ի կողմից նախօրոք տրամադրված ցանկից: Ըստ պլանավորվածի իրականացվել են ժամանակացույցով նախատեսված բոլոր հանդիպումները:

Հավատարմագրման գործընթացի համակարգողը պարզաբանել է, որ համաձայն ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկի, փորձագիտական գնահատման օբյեկտիվությունը և հիմնավորվածությունը ապահովելու համար, փորձագիտական խմբի անդամներն իրավասու են պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր և տալ ուսումնասիրվող խնդրի պարզաբանմանը ուղղված հարցեր:

Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[6], ռեսուրսների դիտարկում[7] և հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի եղանակը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը զեկույցի նախնական տարբերակը պատրաստել է համալսարանի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրության և փորձագիտական այցի ընթացքում կատարված դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ:

---

[6] ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[7] ՀԱՎԵԼՎԱԾ 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

Միջազգային փորձագետը պատրաստել է իր եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիք, որոնք թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբի ղեկավարին: Միջազգային փորձագետի կարծիքի և մոտեցումների զեկույցում ներառելու պատասխանատվությունը դրվել է խմբի ղեկավարի և համակարգողի վրա: Գործընկերային գնահատման կարծիքը ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի տեղացի բոլոր անդամների կողմից հավանության արժանացած ամբողջականացված նախնական զեկույցը թարգմանվել և ուղարկվել է միջազգային փորձագետին: Նրա դիտողությունների հիման վրա նախնական զեկույցը վերախմբագրվել է և ներկայացնում է գնահատման հիմնական արդյունքները, դատողությունները և խորհրդատվությունը:

Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 10.02.2017թ.:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանությունները համալսարանն ուղարկել է ՈԱԱԿ 27.02.2017թ.:

Բուհն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն, որը տրամադրվել է տեղացի փորձագետներին, ինչպես նաև թարգմանվել և ուղարկվել է միջազգային փորձագետին: 2017թ. մարտի 15-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի դիտողությունները և մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 06.04.2017թ.: Զեկույցի նախնական տարբերակում խմբի կողմից կատարված փոփոխությունների վերաբերյալ նշումներ են կատարված համապատասխան էջերի տողատակերում:

06 ապրիլի 2017թ.

Անի Մկրտչյան
Համակարգողի ստորագրություն

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ – Գավառի պետական համալսարանը ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որը հիմնադրվել է 1993թ.-ին: Սկզբում համալսարանը մասնագետներ է պատրաստել 6 մասնագիտությունների գծով, այնուհետև ընդլայնել է իր գործունեությունը՝ կազմակերպելով ուսուցում բակալավրի կրթական աստիճանում 16 կրթական ծրագիր, մագիստրոսի կրթական աստիճանում՝ 13: 2016թ.-ից ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ՄՈՒՀ-ին շնորհվել է բարձրագույն կրթության երրորդ աստիճանում «Ը.00.03-Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ կրթություն կազմակերպելու թույլտվություն:

ԳՊՀ-ն իր առաքելությունն է համարում՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզում բնական և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստումը, ուսումնամեթոդական, գիտագետազոտական, դաստիարակչական, սոցիալ-մշակութային գործառույթների, արտաքին համագործակցության ծրագրերի իրականացումը:

Գործատու սուբյեկտի պարտականությունների բարեխիղճ կատարումը, աշխատակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:»

ԳՊՀ-ն իր գործունեությունը իրականացնելիս առաջնորդվել է 2011-2016թթ. Ռազմավարական ծրագրով և դրա իրականացման գործողությունների պլանով: Ինքնավերլուծության և ռազմավարական ծրագրի մեջ սահմանված են ՄՈՒՀ-ի ձգտումներն ու հավակնությունները:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ – ԳՊՀ-ն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր՝ բակալավրի և մագիստրոսի որակավորման աստիճանների շնորհմամբ: Ներկայումս համալսարանի 11 ամբիոններում իրականացվում են հումանիտար, բնագիտական և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով բակալավրի կրթական աստիճանում առկա և հեռակա ուսուցման ձևերով, մագիստրոսի կրթական աստիճանում առկա ուսուցման ձևով:

Իր առաքելության մեջ կրթության ոլորտի վերաբերյալ, ի թիվս այլ կարևորումների, ՄՈՒՀ-ը ընդգծում է՝

- «...բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը,
- աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստումը:»

ԳՊՀ-ն կարևոր է համարում՝

- աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումը,
- ուսուցման ժամանակակից մեթոդների ու տեխնոլոգիաների տեղայնացումը,
- գիտելիքների գնահատման համակարգի շարունակական կատարելագործումը՝ կրեդիտային համակարգի սկզբունքներին և չափումներին համապատասխան,
- ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստող ծառայությունների զարգացումը,
- կրթական միջավայրի արդիականացումը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ – ԳՊՀ-ում ուսումնական գործընթացի և գիտահետազոտական գործունեության կապի ապահովումը կարևորագույն խնդիր է դիտարկվում: Գիտահետազոտական գործունեությունը ձևակերպված է մի քանի նպատակների ներքո.

- գիտության, կրթության և արտադրության ինտեգրում,
- ուսումնական գործընթացում գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման խրախուսում,

սահմանված չեն ակնկալվող արդյունքներն և նրանց գնահատման ցուցիչները: ՌԾ-ի իրականացման գործողությունների պլանում գործողությունների իրականացման ժամանակացույցն ըստ տարիների ներկայացված չէ:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՌԾ-ի մշակման գործընթացում կարևորվել են ներքին շահակիցների նկատառումները: ՄՈՒՀ-ի ներքին շահակիցներն առաջարկությունների տեսքով մասնակցություն են ունեցել ՌԾ-ի մշակման գործընթացում: ՌԾ-ի մշակմանը ԳՊՀ-ի ստորաբաժանումները մասնակցություն են ունեցել իրենց վեցամսյա կամ տարեկան հաշվետվություններով, որոնց արդյունքներն ամփոփվել են ռեկտորի յուրաքանչյուր տարվա հաշվետվության մեջ: Դրանից հետո մշակվել և մեկամյա քննարկումների արդյունքում հաստատվել է նոր ՌԾ-ն:

ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկում արտաքին շահակիցներին ներգրավելու նպատակով, այնուամենայնիվ, վերջիններիս ներգրավվածությունը թույլ է մեխանիզմների բացակայության պատճառով: Նրանց կարիքների վերհանումը ինստիտուցիոնալ բնույթ է կրում պրակտիկաների շրջանակներում իրականացված հետադարձ կապի դեպքում: Արտաքին շահակիցներին ներգրավելու համար աշխատաշուկայի պահանջարկի վերլուծություն որպես այդպիսին չի իրականացվում: Որպես ՄՈՒՀ-ի հետ համագործակցության օրինակ գործատուների կողմից նշվեց դասընթացների վերաբերյալ բարելավման առաջարկությունների մասին, որոնք ընդունվել են համալսարանի կողմից: Չնայած, որ ՄՈՒՀ-ը կարևորում է արտաքին և ներքին շահակիցների կարիքների բավարարումը, սակայն բացակայում են համագործակցության նպատակային ու համակարգված միջոցառումները:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԳՊՀ առաքելությունը և ռազմավարական ոլորտներում ընդգրկված քայլերի իրականացման գնահատումը կատարվում է ռեկտորի տարեկան հաշվետվությունների միջոցով: Լինելով համալսարանի ձեռքբերումների գնահատման միակ մեխանիզմը, տարեկան հաշվետվությունները ուղղակիորեն կապված չեն ՄՈՒՀ-ի որդեգրած ռազմավարական նպատակների հետ և խմբավորված չեն ըստ ՌԾ առանձնացված ոլորտների:

Ռազմավարական ծրագրին զուգահեռ ՄՈՒՀ-ում մշակվել է գործողությունների մշտադիտարկման պլան, որը փաստացի կրկնում է ԳՊՀ ռազմավարական ծրագրում սահմանված գործողությունները նույն ձևակերպումներով: ՌԾ-ի մշտադիտարկման պլանում ներկայացված են գնահատման ցուցիչներ, որոնք հիմնականում քանակական են: Սակայն սահմնված չեն ՌԾ-ի մշտադիտարկման իրականացման, տվյալների հավաքագրման և վերլուծության սկզբունքները, ինչպես նաև ռիսկերի կառավարման մեխանիզմները:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ոլորտում ԳՊՀ-ն ինքնուրույն կառույց է իր առաքելությամբ և ռազմավարությամբ: ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը հիմնականում համահունչ է նրա առաքելությանը: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ համալսարանի 2016-2021թթ.-ի ռազմավարական պլանում ձևակերպված է ՄՈՒՀ-ի առաքելությունը, սակայն վերջինս ընդհանրական է, չի արտացոլում ՄՈՒՀ-ի առանձնահատկությունները, ինչպես նաև իրականացվող կրթական աստիճանների և մասնագիտական ոլորտների տեսանկյունից լրամշակման կարիք ունի: Փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ առաքելության մեջ պետք է կարևորվեն նաև մարզի զարգացման կարիքները, քանի որ վերջինս տարածաշրջանային խնդիրների լուծման կարևորագույն կառույցներից է՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն փաստը, որ ռազմավարական ծրագրում նպատակները, գերակայությունները և խնդիրները որպես այդպիսին ձևակերպված չեն: Հստակ չի երևում, թե համալսարանի գործունեության նպատակի իրականացման համար ինչ խնդիրներ պետք

արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:

ՓԱՍՏԵՐ

2.1. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԳՊՀ-ի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և համալսարանի կանոնադրությանը համապատասխան՝ ինքնավարության միանձնյա և կոլեգիալ ղեկավարման սկզբունքների զուգակցմամբ: Համալսարանում մշակված են կազմակերպական կառուցվածքը և վերջինում նշված մարմինների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթային հենքը: Ստորաբաժանումների կանոնակարգերի, աշխատանքային պայմանագրերի և աշխատակիցների ներկայացված գործառույթների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ստորաբաժանումների աշխատակիցների պարտականությունները և գործառույթները հստակ տարանջատված և սահմանված չեն: Նախատեսվում է մշակել պաշտոնների անձնագրեր:

Ըստ կազմակերպական կառուցվածքի ՄՈՒՀ-ն ունի ուսումնագիտական գծով պրոռեկտոր, իսկ գիտության գործունեությունը կանոնակարգող պատասխանատու կամ կառույց չկա: Կառուցվածքում բացակայում է նաև միջազգայնացման գործընթացներով զբաղվող մարմին. մանսավորապես՝ գործընթացներին առնչվող փաստաթղթաշրջանառությունն ապահովում է որակի բաժնի աշխատակիցը /մինչդեռ վերջինս ՈԱ բաժնի գործառույթներում ներկայացված էր որպես միջազգայանացման որակի ապահովման պատասխանատու/ և ծրագրերի համակարգումն իրականացվում է առանձին պատասխանատուների կողմից: Որակի ապահովման բաժինը Ակադեմիական քաղաքականության վարչության ենթակայության տակ գործող, իսկ վերջինս ուսումնական գծով պրոռեկտորի ենթակայության տակ գործող կառույց է: Խնդիրը գիտակցում է նաև ՄՈՒՀ-ը և նախատեսում է մոտ ժամանակներս լուծում տալ:

ԳՊՀ կառուցվածքի համաձայն արհմիությունը, ՈՒԽ, ՈՒԳԸ, Հասարակության հետ կապերի և լրատվության հետ բաժինը, իրավաբանական կլինիկան, արխիվը, թանգարանը, կադրերի և հատուկ բաժինը, բժշկական ծառայությունը, գրադարանը միաժամանակ գտնվում են ռեկտորի և **ռեկտորատի ենթակայության տակ, իսկ գիտական խորհուրդը՝ ռեկտորի ենթակայության տակ**[9]:

Հստակ տարանջատված չեն ենթակայության և անկախության մակարդակները և պատասխանատվությունները: Ինչպես նաև տարբեր ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերը և փոխգործության շրջանակը սահմանված չեն: Առանձին հեռակա ֆակուլտետի առկայությունը հիմնավորված չէ և վերլուծված չէ, թե ինչու ունենալ առանձին ֆակուլտետ, եթե այն պատրաստում է մասնագետներ նույն մասնագիտություններով /տարբերությունը միայն ուսուցման ձևն է/, որոնք առկա ուսուցման գործընթացներն իրականացվում են համապատասխան ֆակուլտետներում: Համալսարանի կառուցվածքային սխեմայում բացակայում են լաբորատորիաները:

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հիմնականում երաշխավորում է որոշումների կայացման կանոնակարգված գործընթաց: Որոշումների կայացման գործընթացում հիմնական շահակիցները ներգրավված են: Որոշուների կայացման գործընթացի կանոնակարգված կազմակերպման համար մշակված են էթիկայի կանոններ և կարևորվում են դրանց առկայությունը:

Կառավարման համակարգի թափանցիկության, արդյունավետության գնահատման վերլուծական տվյալները բացակայում են:

Կրթական գործընթացը կազմակերպելու և իրականացնելու համար համալսարանը

---

[9] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է «.... ***գտնվում են ռեկտորի և երկու պրոռեկտորի ենթակայության տակ....***»:

տրամադրում է մարդկային և նյութական ռեսուրսներ: Մարդկային ռեսուրսները պլանավորվում են ամբիոնային ծանրաբեռնվածությունների հիման վրա, ֆինանսական ռեսուրսները բյուջեյի միջոցով, իսկ նյութական ռեսուրսների բաշխումը հիմնականում իրականացվում է պահանջագրերի հիման վրա: ՄՈՒՀ-ի նպատակների իրականացման համար առկա մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարության մասին վերլուծություններ չեն իրականացվում:

Համաձայն ներկայացված ԳՊՀ տարեկան բյուջեի՝ ֆինանսական պլանավորումը հստակորեն չի իրականացվում ըստ ռազմավարական ծրագրի գերակա ուղղությունների կամ ռազմավարական նպատակների. ֆինանսական ռեսուրսներն առաջին հերթին հատկացվում են աշխատավարձային ֆոնդին, այնուհետև՝ որոշ մասնաբաժիններով այլ հոդվածներին: Չնայած մշակվել է ԳՊՀ ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմունքներ, որտեղ սահմանված են ֆինանսական կառավարման մեթոդներ: Ֆինանսական կառավարումը ներկայացվում է միայն միջոցների մուտքերով և ելքերով, ինչպես նաև գնումների կազմակերպման գործընթացներով: Մինչ օրս չի իրականացվել մուտքերի արդյունավետության և ելքերի ծախսային արդյունավետության վերլուծություններ:

2.2. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ԳՊՀ խորհրդի, գիտական և ֆակուլտետային խորհուրդների կանոնակարգերն ու կանոնադրությունները դասավանդողներին և ուսանողներին հնարավորություն են տալիս ընդգրկվելու կառավարման տարբեր մարմիններում:

Համալսարանի ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը պաշտպանող մարմին ՈՒԽ-ն ապահովում է ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնելով ուսանողությանն առնչվող հարցեր: Սակայն ուսանողների հանդիպումները ցույց տվեցին, որ նրանց նախաձեռնողականությունը և հետաքրքրությունը կառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացների նկատմամբ թույլ է:

Ի լրումն, համալսարանում գործող ֆորմալ մեխանիզմների, բավական ակտիվ են գործում ոչ ֆորմալ հանդիպումները, որոնք թույլ են տալիս համալսարանի ղեկավարությանը ներկայացնել ՊԴ կազմին և ուսանողությանը հուզող հարցերը ու արձագանք ստանալ:

Կառավարման մարմինների որոշումները շահակիցների համար հասանելի են համալսարանի կայքի փաստաթղթեր բաժնում: Դասախոսների և ուսանողների բավարարվածությունը իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացին ներգրավումից համալսարանը չի ուսումնասիրում:

2.3. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ԳՊՀ-ում առկա է պլանավորման երկու մակարդակ՝ ռազմավարական հնգամյա և կարճաժամկետ պլանավորում (ամբիոնների և ֆակուլտետների տարեկան և կիսամյակային աշխատանքային պլաններ): ԳՊՀ-ում միջնաժամկետ պլանավորում չի իրականացվում:

Ներկայումս համալսարանն առաջնորդվում է ԳՊՀ 2016-2021թթ. հնգամյա ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանով, սակայն վերջինս տրոհված չէ ըստ միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների ծրագրերի: Համալսարանը որպես երկարաժամկետ պլանավորում դիտարկում է նաև Հակակոռուպցիոն ռազմավարական 2016-2021թթ. **ծրագիրը**[10]:

Համալսարանում ՌԾ-ի իրականացման գործողությունների պլանն անցնում է տարեկան մշտադիտարկում: Որպես մշտադիտարկման մեխանիզմ կիրառվում է ԳՊՀ տարեկան գործունեության հաշվետվությունները, որոնք կազմված չեն ըստ ՌԾ նպատակների:

---

[10]Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված փաստաթղթի հիման վրա: Նախկին տարբերակում եղել է ***«.... ծրագիրը, սակայն բացակայում է վերջինիս իրականացման ժամանակացույցերը, պատասխանատուները և իրականացման ցուցիչները:»***:

Ներկայացված կարճաժամկետ պլանների իրականացումը գնահատվում է կիսամյակային հաշվետվություններով:

Թե ինչ չափով է պլանավորման գործընթացը նպաստում համալսարանի առաքելության արդյունավետ իրականացմանը՝ առայժմ չի գնահատվում:

2.4. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ԳՊՀ-ում ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման համար ներկայումս կիրառվող հիմնական մեխանիզմը շահակիցների շրջանում իրականացվող հարցումներն են և օրենսդրական դաշտի ուսումնասիրությունը: Այդուհանդերձ իրականացված հարցումների հուսալիությունը ոչ միշտ է ուսումնասիրված: Բացակայում են աշխատաշուկայի, գործատուների կարիքների և տարածաշրջանի ժողովրդագրական տվյալների վերլուծությունները: ՄՈՒՀ-ի հավանական դիմորդների քանակը պարզելու նպատակով պարբերաբար իրականացվում են այցեր հանրակրթակն դպրոցներ:

Համալսարանում տվյալների հավաքագրման գործընթացը ոչ միշտ է փոխկապակցված ռազմավարական ծրագրերի մշակման կամ վերանայման հետ: Տարբեր գործընթացների վերանայումը հաճախ հիմնված չէ վերլուծական հենքի վրա: Գնահատված չէ տվյալների հավաքագրման գործընթացի արդյունավետությունը:

Արտաքին գործոնների ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրման գործընթացը գերակշռաբար կրում է իրավիճակային բնույթ և կանոնակարգված չէ նախապես մշակված ընթացակարգով:

2.5. Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ԳՊՀ-ում քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը մասամբ է իրականացվում որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով: ՄՈՒՀ-ի հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլում, մասամբ գնահատման, սակայն բարելավման փուլը դեռևս բաց է: ՄՈՒՀ-ում պլանավորում իրականացվել է երկու մակարդակով՝ ռազմավարական հնգամյա և ընթացիկ՝ տարեկան պլանավորումներ: Սակայն դրանք հիմնված չեն կարիքների նախնական վերհանման վրա, իսկ պլանավորման գործընթացի արդյունավետությունը գնահատված չէ: Համալսարանի պլանների և գործընթացների բարելավումներն էլ հիմնականում չեն բխում գնահատման արդյունքներից:

2.6. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ԳՊՀ-ում ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման, ինչպես նաև այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ ներքին շահակիցներից տեղեկատվություն է հավաքագրվում հարցումների միջոցով: Տեղեկատվության հավաքագրման, տարածման և կառավարման ներքին փաստաթղթաշրջանառության համակարգ դեռևս մշակված չէ:

Բացակայում են ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման ու նրանց կարծիքների հաշվառման գործուն մեխանիզմներ:

Որպես տեղեկատվության հավաքագրման մեխանիզմ են դիտարկվում նաև դասալսումները և ամբիոնի վարիչների տարեկան հաշվետվությունները, որոնց արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերում: Սակայն ուսումնասիրությունները փաստեցին, որ ոչ միշտ են դրանք վերլուծվում և արդյունքները նպատակային կիրառվում: Հարցումների անցկացման և տվյալների վերլուծության մեթոդաբանությունը ձևակերպված չէ: Տվյալների հավաքագրման գործընթացի հուսալիության վերաբերյալ վերլուծական տվյալներ նույնպես չկան: Հավաքագրված տվյալների հիման վրա կայացված որոշումների վերաբերյալ վերլուծությունները ևս բացակայում են:

2.7. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Համալսարանի գործունեության հրապարակայնության ապահովվում է հիմնականում պաշտոնական կայքի միջոցով, որտեղ տեղակայվում են նյութեր համալսարանի, ուսումնական և գիտական գործընթացների, որոշ փաստաթղթերի և համագործակցության մասին, ինչպես նաև դիմորդներին տրվող տեղեկատվության ձևով: Բացակայում են ՄԿԾ-ների և կրթական այլ գործընթացների արդյունավետ իրականացման վերաբերյալ որակական և քանակական տվյալները:

Բացակայում են հրապարակումների գնահատման ամրագրված գործիքները և համապատասխան վերլուծությունները, հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականությունը և ընթացակարգերը: Բացակայում են նաև հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները: Համալսարանում կանոնակարգված չէ հրապարակման ենթակա կամ արգելվող, ինչպես նաև ներքին օգտագործման համար (կոնֆիդենցիալ) տեղեկատվության տրամադրումը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի ջանքերը կրթական և այլ գործընթացները արդյունավետ իրականացնելու համար: Այդուհանդերձ ԳՊՀ կառավարման **կառուցվածքն**[11] առավել հստակեցման և հետագա պարզեցման կարիք ունի: Փորձագիտական խումբը դրական է համարում կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթային հենքի առկայությունը, սակայն ստորաբաժանումների աշխատակիցների պարտականությունները և գործառույթները հստակ տարանջատված և սահմանված չեն, որը թույլ կտար գնահատել ստորաբաժանումների աշխատակիցների կատարողականը: Յուրաքանչյուր աշխատակցի հստակ սահմանված գործառությունների առկայությունը հնարավորություն է տալիս բացառել ֆունկցիոնալ գործառույթների կրկնությունը, կենտրոնացնելու ՄՈՒՀ-ի կամ ստորաբաժանման կողմից մատուցվող ծառայությունները՝ բարձրացնելով ծախսերի և մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը:

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը ընդհանուր առմամբ համահունչ է ռազմավարական նպատակներին, սակայն կան խնդիրներ կառուցվածքային ստորաբաժանումների միջև արդյունավետ փոխհամագործակցություն ապահովելու ուղղությամբ: Կառավարման հորիզոնական կապերը հստակ չեն, ինչպես նաև տարանջատված չեն ենթակայությունները, ինչը բացասաբար կարող է անդրադառնալ համալսարանի կառավարման արդյունավետության վրա: Այն հանգամանքը, որ Որակի ապահովման բաժինը Ակադեմիական քաղաքականության վարչության ենթակայության տակ գտնվող, իսկ վերջինս ուսումնական գծով պրոռեկտորի ենթակայության տակ գործող կառույց է, վտանգում է որակի ապահովման գործընթացների անկախությունը: Ռազմավարական գերակայության երկու ոլորտների (գիտահետազոտական գործունեության (ոլորտ 1), արտաքին կապերի և համագործակցության ընդլայնման (ոլորտ 6)) կառավարումով զբաղվող ստորաբաժանման կամ պատասխանատուի բացակայությունը ռիսկային է դարձնում համալսարանի առաքելության լիարժեք արդյունավետ իրականացումը: Դրանց առկայությունը խիստ կարևոր է կրթության և գիտության ինտեգրման, ինչպես նաև ՄՈՒՀ-ում առկա գիտական ներուժի արդյունավետ կառավարման տեսանկյունից:

Խրախուսելի է, որ դասախոսներն ու ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը, սակայն շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետության գնահատման բացակայությունը կարող է հանգեցնել ոչ համապատասխան կոմպետենցիաներով օժտված մարդկանց ներգրավմանը՝ վտանգելով կայացված որոշումների նկատմամբ վստահությունը: Իսկ արտաքին շահակիցների սահմանափակ ներգրավվածությունը կարող է հանգեցնել արտաքին պահանջների և զարգացումների վերաբերյալ իրազեկության

[11]Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է ***«.... համակարգն»***:

նվազմանը:

Համալսարանի մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարության և արդյունավետության վերաբերյալ վերլուծությունների բացակայության պայմաններում կառավարման համակարգի արդյունավետությունը այդ ոլորտում հնարավոր չէ գնահատել: Ուստի, ԳՊՀ կառավարման համակարգի հետագա հստակեցումն ու պարզեցումը, ինչպես նաև վարչական կառույցների և դրանց գործունեության արդյունավետության, գործընթացների վրա ազդող գործոնների ուսումնասիրության և տվյալների հավաքագրման ընթացակարգերի ու գնահատման մեխանիզմների մշակումը հնարավորություն կտա բարձրացնելու համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների իրազեկվածության աստիճանը և ապահովելու հավաստի տվյալների հիման վրա որոշումներ կայացումը:

Ներկայումս ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման համար կիրառվող հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնց անցկացման նպատակայնությունը, պարբերականությունը, մեթոդաբանությունը, ինչպես նաև հարցվածների ներկայացուցչականության շրջանակը թույլ չեն տալիս հարցումները համարել որպես ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման արդյունավետ գործիք: Առհասարակ, ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող տարբեր գործընթացների գնահատումների և մշտադիտարկման մեխանիզմների ոչ լիարժեքությունը ռիսկի տակ է դնում կառավարման համակարգի արդյունավետությունը:

ԳՊՀ-ի ՌԾ-ն դիտվում է որպես երկարաժամկետ պլան, սակայն բացակայում է վերջինիս տրոհումն ըստ միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների ծրագրերի: Դրանց առկայությունը հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել բոլոր գործընթացները, ապահովել դրանց մշտադիտարկումը, ինչպես նաև ռեսուրսների հստակ կառավարումը՝ յուրաքանչյուր փուլի համար ձեռքբերելով հստակ և չափելի ցուցանիշներ: Ուստի և համալսարանում միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների ծրագրերի տարանջատումն ու հետևողական իրականացումը, ինչպես նաև մշտադիտարկման հստակ մեխանիզմների ու գործիքակազմի մշակումը հնարավորություն կտան ամրապնդել համալսարանի առաքելության և նպատակների կապը, նվազեցնել արտաքին գործոնների ազդեցության հետ կապված ՄՈՒՀ-ի ռիսկերը, հստակեցնել համալսարանի շահակիցների ակնկալիքները:

ԳՊՀ ամբողջ վարչարարությունը չի իրականացվում որակի կառավարման սկզբունքով (ՊԻԳԲ): Կիրառվում են որակի կառավարման շրջափուլի տարրերը, սակայն տարբեր չափով: Մասնավորապես, ՄՈՒՀ-ում գործընթացները հիմնականում գտնվում են պլանավորման և իրականացման փուլում, մասամբ իրականացվում են գնահատումներ առանց վերլուծությունների, մինչդեռ բարելավումները հատվածական բնույթ են կրում: Պարբերական և համակարգված բնույթ կրող հետադարձ կապի մեխանիզմների և պարբերական գնահատումների բացակայությունը համալսարանի թույլ կողմերից է:

ՄԿԾ-երի ու իրականացվող գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառումը համակարգող, ինչպես նաև գնահատող մեխանիզմների մշակումը կնպաստի մասնագիտական կրթության արդյունավետության հետագա բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը:

ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմների բացակայությունը վկայում է համալսարանում որակի վերահսկման գործընթացի անկատարության մասին, քանի որ համալսարանի կողմից խնդիր չի դրվում գնահատելու դրանց արդյունավետությունը: Մինչդեռ համալսարանն ինքը պետք է շահագրգռված լինի այդ գործընթացի կազմակերպման գործում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ համալսարանն ունի ռազմավարական նպատակներին հիմնականում համապատասխանող կազմակերպական կառուցվածք, ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթային հենք, գործող կարգերը հնարավորություն են տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը,

քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը մասամբ իրականացվում է որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է 2-րդ չափանիշի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 2-ի պահանջներին ***գնահատում է բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

3.1. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԳՊՀ-ում իրականացվում է հումանիտար, բնական և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով բակալավրի կրթական աստիճանում 16 կրթական ծրագրիր առկա և հեռակա ուսուցման ձևերով, մագիստրոսի կրթական աստիճանում առկա ուսուցման ձևով՝ 13: Այդուհանդերձ առաքելության մեջ շեշտադրվում են միայն բնական և հասարակական գիտությունների ուղղություններով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերը:

Համալսարանի կրթական գործընթացը կառուցված է՝ հիմքում ունենալով պետական կրթական չափորոշիչները, որոնց հիման վրա էլ ձևավորված են ՄԿԾ-ների բաղադրիչներից մասնագիտությունների նկարագրերը, ուսումնական պլանները և դասընթացների ծրագրերը: ԳՊՀ-ում իրականացվող կրթական ծրագրերի համար մշակված են ՄԿԾ-ների փաթեթներ կրեդիտային համակարգով ուսումնառության կազմակերպման ուղեցույցերի և դասընթացների տեղեկագրքերի տեսքով, ինչպես նաև կրթական ծրագրերի հայեցակարգեր:

Ուսումնասիրված ՄԿԾ-ների նկարագրերում սահմանված են նպատակներն ու խնդիրները, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, որոշ ՄԿԾ-ներում բացակայում են դրանց հասնելու համար տարբերակված դասավանդման և ուսումնառության մեթոդները: Չնակերպված են ԳՊՀ-ում գնահատման ընդհանուր մոտեցումներ, սակայն բացակայում են դրանց վրա հիմնված առանձին դասընթացների գնահատման մոտեցումներն ու սկզբունքները: Բացակայում է նաև ՄԿԾ-ների վերջնարդյունքների քարտեզագրումը՝ որակավորումների ազգային շրջանակին համապատասխանությունը ցույց տալու կամ հավաստելու նպատակով:

Դասընթացների ծրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մշակված են ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, առկա է ՄԿԾ-ների վերջնարդյունքների և դասընթացների քարտեզագրում: Չեն կիրառվում օրացուցային պլաններ: Դասընթացների նկարագրերում ներկայացված են նպատակը, բաշխվածությունն ըստ թեմաների, սակայն բացակայում են գնահատման մեթոդները, դասընթացների մուտքային պահանջները, որոնց առկայությունը պայմանավորում է նաև վերջնարդյունքների ձևավորման համար անհրաժեշտ նախապայմանները: Առկա և հեռակա ուսուցման ձևերի համար միևնույն դասընթացների ծրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք տարբերվում են իրարից. մատուցվող նյութն առկա ուսուցման ձևով սովորողների համար ներկայացված է, օրինակ, 12 թեմայով, մինչդեռ հեռակայում՝ 6 թեմայով: Հստակ ներկայացված չեն արտալսարանային ժամերի շրջանակում ուսուցանվող մյուս 6 թեմաները և դրանց լրացման սկզբունքները: Մինչդեռ հեռակա ուսուցման ձևը, առկա ուսուցման ձևից տարբերվում է լսարանային և արտալսարանային ժամերի բաշխվածությամբ: Ուսումնառության առկա և հեռակա ձևերում սովորողների համար դասավանդման և ուսումնառության և գնահատման մեթոդները նույնն են: Նույն դասընթացի համար հատկացվող

կրեդիտներն առկայում և հեռակայում նույնպես տարբեր են, հեռակայում նախատեսվում է կուրսային աշխատանք, առկայում՝ ոչ: Ֆակուլտետներում դասընթացների ծրագրերի ներկայացման ձևաչափերը տարբեր է (նույնիսկ նույն ամբիոնում տարբեր դասընթացների ծրագրեր տարբեր կերպ են մշակված. օր.՝ որոշ դեպքերում հեռական և առկան միասին են դիտակված, որոշ դեպքերում առանձին և այլն), համապատասխանաբար դասընթացների ծրագրերի մշակմանը ներկայացվող հստակ համահամալսարանական պահանջները բացակայում են: Որոշ դասընթացների ծրագրերում առկա է ուսումնական պլանների հետ անհամապատասխանություններ, մասնավորապես կրեդիտների հատկացման առումով:

Ուսումնական պլաններում առկա են կամընտրական դասընթացներ, սակայն ուսանողների իրազեկվածությունը կամընտրական դասընթացների մասին ցածր էր: Հանդիպումներին մասնակցած ուսանողները փաստացի չէին ընտրել որևէ դասընթաց, ինչպես նաև նշվեց, որ կամընտրական դասընթացների կազմակերպումն իրականացվում է ուսանողների քանակին համապատասխան:

3.2. ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Ուսումնասիրված ոչ բոլոր ՄԿԾ-ների նկարագրերում են առկա ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու համար տարբերակված դասավանդման և ուսումնառության մեթոդները: Դասընթացների ծրագրերում ևս հստակ նկարագրված չեն դասավանդան և ուսումնառության մեթոդները: Ավելին, բացակայում է վերջնարդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդների և գնահատման մեթոդների քարտեզագրումը: Դասընթացների ծրագրում կրեդիտներն արտահայտված են միայն լսարանային բաղադրիչով, անդրադարձ չկա արտալսարանային ժամերին:

Չնայած ՄԿԾ-ների մի մասում նկարագրված են հետևյալ մեթոդները՝ դասախոսություններ, գործնական պարապմունքներ, սեմինարներ, քննարկումներ, զրույցներ, անհատական և ինքնուրույն աշխատանքներ, որոնց կիրառությունը հաստատեցին նաև փորձագիտական խմբի կողմից իրականացված դասալսումները, այդուհանդերձ դասախոսների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ բացակայում է ըստ դասընթացների վերջնարդյունքների մեթոդների ընտրության հստակ մոտեցումը:

ԳՊՀ-ն կարևորում է անցումը նախկին՝ դասական դասախոսակենտրոն մոտեցումից դեպի ուսանողակենտրոն ուսուցման մոտեցմանը: Այդուհանդերձ անցումը դեռևս հստակ և ամբողջական չէ: Ուսանողների հետ հանդիպումները փաստեցին, որ ուսանողների շրջանում դեռևս ուսանողակենտրոն ուսուցման գիտակցման բարձրացման անհրաժեշտություն կա, քանի որ վերջիններիս պատկերացումն ու ընկալումը նոր մոտեցման մասին հստակ ձևավորված չէ:

ԳՊՀ-ում մշակված է ուսուցման մեթոդների գնահատման և բարելավման ընթացակարգ, սակայն կիրառվող մեթոդների արդյունավետության վերլուծություններ չներկայացվեցին:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման գործընթացներում ուսանողները ոչ ֆորմալ կերպով (որոշ դեպքերում անմիջապես դասախոսին դիմելով) ունեն որոշակի մասնակցություն:

3.3. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ԳՊՀ-ում ուսանողների գնահատումն իրականացվում է «ԳՊՀ-ի առկա ուսուցման համակարգում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ»-ի, «ԳՊՀ-ի հեռակա ուսուցման համակարգում բակալավրի կրթական աստիճանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ»-ի և կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցերի և դասընթացների տեղեկագրքերի համաձայն: Ստուգարքով ավարտվող դասընթացների

գնահատման հիմքում ընկած են դասընթացին մասնակցության, ընթացիկ ակտիվության, անհատական աշխատանքի և վերջնական ստուգման գործոնները, իսկ քննության դեպքում՝ դասընթացին մասնակցության, ընթացիկ ակտիվության, անհատական աշխատանքի, երկու միջանկյալ քննությունների և վերջնական քննության գործոնները: Ուսանողի ամփոփիչ գնահատումը կատարվում է 100 միավորանոց սանդղակով՝ բանավոր, գրավոր ձևով կամ համակարգչային թեստավորման միջոցով: Սակայն դասընթացների մակարդակում բացակայում են գնահատման հստակ չափանիշները (ռուբրիկները) կախված ելքային արդյունքներից: Հիմնավորված չեն նաև գնահատման մեթոդների և դասավանդման ու ուսումնառության մեթոդների միջև կապի առկայությունը: Գնահատման համակարգը հիմնականում միտված է ուսանողների մոտ տեսական գիտելիքի գնահատմանը:

ՄՈՒՀ-ում չնայած մշակված է կրեդիտային համակարգով ուսուցման կարգ, այդուհանդերձ կրեդիտների բաշխման հստակ քաղաքականությունը բացակայում է: Այդ մասին են փաստում նաև ուսումնական պլանների և դասընթացների ծրագրերի ուսումնասիրությունը. օրինակ՝ տարբեր դասընթացներին հատկացված են նույն կրեդիտները, սակայն առանց լսարանային և արտալսարանային ժամերի բաշխման հիմնավորման, և ինչ սկզբունքից ելնելով են որոշում, թե որ դասընթացին քանի կրեդիտ պետք է հատկացվի:

ԳՊՀ-ում մշակվել և ներդրվել են ուսանողների բողոքների քննարկման կարգ և ակադեմիական ազնվության հայեցակարգ:

Համալսարանում մշակված է մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների կատարման կանոնակարգ, որտեղ հիմնականում նկարագրված են ավարտական աշխատանքների և թեզերի մշակմանը ներկայացվող տեխնիկական պահանջներ. Բովանդակային բաղադրիչները՝ նորարարական, հետազոտական և ստեղծագործական բաղադրիչները շեշտադրված չեն: Համապատասխան գնահատման պահանջները համահունչ չեն պատրաստմանը ներկայացվող պահանջներին: Այդ մասին են վկայում ուսումնասիրված թեզերը. մասնավորապես առկա են թեզեր, որոնք կատարված էին բարձր մակարդակով, իսկ որոշներն էլ իրականացված են շատ մակերեսային: Թեզերում և ավարտական աշխատանքներում հիմնականում օգտագործված են հայալեզու գրականություն, որոշ դեպքերում նույն հեղինակի տարբեր աշխատություններ և բավական սակավաթիվ: Չնայած ՄՈՒՀ-ում մշակվել է ակադեմիական ազնվության հայեցակարգ, այդուհանդերձ աշխատանքներում հղումները բացակայում էին: Առկա էին աշխատանքներ, որոնց գրախոսության շեշտադրումները ու ստացած գնահատականը չէի համապատասխանում: Ուսումնասիրվածների թվում կային աշխատանքներ, որոնց վերաբերյալ մի քանի կետով գրախոսը հիմանավորում է աշխատանքի բավական լուրջ թերությունները, սակայն վերջում երաշխավորում է բարձր գնահատական:

3.4. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

ՄՈՒՀ-ն ունի բենչմարքինգի կանոնակարգ, սակայն որպես բենչմարքինգի հիմքեր ներկայացվեցին ՀՀ և ռուսական մի քանի ՄՈՒՀ-երի ուսումնական պլաններ: Դրանց համեմատական վերլուծությունները չներկայացվեցին: Հստակ չէ, թե ինչ մեթոդաբանություն է կիրառվել, ինչ բաղադրիչներ են փոխառվել: Չի հիմնավորվում, թե ինչու են հենց այդ ՄՈՒՀ-երը ընտրվել: Իսկ բենչմարքինգի օբյեկտ ընտրելիս այդ ՄՈՒՀ-ի խնդիրներն ու մարտահրավերները չեն ուսումնասիրվել: Որպես բենչմարքինգի հիմք ազգային մակարդակով ներկայացվեցին ՀՊՃՀ-ի ուսումնական պլանները:

Միջազգայնացման գործիք է դիտարկվում ECTS համակարգը և համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելվածը: Ուսանողների շարժունությունը կանոնակարգվում է բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգով: Ազգային մակարդակով և ՄՈՒՀ-ի ներսում շարժունության հնարավորություն ընձեռված է: Միջազգային ծրագրերի շրջանակներում ընձեռվում է նաև ուսանողների և դասախոսներին շարժունության հնարավորություն:

Հարկ է նշել, որ **բացի «ռուսաց լեզու և գրականություն» և «օտար լեզու և գրականություն» ՄԿԾ-ներից,**[12] օտար լեզվով դասավանդվող ՄԿԾ-ներ չկան: Սակայն ներգնա շարժունություն ապահովելու նպատակով մշակվել են օտարալեզու դասընթացներ:

3.5. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԳՊՀ-ում մշակված է ՄԿԾ-ների մշակման, հաստատման, իրականացման ընթացքի մշտադիտարկման և բարելավման ընթացակարգ: Վերանայումները հիմնականում իրականացվում են դասընթացի մակարդակով: ՄԿԾ-ի վերանայման պարբերականության վերաբերյալ հիմքեր չեն ներկայացվել: Բացակայում են նաև ՄԿԾ-ների վերանայման հիմնավորումները, վերանայման անհրաժեշտությունը կոնկրետ ժամանակահատվածում (օրինակ՝ հիմք ընդունելով միջազգային համագործակցության արդյունքում ձեռքբերված փորձը և այլն):

ՄԿԾ-ների բարելավման գործընթացում ոչ ֆորմալ կերպով (առանց հստակ ընթացակարգի և ժամանակացույցի) ներգրավված են գործատուներ, շրջանավարտների շրջանում իրականացվում են հարցումներ: Արտաքին շահակիցների ներգրավման համահամալսարանական մոտեցում առկա չէ՝ ամբիոնից ամբիոն շահակիցների հետ աշխատանքի ձևաչափը տարբերվում է: **Գործընթացը համակարգված չի իրականացվում**[13]**:** Գործատուները հանդես են գալիս նաև դասընթացների ներդրման առաջարկություններով: Իսկ ուսանողների գիտելիքների և հմտությունների վերաբերյալ արձագանքում են պրակտիկայի ավարտին ներկայացվող հարցաթերթիկի միջոցով: Հարկ է նշել, որ արտաքին և ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմների բարելավման, համապատասխանաբար գործընթացի՝ համակարգային իրականացման անհրաժեշտություն կա:

Ուսանողները բարելավման գործընթացում ներգրավված են դասընթացի վերաբերյալ հարցումների, իսկ դասախոսներն՝ ամբիոնի մակարդակով քննարկումների միջոցով:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համալսարանի կրթական գործունեությունը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է հաստատության կողմից սահմանված առաքելությանը: Ըստ շնորհվող որակավորումների կրթական ծրագրերի համար մշակվել են ակնկալվող ուսումնառության արդյունքները, մինչդեռ վերջիններիս ՈԱՇ-ի հետ քարտեզագրման, և համապատասխանության վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չի տալիս գնահատել ՈԱՇ-ի հետ համապատասխանությունը: ԳՊՀ-ում ՄԿԾ-ները հիմնականում մշակված են հիմքում ունենալով պետական կրթական չափորոշիչները, որոնք, մինչդեռ, մշակվել են տարիներ առաջ և ոչ միշտ են արտացոլում աշխատաշուկայի պահանջներն ու կրթական վերջին միտումները: ՄՈՒՀ-ը սկսել է կրթական գործընթացը իրականացնել վերջնարդյունքահեն մոտեցմամբ, այնուամենայնիվ ՄԿԾ-ներում նկարագրված վերջնարդյունքները ոչ միշտ են չափելի: Ինչպես նաև ՄՈՒՀ-ի կողմից դեռևս չի գնահատվել՝ որքանով է ուսուցումը միտված ՄԿԾ-ի վերջնարդյունքներով սահմանված հմտությունների և կարողությունների ձևավորմանը: Առավել մտահոգիչ է առկա և հեռակա ուսուցման ձևերով իրականացվող նույն ՄԿԾ-ի ուսումնական պլաններում և դասընթացների ծրագրերում տարբերությունները (կրեդիտների հատկացումներ, դասընթացում նախատեսված նյութ և այլն): Փորձագիտական խումբը հրատապ է համարում դասընթացների ծրագրերի վերանայումը՝ միտված հեռակա ուսուցման ձևով իրականացվող դասընթացների բովանդակությունը դասընթացի և ՄԿԾ-ի վերջնարդյունքներին համապատասխանեցնելուն, դասընթացների ծրագրերի կառուցվածքային տարբերությունները շտկելուն:

Փորձագիտական այցի ընթացքում տարբեր քննարկումները, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրությունը հիմք է տալիս փաստելու, որ ՄՈՒՀ-ում կրեդիտների բաշխման և հաշվարկի

---

[12] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է «***Հարկ է նշել, որ օտար լեզվով դասավանդվող ՄԿԾ-ներ չկան***»:

[13] Փոփոխվել է համալսարանի և փորձագետների միջև քննարկման արդյունքում Նախկին տարբերակում չի եղել:

համընդհանուր մոտեցումը բացակայում է, համապատասխանաբար սահմանափակելով ուսանողների շարժունության հնարավորությունները: Փորձագիտական խումբը գտնում է, որ ըստ էության կամընտրական դասընթացների գաղափարը ևս հստակ չի գործում:

ՄՈՒՀ-ը կարևորում է ուսանողակենտրոն ուսումնառության միջավայրի ստեղծումը, այդուհանդերձ անցումը դեռևս ամբողջական չէ: Դասալսումները ցույց տվեցին, **որ չնայած ՄՈՒՀ-ում կազմակերպվում է ինտերակտիվ ուսուցում, սակայն ուսումնառության վերջնարդյունքների հետ փոխկապակցված դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը համընդհանուր մոտեցման բացակայությունը, կարող է նվազեցնել ուսանողների և դասախոսների դերակատարումը ուսանողակենտրոն ուսումնառության միջավայր ձևավորելու գործընթացում**[14]: Ուսանողակենտրոն ուսուցման տեսակետից, ըստ ուսումնառության արդյունքների, դասավանդման մեթոդների ընտրության քաղաքականության ներդնումը նոր պահանջներ կներկայացնի դասախոսներին, որոնք պետք է ներառվեն նրանց ընտրության կարգում և դասախոսների վերապատրաստման փաթեթներում: Ուսանողակենտրոն ուսումնառության ամբողջական ներդրումը կնպաստի նաև ուսանողների ինքնուրույն սովորելուն՝ զարգացնելով շարունակական կրթության հմտություններ: Այն հանգամանքը, որ դասավանդման և ուսումնառության մեթոդների միտվածությունը վերջնարդյունքների ձեռքբերմանը հստակ չէ, իսկ կապը գնահատման մեթոդների հետ տեսանելի չէ, կարող է հանգեցնել կրթական գործընթացի ոչ նպատակային իրականացմանը:

ԳՊՀ-ում գործող ուսանողների գնահատման քաղաքականությունը բավարար չափով միտված չէ վերջնարդյունքների գնահատմանը: ՄԿԾ-ներում և դասընթացների ծրագրերում բերված գնահատման մեթոդների փոխկապակցվածությունը դասավանդման և ուսումնառության մեթոդների և վերջնարդյունքների հետ թույլ է: Կապված այն փաստի հետ, որ ՄՈՒՀ-ում դեռևս առկա է տեսական գիտելիքների մատուցման գերակայություն, գնահատման մեթոդները ևս կենտրոնացած են տեսական գիտելիքների մակարդակի ստուգման վրա: Այն հանգամանքը, որ դասընթացի մակարդակում գնահատման մեթոդների, դասավանդման և ուսումնառության մեթոդների և վերջնարդյունքների փոխկապակցվածությունը թույլ է, ռիսկի տակ է դնում ՄԿԾ-ով սահմանված վերջնարդյունքների ձեռքբերումը: Գնահատման համակարգի բաղադրիչներն ու կշիռները ընդհանուր են բոլոր դասընթացների համար, ինչը թույլ չի տալիս հաշվի առնել դասընթացների առանձնահատկությունները:

Ավարտական թեզերին ներկայացվող պահանջներն ըստ էության վերաբերում են ուսանողի ընթացիկ աշխատանքի կազմակերպմանն ու թեզերի կազմման տեխնիկական պահանջներին: Թեզերի բովանդակային պահանջների և գնահատման սանդղակի փոխկապակցվածության և հստակության պակասը վկայում է, որ վերջիններին ՄՈՒՀ-ում բավարար ուշադրություն չի դարձվում: Իսկ բովանդակային ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ գնահատման չափանիշները բավարար չափով միտված չեն գնահատելու կրթական ծրագրի կամ որակավորման շնորհման համար անհրաժեշտ ելքային արդյունքները:

Չնայած ՄՈՒՀ-ը իրականացրել է համեմատություններ ՀՊՃՀ համապատասխան ՄԿԾ-ների հետ, այդուհանդերձ համահունչության վերաբերյալ վերլուծություններ փորձագիտական խմբին չներկայացվեցին: Միջազգային բենչմարքինգ հաստատության կողմից չի իրականացվել, այն նաև չի դիտարկվում որպես ՄԿԾ-ների արդիականացման մեխանիզմ: Իրականացվող ծրագրերի բենչմարքինգը/համեմատական վերլուծությունը թույլ կտա համալսարանին ավելի հստակ գիտակցել իր ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություն կտա ունենալ ժամանակակից և ճկուն ծրագրեր, ապահովել շահեկան դիրք կրթական ծառայությունների դաշտում և նպաստել

---

[14] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է « *Դասալսումները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում կազմակերպվում է ինտերակտիվ ուսուցում, սակայն դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը ԳՊՀ-ում դեռ համակարգված չէ՝ պայմանավորված դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության համընդհանուր մոտեցման բացակայությամբ, որը, ցավոք, նվազեցնում է ուսանողների և դասախոսների դերակատարումը ուսանողակենտրոն ուսումնառության միջավայր ստեղծելու գործընթացում*»:

ուսանողների և դասախոսների շարժունությանն ու համալսարանի միջազգայնացմանը: Թեև օտար լեզվով դասավանդվող ՄԿԾ-ներ չկան, սակայն ներգնա շարժունություն ապահովելու նպատակով մշակվել են օտարալեզու դասընթացներ: Այս տեսանկյունից համալսարանի ռազմավարական մոտեցման հստակեցման անհրաժեշտություն է առաջանում, քանի որ վերջինս պայմանավորում է հետագա զարգացման կամ բարելավման հնարավորությունները:

Չնայած ՄՈՒՀ-ը կարևորում է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումը, աշխատաշուկայի վերլուծություններ դեռևս չի իրականացրել: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում արտաքին շահակիցների ոչ ակտիվ ներգրավվածությունը կրթական ծրագրերի մշակման և գնահատման գործընթացում, որը վտանգում է ՄՈՒՀ-ի առջև դրած նպատակների արդյունավետ իրականացումը: Համալսարանն ընդունում է, որ աշխատաշուկայի պահանջների ոչ պատշաճ արտացոլումը ՄԿԾ-ներում իր թույլ կողմերից է: Արտաքին և ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմները բարելավման անհրաժեշտություն ունեն: Ինչպես նաև փորձագիտական խումբը ՄԿԾ-ների պարբերաբար մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման համակարգային մոտեցման անհրաժեշտություն է տեսնում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, ԳՊՀ-ը սկսել է կրթական գործընթացը իրականացնել վերջնարդյունքահեն մոտեցմամբ, ըստ շնորհվող որակավորումների կրթական ծրագրերի համար ձևակերպել է ակնկալվող ուսումնառության արդյունքները, մշակել է ՄԿԾ-ների տեղեկագրեր, ՄՈՒՀ-ում կազմակերպվում է ինտերակտիվ ուսուցում, կարևորվում է ակադեմիական ազնվության պահպանումը, մասամբ իրականացվում է ՄԿԾ-ների մշտադիտարկում և արդյունավետության գնահատում փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 3-ի պահանջներին ***գնահատում է բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ՓԱՍՏԵՐ

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Մասնագիտական կողմնորոշման, ՄՈՒՀ-ի մասնագիտություններին ծանոթացնելու, ինչպես նաև դիմորդների ներգրավման նպատակով ԳՊՀ-ն իրականացնում է տարբեր միջոցառումներ՝ պարբերաբար այցելություններ տարածաշրջանի հանրակրթական ուսումնական հաստատություններ, մասնագիտությունների և դրանց ուսուցման ձևերի մասին հանրությանը իրազեկում տարբեր միջոցներով, մասնավորապես՝ մարզային ԶԼՄ-ներ, պաշտոնական կայքէջ, «բաց դռների» օր, բաց դասախոսություն: Սակայն իրականացված միջոցառումների արդյունավետության, ինչպես նաև դրանց ազդեցության գնահատման մեխանիզմները և համապատասխան վերլուծությունները բացակայում են:

Ուսանողների հավաքագրումը, ընտրությունն ու ընդունելությունն իրականացվում են օրենքով սահմանված՝ ՄՈՒՀ-երի ընդունելության համապատասխան կարգերով: Համալսարանում բակալավրիատի առկա ուսուցման համակարգում ուսանողների ընդունելությունն իրականացվում է միասնական քննությունների արդյունքների հիման վրա: Հեռակա ուսուցման և

մագիստրատուրայի համակարգերում ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված կանոնակարգերին համապատասխան:

Մագիստրատուրայի ուսուցման համակարգում ընդունելության համար հիմք է հանդիսանում նաև ԳՊՀ-ի ներքին կանոնակարգը: ԳՊՀ-ում մագիստրատուրայի իրականացվող ընդունելությունը կատարվում է հարցազրույցի հիման վրա ընդունող և քննական առարկայական հանձնաժողովների կողմից:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Համալսարանում առկա է «ԳՊՀ-ում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման» կանոնակարգ, համաձայն որի յուրաքանչյուր կիսամյակի վերջում իրականցվում է դասընթացի/դասախոսի գնահատում, ուսանողների բավարարվածության հարցում կրթական ծրագրերի իրականացման ընթացքից: Ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով համալսարանում կիրառվում են «վստահության արկղիկ», «թեժ գիծ» գործիքները: Իրականացվում են ինչպես գրավոր հարցումներ, այնպես էլ ոչ ֆորմալ բնույթ կրող տարբեր հանդիպումներ: Ուսանողների կարիքների վերհանումը մասամբ իրականացվում է նաև ուսանողական խորհրդի միջոցով: Այդուհանդերձ ուսանողների կարիքների վերհանման հստակ մշակված քաղաքականությունը բացակայում է:

Ուսանողների հետ հանդիպումները փաստեցին, որ նրանց կարիքների վերհանման արդյունքում առանձին դեպքերում կատարվել են բարելավումներ ներդնելով որոշ դասընթացներ, մասնավորապես՝ օտար լեզվի, համակարգչային հմտությունների, կերպարվեստի, դեկորատիվ և կիրառական դիզայնի հիմունքների և այլն: Ուսանողների արձագանքների հիման վրա դասախոսներ են փոխարինվել, կամ հեռացվել: Այնուամենայնիվ, ուսանողների կարիքների վերհանման գործող մեխանիզմների արդյունավետությունը դեռևս չի գնահատվել:

Առկա և հեռակա ուսանողների հետ տարվող աշխատանքի զգալի տարբերություն է զգացվում: Հեռակայի ուսանողներն ավելի պակաս տեղեկացված են ՄՈՒՀ-ում իրականացվող տարբեր գործընթացներից: Համապատասխանաբար կարիքների վերհանումն ավելի շեշտադրված է առկա համակարգում: Խնդիրների բարձրացումը հեռակայի մակարդակով հիմնականում իրականացվում է ուսանողների անհատական նախաձեռնությամբ:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Ուսանողների արդյունավետ ուսումնառությունը խթանելու նպատակով համալսարանը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ: Լրացուցիչ պարապմունքներն ու խորհրդատվությունը հիմնականում կազմակերպվում են քննաշրջանի նախաշեմին, ամփոփիչ ատեստավորման և անհատական, կուրսային աշխատանքների կատարման ընթացքում: Համալսարանի տարբեր կուրսերում և տարբեր դասընթացներից նախորդ քննաշրջանի արդյունքներով ակադեմիական ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների համար ըստ անհրաժեշտության իրականացվում են նաև ընթացիկ լրացուցիչ պարապմունքներ շաբաթը կամ երկու շաբաթը մեկ անգամ: Այդ պարապմունքները իրականացվում են ըստ նախապես սահմանված ժամանակացույցերի: Յուրաքանչյուր ամբիոնի լաբորանտը հանդիսանում է նաև տվյալ մասնագիտության գծով սովորող ուսանողների հետ տարվող աշխատանքների խորհրդատու: Հավելյալ խորհրդատվական աշխատանքները ուսանողների հետ իրականացվում է նաև համացանցի օգնությամբ՝ հեռավար կերպով: Այնուհանդերձ տրամադրված խորհրդատվական աշխատանքների արդյունավետությունն ուսումնասիրված չէ:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

ԳՊՀ-ում գործում են վարչական կազմին դիմելու բազմաթիվ միջոցներ՝ անմիջական դիմումների, էլեկտրոնային փոստի, միջնորդավորված՝ կուրսի ավագի, ուսխորհրդի միջոցով, սակայն բացակայում է վարչական կազմի հետ հանդիպումների համար սահմանված հստակ ժամանակացույց և կանոնակարգ: Այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ը հնարավորություն է ընձեռում ուսանողներին հաղորդակցվելու վարչական կազմի հետ: Ուսանողներին օժանդակությունն ու ուղղորդումն իրականացվում է նաև խորհրդատուների միջոցով: Ուսանողներն, ընդհանուր առմամբ, բավարարված են այդ գործընթացից:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ԳՊՀ-ում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցման համար պատասխանատու է համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը: Չնայած ըստ կանոնադրության վերջինս նախատեսված է իրականացնելու համալսարանի ուսանողների և շրջանավարտների կարիերայի ապահովում, աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացում, շրջանավարտների և համալսարանի միջև կապերի ամրապնդում, ինչպես նաև համալսարանի և գործատուների համագործակցությանը միտված ծրագրերի իրականացում, այդուհանդերձ թե ուսանողների, թե գործատուների, թե շրջանավարտների հետ հանդիպումները փաստեցին, որ նշված գործառույթները դեռևս ամբողջովին չեն իրականացվում: Հստակ չէ՝ ուսանողների, շրջանավարտների և գործատուների հետ ինչ աշխատանք է տարվում: Դեռևս շրջանավարտների բազան ամբողջությամբ համալրված չէ: Կենտրոնը ստեղծվել է 2013թ.-ին, մշակվել է կենտրոնի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթային հենքը: Կենտրոնը իրականացնում է կարիերայի կողմնորոշմանը միտված որոշ աշխատանքներ՝ մասնավորապես ուսանողների հետ կազմակերպում է հանդիպումներ, քննարկումներ: Չնայած մշակված է կարիերայի ուղեցույց, այդուհանդերձ ձևակերպումները ուսանողի համար ուղղորդիչ, պարզ և մատչելի չեն:

Գործում է ԳՊՀ շրջանավարտների միություն և կարիերայի կենտրոն կայքէջը, որտեղ գրանցված են տարբեր տարեթվերի ավարտած և աշխատանքի տեղավորված շրջանավարտների տվյալներ: **Շրջանավարտների և ուսանողների զբաղվածության վերաբերյալ տվյալների բազան համալրված չէ կարիերային հետևելու մասին տվյալներով**[15]:

Դեռևս հստակ նախանշված չէ, թե ինչ աշխատանքներ է իրականացնում կենտրոնն աշխատաշուկայի մասնագիտական կադրերով համալրելու պահանջարկն ուսումնասիրելու համար, ինչ համագործակցության պայմանագրեր է կնքել զբաղվածության գործակալությունների և աշխատանքի տեղավորման տեսչությունների հետ և որն է եղել արդյունքը:

4.6 ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՄՈՒՀ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերություն (ՈՒԳԸ), համալսարանական, ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններ, որոնց նպատակն է նպաստել ուսանողության մասնագիտական կայացմանը և զարգացմանը: Նշված ընկերությունների խնդիրներն են՝ աջակցությունը գիտական հետաքրքրություններ ունեցող ուսանողներին, ուսանողական գիտաժողովների, սեմինարների, քննարկումների և գիտական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումների կազմակերպումը:

Ըստ ինքնավերլուծության ԳՊՀ-ն կարևորելով ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներում մագիստրոսական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում հետազոտական բաղադրիչը կազմում է 40%: Համալսարանում միայն բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներն են ավարտական աշխատանքներ գրում, դրանով իսկ

[15] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է ***«Բացակայում են շրջանավարտների և ուսանողների զբաղվածության վերաբերյալ ամբողջական տվյալները»:***

սահմանափակելով որոշ ուսանողների մոտ հետազոտական հմտությունների ձեռքբերումը:

ԳՊՀ-ն հետազոտական աշխատանքների կիրառական բաղադրիչն ապահովում է ութշաբաթյա գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների միջոցով:

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում 2011-2015թթ. ուսանողների ներգրավվածության ու վերջիններիս մասնակցությամբ իրականացվող ծրագրերը քիչ են 2011թ.՝ 1, 2012թ.՝ 4, 2013թ.՝ 9, 2014թ.՝ 3, 2015թ. 1 ուսանող:

Ուսումնառողների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ 2013թ. տպագրված հոդվածների մասին տվյալները համեմատելով 2014թ.-ի հետ, կարելի է փաստել, որ տպագրությունների թիվը կտրուկ նվազել է: Հստակ չի ուսումնասիրված, թե ՈՒԳԸ ստեղծման 7 տարիների ընթացքում գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավման ինչպիսի մեխանիզմներ են ձևավորվել և ինչ շոշափելի ձեռքբերումներ կան:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների բողոքների և բարձրացված խնդիրների լուծման կարգ: Բողոքների քննարկման համար ձևավորվում են համահամալսարանական ու ֆակուլտետային հանձնաժողովներ և կազմվում է ժամանակացույց: Ուսանողների անկաշկանդ կարող են բողոքները ներկայացնել ռեկտորին, պրոռեկտորներին, դեկաններին, ամբիոնի վարիչներին, խորհրդատուներին: Ուսանողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող պատասխանատու մարմինը ՈՒԽ-ն և խմբին կցված խորհրդատուներն են: Ուսանողներ իրավունքները սահմանված են ինչպես պայմանագրերում, այնպես էլ ՄԿԾ-ների տեղեկագրերում և ուսանողի ուղեցույցում:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ԳՊՀ-ը կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների և դրանց որակի գնահատման մեխանիզմները հարցումներն են: Սակայն կիրառվող գործիքակազմի հուսալիության և վավերության վերաբերյալ տվյալներ ներկայացված չեն: Կիրառվող մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ տվյալները բացակայում են:

Դասընթացի և դասախոսի վերաբերյալ անցկացված ուսանողական հարցումների արդյունքները քննարկվում են ամբիոններում, որտեղ կատարվում են համապատասխան եզրահանգումներ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում համալսարանի կողմից ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելությանն ուղղված քայլերի կանոնակարգված իրականացումը, սակայն ընդունելության արդյունավետությունն արտահայտող հիմքերի ու վերլուծության բացակայությունը կարող է խոչընդոտել ուսանողական նոր համակազմի համալրման գործընթացին: Հավանական դիմորդների մասնագիտական կողմնորոշման ու ուղղորդման աշխատանքների արդյունավետության գնահատումը թույլ կտար առավել վերահսկելի դարձնել ուսանողների ներգրավման և հավաքագրման գործընթացները, գնահատել առկա վիճակը և բարելավումներ կատարել՝ համապատասխանաբար նպաստելով ուսանողների հոսքի մեծացմանը:

Կրթական միջավայրի արդյունավետությունը կախված է այն հանգամանքից, թե որքանով են բավարարված ուսանողների տարատեսակ կարիքները: ԳՊՀ-ում ուսանողների կրթական կարիքները վերհանվում են ոչ համակարգված կերպով, իսկ վերհանման մեխանիզմների անկատարությունը վտանգի տակ է դնում ուսանողների կարիքների բավարարումը, և սահմանափակում որակական և քանակական տվյալների հիման վրա համալսարանի արդյունավետ գործունեության օբյեկտիվ պատկերը դուրս բերելը: Ոչ նպատակային հարցումները և Ուսանողական խորհրդի կողմից ոչ ֆորմալ կերպով բարձրացվող հարցերը չեն կարող բավարար չափով վերհանել ուսանողների բոլոր կարիքները: Ուսանողների կարիքների բացահայտման

համակարգային մոտեցման բացակայությունը, թերևս, կարելի է համարել համալսարանի թույլ կողմերից մեկը:

ԳՊՀ ուսանողները համալսարանից ստանում են համապատասխան աջակցություն: Փորձագիտական խումբը դրական է գնահատում լրացուցիչ պարապմունքներ, խորհրդատվություն տրամադրելուն ուղղված աշխատանքները, այդուհանդերձ գործընթացները կանոնակարգման անհրաժեշտություն ունեն: Հստակ ժամանակացույցների և խորհրդատվությունների տրամադրման ծրագրերի առկայությունը հանարավորություն կտա համալսարանին կառավարելի դարձնել գործընթացը, իսկ տրամադրված խորհրդատվությունը՝ նպատակային:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ակադեմիական ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների համար իրականացվող ընթացիկ լրացուցիչ պարապմունքների՝ ՄՈՒՀ-ում կիրառվող մոտեցումը հստակեցման կարիք ունի: Անհրաժեշտ է իրականացնել համապատասխան վերլուծություններ՝ պարզելու ցածր առաջադիմության պատճառները, որոնց լուծումը պետք է իրականացնել կազմակերպվող ուսումնական գործընթացների շրջանակներում: Լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը պետք է ենթադրի նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև այն փաստը, որ ուսանողները օժանդակություն և ուղղորդում ստանալու նպատակով կարող են դիմել անմիջապես ռեկտորին, վարչական անձնակազմին և համապատասխան արձագանք ստանալ: Այնուամենայնիվ, գործընթացը դեռևս կանոնակարգման անհրաժեշտություն ունի: Առավել մտահոգիչ է ուսանողների կամընտրական դասընթացների ընտրության առումով մասնագիտական կողմորոշման թերի իրականացումը:

Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ստեղծումը կարևոր քայլ է ուսանողներին աշխատաշուկա մուտք գործելուն նախապատրաստելու և աշխատաշուկայի վերլուծություն իրականացնելու, ինչպես նաև ուսանող-աշխատաշուկա կապի ստեղծման տեսանկյունից, սակայն՝ կառույցն այդ ուղղությամբ դեռևս էական դերակատարում չունի: Մինչդեռ կառույցը լավ հնարավորություն կարող է ընձեռել ՄՈՒՀ-ին՝ ուսումնասիրելու աշխատաշուկայի պահանջները, բարելավել ՄԿԾ-ները, գնահատելու պրակտիկաների կազմակերպման արդյունավետությունը, ինչպես նաև ուսումնասիրելու՝ որքանով են վերջիններս նպաստում ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը: Չնայած ՄՈՒՀ-ում կենտրոնն արդեն բավական ժամանակ գործում է, այնուամենայնիվ, ուսանողների օժանդակությանը միտված գործընթացներ գրեթե չեն իրականացվում, կենտրոնը ինտեգրված չէ համալսարանի կրթական գործընթացներում, ինչը մեծ խոչընդոտ կարող է հանդիսանալ ուսանողների հետագա աշխատանքային գործունեության ուղղորդման տեսանկյունից: Ուսանողների և շրջանավարտների հետ պասիվ համագործակցությունը կարող է խոչընդոտել վերջիններիս կարիքների վերհանմանը, ինչպես նաև աշխատաշուկայի և շահակիցների պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստմանը:

Գովելի է, որ համալսարանում ուսանողների իրավունքների պաշտպանությունը առանձնակի ուշադրության է արժանանում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ն ունի ուսանողների հավաքագրման և ընդունելության բավականին հստակ և կանոնակարգված մեխանիզմներ, ուսանողների կրթական կարքիների վերհանմանը միտված որոշ մեխանիզմներ: Արդյունավետ կրթական միջավայր ապահովելու նպատակով ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու լրացուցիչ պարապմունքների և ստանալու խորհրդատվություն, ստեղծվել են ուսանողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՄՈՒՀ-ի մի քանի մարմիններ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին ***գնահատում է բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ՓԱՍՏԵՐ

5.1. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴԿ) ընտրությունը կատարվում է «ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման և խրախուսման կանոնակարգ»-ի և «ԳՊՀ դասախոսներին պայմանագրային, համատեղությամբ և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունման կարգ»-ի հիման վրա, որտեղ սահմանված են պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունման ընթացակարգը, պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման և առաջխաղացման չափանիշները, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կարգը, նրանց հետ պայմանգրի լուծման և փոփոխման հիմքերը: ԳՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի հետ աշխատանքային հարբերությունները կարգավորվում են հիմնական, համատեղության՝ ներքին և արտաքին, ժամավճարային հիմունքներով՝ կազմված աշխատանքային պայմանագրերի հիման վրա: Աշխատանքային ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը կարող է վերակնքվել: Դասախոսական կազմի հավաքագրումը կատարվում է մեծամասամբ հրավիրման տարբերակով և մրցույթով:

ԳՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի գործառույթները սահմանված են «ՀՊԳ դասախոսի աշխատանքի նկարագիր» փաստաթղթում: Չնայած դասախոսական կազմի գործառույթները և ձևավորման ընթացակարգը սահմանող փաստաթղթերի առկայությանը, ՊԴ կազմի ընտրության քաղաքականության արդյունավետությունը գնահատված չէ:

ԳՊՀ-ն ձևակերպել է մարդկային ռեսուրսների և կարողությունների կառավարման քաղաքականության հիմունքները, սակայն չի իրականացնում այդ ռեսուրսների հստակ պլանավորման գրծընթացը:

Ըստ ինքնավերլուծության զեկույցի ուսումնաօժանդակ կազմը՝ լաբորանտներ, գործավարներ, մեթոդիստներ, գրադարանավարներ, աշխատանքի են ընդունվում «ԳՊՀ ներքին կարգապահական կանոններ»-ի II կետի՝ «ԳՊՀ-ի աշխատողների աշխատանքի ընդունման, տեղափոխման և աշխատանքից ազատման կարգ»-ի համաձայն:

Աշխատողների աշխատանքից հեռացումը ևս կատարվում է «ԳՊՀ ներքին կարգապահական կանոններ»-ի՝ II կետի՝ «ԳՊՀ-ի աշխատողների աշխատանքի ընդունման, տեղափոխման և աշխատանքից ազատման կարգ»-ի համաձայն:

Հարկ է նշել, որ համալսարանի ուսումնաօժանդակ կազմի ֆունկցիոնալ գործառույթները հստակ սահմանված չեն:

5.2. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

ԳՊՀ առանձին կրթական ծրագրերի հայեցակարգերում բերված ուսումնական գործընթացի կադրային ապահովմանը ներկայացվող ընդհանուր պահանջներն են. դասավանդվող դասընթացին համապատասխան մասնագիտական բազային կրթությունը (առնվազն դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան), գիտահետազոտական կամ գիտամեթոդական գործունեության իրականացումը: Մասնագիտական դասընթացների ուսումնական գործընթացը ապահովող դասավանդողների առնվազն 30%-ը պետք է ունենա գիտական աստիճան և/կամ կոչում, այդ թվում՝ տվյալ մասնագիտության մասնագիտական դասընթացների գծով: Կրթական

գործընթացի մեջ կարող են ընդգրկվել նաև դասախոսներ՝ պրակտիկաների բազային հանրակրթական դպրոցների, պրոֆիլային կազմակերպությունների աշխատակիցների համակազմից: Այդուհանդերձ ՄԿԾ-ի շրջանակում դասախոսին ներկայացվող մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ սահմանված չեն:

5.3. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Համալսարանում իրականացվում են որոշ գործընթացներ պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին գնահատելու ուղղությամբ: Այսպես, ուսանողության շրջանում անցկացված հարցումներում զետեղված են հարցեր, որոնք պարզաբանում են ուսանողության կարծիքը դասավանդող դասախոսների մասնագիտական որակի և դասավանդման մեթոդների ընտրության արդյունավետության վերաբերյալ, ամբիոնների կողմից լրացվում է դասախոսական կազմի որակի գնահատման հարցաթերթ, համաձայն որի գնահատվում է վերջին 3 տարիների գործունեությունը, կրթական ծրագրի ղեկավարի կողմից կատարվում է դասախոսի գնահատում արտաքին գնահատման հարցաթերթի միջոցով ինչպես նաև դասախոսը՝ դասախոսի գնահատմամբ: Դասախոսների գնահատումը կատարվում է նաև պարբերաբար՝ կազմված ժամանակացույցերի համաձայն իրականացվող դասալսումների միջոցով: Սակայն, իրականացված գնահատումների խորքային (պատճառահետևանքային) վերլուծություններ չեն իրականացվում:

Վերոնշյալ գնահատումների՝ դասալսումների և հարցումների արդյունքները՝ քննարկվում են ամբիոնի, ֆակուլտետի խորհրդի, ռեկտորատի, գիտխորհրդի նիստերում: Արդյունքում եղել են դեպքեր, երբ փոխարինվել են դասախոսներ, փոփոխվել է դասավանդման մեթոդիկան և այլն: Այդուհանդերձ կիրառվող գործիքակազմերի հուսալիության և վավերականության գնահատում, ինչպես նաև արդյունավետության գնահատումներ չեն իրականացվել:

5.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Ըստ ինքնավերլուծության ԳՊՀ-ում մշակվում և իրականացվում են դասախոսական կազմի կատարելագործմանն ուղղված պլաններ՝ վերապատրաստումների, սեմինարների, խորհրդատվությունների, դասալսումների կազմակերպման, գործարար ոլորտից հրավիրյալ դասախոսների ներգրավմամբ սեմինարների, միջազգային և հանրապետական գիտաժողովների մասնակցությունների, միջազգային ծրագրերի մասնակցության: Դասախոսների շրջանում իրականացվում են օտար լեզվի, համակարգչային գրագիտության, մեկ անգամ նաև դասավանդման մեթոդների արդիականացման վերաբերյալ կարճաժամկետ դասընթացներ: Սակայն հիմնավորված չէ, թե որքանով է դրանց կազմակերպումը հիմնվում ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքների վրա: Իրականացված վերապատրաստումների և դասախոսական կազմի կատարելագործմանն ուղղված այլ մեխանիզմների արդյունավետության գնահատումներ առկա չեն: Միջազգային ծրագրերի շրջանակներում որոշ դասախոսների հնարավարություն է ընձեռվել արտասահմանում մասնակցել դասընթացների:

Կատարելագործմանն ուղղված միջոցառումների մասնակցած դասախոսներն իրենց փորձը սեմինարի միջոցով տարածում են ՄՈՒՀ-ի մյուս դասախոսների շրջանում: Այդուհանդերձ վերապատրաստումների ազդեցությունը չի վերլուծվել:

Դասախոսների մասնագիտական կարիքների բացահայտման և վերլուծման հստակ մեխանիզմները բացակայում են: Հիմնականում վերջինս իրականացվում է ոչ ֆորմալ քննարկումների միջոցով: Այդուհանդերձ հանդիպումների պարզ դարձավ, որ բացահայտված կարիքների հիման վրա ՄՈՒՀ-ի կազմակերպած մասնագիտական վերապատարստումները սահմանափակ են, իսկ վերապատարստումները հիմնականում իրականացվում են դասախոսների անհատական նախաձեռնությամբ:

5.5. ՄՈՒՀ-ն երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Համալսարանում աշխատում է 145 դասախոս: Դասավանդող կազմի 66,2%-ը հիմնական հաստիքային աշխատողներ են, ԳՊՀ դասավանդող կազմի 51,7%-ը ունի ԲՈՀ-ի կողմից հաստատված գիտական գիտական աստիճան և կոչում: ԳՊՀ-ում դասավանդողների 43,4%-ը կազմում են երիտասարդ դասախոսները:

Համալսարանում բացակայում են պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունը երաշխավորող քաղաքականությունը և ընթացակարգերը: Մեկ դասախոսի կողմից միջինը դասավանդվում է 5 դասընթաց, որոշ դեպքերում նաև մինչև 8: ԳՊՀ-ն գտնում է, որ ՄԿԾ-երի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի կայունության ապահովմանը նպաստում են աշխատանքի վարձատրության չափի աստիճանական աճը, բարոյական և նյութական խրախուսման մեխանիզմները՝ պարգևավճարներ, շնորհակալագրեր:

ՄՈՒՀ-ում բացակայում է մենթորության համակարգը: Երիտասարդ դասախոսների ներգրավման, ուսուցման և խրախուսման հստակ քաղաքականությունը բացակայում է: Որպես երիտասարդ դասախոսներ կրթական գործընթացներում ներգրավվում են հիմանականում լավագույն ուսանողները:

5.6. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԳՊՀ-ի աշխատակիցների խրախուսման համար կիրառվում են «ԳՊՀ ներքին կարգապահական կանոններ»-ով, «ԳՊՀ-ի աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցներ»-ի VI կետով նախատեսված միջոցները: Որպես խրախուսման մեխանիզմներ դիտարկվում են պարգևատրումները, բոնուսները, շնորհակալագրերը, կոչումների շնորհումները:

Դասավանդողների մասնագիտական առաջընթացի ապահովման նպատակով ԳՊՀ-ն նախաձեռնել և թույլտվություն է ստացել բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի իրականացման: Երիտասարդ դասախոսներին խրախուսման մեկ այլ եղանակ է ատենախոսությունների պաշտպանության աջակցությունը: Որոշ դասախոսներ հանարավորություն ունեն միջազգային ծրագրերի շրջանակներում արտերկրում հետազոտություն իրականացնելու: Այդուհանդերձ խրախուսման մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ վերլուծություններ չեն իրականացվել:

5.7. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ԳՊՀ-ն ունի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ, որոնց իրավունքներն ու պարտականությունները ըստ ինքնավերլուծության սահմանվում են համապատասխան ստորաբաժանումների կանոնակարգերում կամ կանոնադրություններում: Սակայն վերջիններիս ուսումնասիրությունը փաստեց, որ դրանցում առանձնացված և ձևակերպված չեն աշխատակիցների գործառույթները:

Բացակայում են վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կարիքների վերհանման մեխանիզմներն ու համապատասխան վերլուծությունները: Անհրաժեշտության դեպքում առաջարկվել են որոշակի լուծումներ, սակայն դրանց արդյունավետությունը գնահատված չէ:

Աշխատակազմի գործունեության որակի ապահովման նպատակով ՄՈՒՀ-ում իրականացվում են ուսանողների շրջանում հարցումներ: Սակայն, հարցադրումները զուտ քանակական են, որակական գնահատում չեն պարունակում և համապատասխան վերլուծության չեն ենթարկվում: Հարցումների արդյունքերի հետադարձ կապը նույնպես ապահովված չէ: Հարցումներն իրականացվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՈՒՀ-ը կարևորում է անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորումը, սակայն բացակայում է յուրաքանչյուր կրթական ծրագիրն իրականացնելու համար ՊԴ

կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, որոնց մշակումը ՄՈՒՀ-ին հնարավորություն կտար գնահատել պրոֆեսորադասախոսական անձնակազմի համապատասխանությունն առկա ՄԿԾ-երին, ինչպես նաև համապատասխանաբար կնպաստեր նաև կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովմանը:

Համալսարանում ուսումնաօժանդակ կազմի հստակ գործառույթների առկայության դեպքում հնարավոր կլինի առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացները, ինչպես նաև բացահայտել աշխատակիցների իրատեսական կարիքները տվյալ գործառույթն իրականացնելու համար և այդ առումով կազմակերպել նպատակային վերապատրաստումներ:

Չնայած ԳՊՀ-ում առկա են պրոֆեսորադասախոսական կազմի խրախուսման որոշ մեխանիզմներ, այդուհանդերձ անձնակազմի (դասավանդողների, ուսումնաօժանդակ կազմի) խրախուսման քաղաքականության և ընթացակարգերի բացակայությունը, ինչպես նաև կարիքների վերհանման հստակ մեխանիզմների անկատարությունը թույլ չի տալիս գնահատել կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը, ինչպես նաև հիմնարար պայմաններ ստեղծել զարգացնելու աշխատակիցների կարողությունները և բարձրացնելու կատարողականը:

Դասախոսական կազմի գործունեությունը գնահատող ուսանողական հարցումների գործող մեխանիզմը, դասալսումները, կրթական ծրագրի ղեկավարի և գործընկերային գնահատումները, ընդհանուր առմամբ, նպաստում են դասախոսների աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացմանը: Սակայն վերոնշյալ առանձին գործընթացները հարկ է կիրառել համակարգային մոտեցմամբ՝ հստակեցնելով պարբերականությունը, Իսկ հարցումների դեպքում, հաշվի առնելով մասնակիցների ներկայացուցչականությունը և ստացված տվյալների օգտագործման նպատակայնությունը: Իրականացված գնահատումների խորքային վերլուծություններ չեն իրականացվում, որի առկայությունը հնավորություն կտար պարզելու հիմնական ձեռքբերումներն ու առաջացած խնդիրների պատճառահետևանքային կապերը: Միաժամանակ, լավագույն լուծումների ձևերը և դրական ձեռքբերումները կարող են հիմք հանդիսանալ ընդլայնման և կայուն զարգացման ապահովման համար, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի առավել արդյունավետ և կարճ ժամանակահատվածում լուծել կադրերի կառավարման ռազմավարական խնդիրները:

ԳՊՀ-ն կարևորում է մասնագիտական վերապատրաստման անհրաժեշտությունը, սակայն դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը համալսարանի կողմից տրամադրվող ռեսուրսները խիստ սահմանափակ են, մինչ օրս այս ուղղությամբ էական ձեռքբերումներ չկան, իսկ մասնագիտական զարգացումը հիմնականում իրականացվում է դասախոսների անհատական նախաձեռնությամբ: Փորձագիտական խումբը նկատեց, որ դասախոսական կազմի մասնագիտական կարիքների վերհանումն մինչ օրս բավարար ուշադրության չի արժանացել: Մինչդեռ կարիքների վերհանումը ամբիոնների համար կարևոր է՝ հասկանալու հնարավոր սպառնալիքները ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման տեսանկյունից, ինչպես նաև դասախոսական կազմի կայունության երաշխավորման համար: Առավել մտահոգիչ է դասախոսական կազմի կայունության խնդիրը՝ պայմանավորված մի քանի հանգամանքներով՝ մեկ դասախոսի կողմից մի քանի դասընթացների դասավանդումը, դասախոսի բացակայության դեպքում՝ փոխարինողի բացակայությունը: Սա նշանակում է, որ որևէ դասախոսի դուրս գալու կամ հեռացման դեպքում վտանգվում է կրթական գործընթացը: Այսքանի հետ մեկտեղ բացակայում են դասախոսական կազմի կայունությունը երաշխավորող քաղաքականությունն ու մեխանիզմները, ինչը կրթական գործընթացը ռիսկի տակ է դնում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի ջանքերը երիտասարդ դասախոսների ներգրավման ուղղությամբ, այդուհանդերձ հստակ սահմանված չէ, թե ինչ մեխանիզմներով է դասավանդման փորձը փոխանցվում երիտասարդ կադրերին, ինչպես է իրականացվում երիտասարդ դասախոսների խրախուսումն ու առաջխաղացումը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի առաքելությունը իրականացնելու համար հաստատությունն հիմնականում ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանկադակ և վարչական կազմով, առկա են ՊԴ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, նրանց գնահատման որոշ մեխանիզմներ,

ԳՊՀ-ում իրականացվել են տարբեր վերապատրաստումներ, այժմ ներդրման փուլում են պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործմանն ուղղված գործընթացները, ՄՈՒՀ-ը բավական ակտիվ է երիտասարդ դասախոսների ներգրավման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին ***գնահատում է բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ՓԱՍՏԵՐ

6.1. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ԳՊՀ-ն, ելնելով իր առջև դրված առաքելությունից և նպատակներից, հետազոտությունների ոլորտում իր հավակնություններն արտահայտել է «ԳՊՀ զարգացման և բարեփոխման հայեցակարգ (հիմնադրույթներ)», իսկ ներկայումս «ԳՊՀ-ի հնգամյա ռազմավարական ծրագիր (2016-2021թթ.)» փաստաթղթերում: Գիտահետազոտական գործունեությունը համալսարանի զարգացման ռազմավարական կարևոր ուղղություններից է, որը ձևակերպված է մի քանի նպատակների տեսքով. մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի կարևորում, մագիստրոսների հետազոտական աշխատանքների կիրառական ուղղվածության ապահովում, գիտահետազոտական պրակտիկայի և գիտական սեմինարի արդյունավետության բարձրացում, հետազոտական աշխատանքների կիրառական ուղղվածության ապահովում, կրթական երրորդ աստիճանի ներդրում, ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում, դասախոսների գիտական հրատարակումների հաշվառում նրանց վարկանիշային գնահատման գործընթացում, գիտական ծրագրերի, հետազոտությունների իրականացման նպատակով ֆինանսավորման աղբյուրների որոնում:

Սահմանված են հետազոտական նպատակները, սակայն հետազոտական ուղղությունները հստակ տարանջատված չեն: Հետազոտական առաջնահերթությունները առանձնացված չեն:

ՄՈՒՀ-ի ռազմավարության մեջ սահմանված է հետազոտական բաղադրիչ, սակայն անդրադարձ չի կատարվում գիտահետազոտական գործունեության զարգացմանն ու հզորացմանը: Մագիստրոսական թեզերում հետազոտական բաղադրիչը քիչ է: Ըստ զարգացման հայեցակարգի կարևորվում է մագիստրոսական աշխատանքների կիրառական ուղղվածության աճը, այդուհանդերձ թեզերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կիրառական ուղղվածությունը շեշտադրված չէր: Գիտահետազոտական պրակտիկայի և գիտական սեմինարների արդյունավետության բարձրացման ուղղությամբ քայլեր չեն իրականացվում: Հետազոտության իրականացման նպատակով ֆինանսավորման աղբյուրների որոնման ուղղությամբ շոշափելի քայլեր չեն իրականացվում:

Չնայած 2011-2016 ՌԾ-ում սահմանված նպատակի՝ «... հետազոտական աշխատանքի արդյունքները հրապարակելու միջազգային գրախոսվող ամսագրերում, դրանք օգտագործելու ուսումնական գործընթացում», միջազգային գրախոսվող ամսագրերում տպագրությունները սահմանափակ են:

ԳՊՀ-ում գործում է ուսանողական գիտական ընկերություն, սակայն ուսանողների

իրազեկվածությունը բավարար չէ և հետաքրքրվածությունը թույլ է ՈՒԳԸ-ի գործունեության վերաբերյալ:

Չնայած ՄՈՒՀ-ը մասնագետներ է պատրաստում նաև հանրակրթական դպրոցներում աշխատելու համար, այդ ոլորտի հետազոտություններ մինչ օրս չեն իրականացվում:

6.2. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտության ոլորտում որպես երկարաժամկետ ռազմավարություն դիտվում է ԳՊՀ ՌԾ-ն: ԳՊՀ-ում բացակայում են հետազոտության ոլորտում համալսարանի հետաքրքրություններն ու հավակնությունները արտահայտող միջնաժամկետ ծրագրերը: Իսկ որպես կարճաժամկետ դիտարկում է ամբիոնային հետազոտությունները: Չնայած առկա են ամբիոնային հետազոտական ուղղություններ, սակայն ծրագրերի տեսքով հստակ ձևակերպված չեն և ամբիոնայի հետազոտությունների ուղղությունները ոչ միշտ են կապակցված ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթությունների հետ: ՄՈՒՀ-ը լինելով տարածաշրջանային ուսումնական հաստատություն, վերջինիս հետազոտական ուղղությունները չեն բխում տարածաշրջանի զարգացման հիմնախնդիրներից:

6.3. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Համալսարանը չունի գիտահետազոտական գործունեությունը կանոնակարգող կառույց, այս ուղղության համար պատասխանատուն ուսումնագիտական գծով պրոռեկտորը, **գիտխորհուրդն ու ֆակուլտետային խորհուրդներն են**[16]: ԳՊՀ-ում հետազոտությունների իրականացմանը և դրա զարագացմանը միտված հստակ քաղաքականությունը և ընթացակարգերը բացակայում են:

ՄՈՒՀ-ի զարգացման և հետազոտության կապը բացակայում է, քանի որ վերջինիս արդյունքների առևտրայնացում կամ ներդրում չի իրականացվում:

ԳՊՀ-ում բացակայում է երիտասարդ աշխատակազմի գիտահետազոտական գործունեության խրախուսման կոնկրետ հայեցակարգը:

ԳՊՀ-ն հրատարակում է ամենամյա գիտական հոդվածների ժողովածու, որը ճանաչվում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից: Յուրաքանչյուր տարի կազմակերպվում է համահամալսարանական գիտաժողով, որի ընթացքում զեկուցված լավագույն նյութերը հրատարակվում են:

Մշակված է ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգ:

Որպես հետազոտական աշխատանքներում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ապահովման բախուսող մեխանիզմ դիտարկվում է ԳՊՀ հոդվածների ժողովածույում անվճար տպագրության հնարավորությունը: Ֆինանսական պլանավորում համալսարանի բյուջեից գիտահետազոտական զարգացման նպատակով չի իրականացվում:

Չնայած համալսարանում առկա է բնագիտական լաբորատորիա, այդուհանդերձ գիտական հետազոտությունների համար լաբորատոր պայմանները, ինչպես նաև անհրաժեշտ սարքավորումներով հագեցվածությունը բավարար չեն: Լաբորատորիաները համալրման խիստ անհրաժեշտություն ունեն:

Բացակայում են հետազոտական աշխատանքների գծով ամբիոնների գործունեության պլանավորման և կազմակերպման հստակ գործընթացները:

6.4. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՄՈՒՀ-ում բացակայում է հետազոտական գործունեության ինստիտուցիոնալացված իրականացումը: Բացակայում են համատեղ հետազոտական ծրագրերը, համատեղ

[16] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է «....*այս ուղղության համար պատասխանատուն ուսումնագիտական գծով պրոռեկտորն է*....»:

ուսումնասիրությունները:

Ցածր է միջազգային պարբերականներում դասախոսների կողմից տպագրված գիտական հոդվածների ցուցանիշը՝ 2015թ.-ին 1 դասախոս: ՄՈՒՀ-ը ևս նշում է, որ բարձր վարկանիշով հանդեսներում տպագրված աշխատանքների քանակը փոքր է:

«Էրասմուս-Մունդուս» և «Էրասմուս+» ծրագրերի շրջանակներում իրականացվում են դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրեր, սակայն դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը միջազգային հետազոտական ծրագրերում բացակայում են:

Ըստ ինքնավերլուծության կարևորվում է երիտասարդ դասախոսների, ուսանողների մասնակցությունը հետազոտական նախագծերում: Ուսանողները և դասախոսները հաճախ գործուղվում են հանրապետական գիտաժողովներ, սակայն համալսարանը չունի սկսնակ աշխատակազմի գիտահետազոտական գործունեության խրախուսման իր քաղաքականությունը և մեխանիզմները:

6.5. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ԳՊՀ-ում ուսումնական գործընթացում որպես հետազոտության բաղադրիչ բակալավրիատի ուսումնական պլաններում նախատեսված են անհատական, կուրսային և ավարտական աշխատանքներ, իսկ մագիստրատուրայի ուսումնական պլաններում ընդգրկված է հետազոտական կառուցամաս 36 կրեդիտ չափաբաժնով և մագիստրոսական թեզի պաշտպանությունը՝ 12 կրեդիտ:

Մագիստրոսական թեզերի պատրաստման գործընթացում այլ ՄՈՒՀ-երից, հետազոտական հիմնարկներից ընտրված ղեկավարների դեպքում ուսանողը հնարավորություն է ստանում օգտվելու տվյալ ՄՈՒՀ-ի կամ հետազոտական հիմնարկի լաբորատորիաներից, տեխնիկական բազաներից, գիտական արտադրանքից: Այդուհանդերձ մագիստրոսական թեզերը գիտական արժեք և նորարարություն դեռևս չեն պարունակում կամ դրանց համար բավարար հիմքեր չեն ապահովում:

Որպես խրախուսում լավագույն մագիստրոսական թեզերի հիման վրա պատրաստված հոդվածները տպագրվում է ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուում: Այդուհանդերձ ուսանողների ներգրավվածությունը համեմատական ցածր է գիտական աշխատանքներում, թեպետ վերջիններս հայտնում էին իրենց պատրաստակամության մասին մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներում:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հստակ մեխանիզմներ սահմանված չեն, սակայն անհատական դասախոսների հետազոտության արդյունքները ոչ ֆորմալ կերպով մտնում են ուսումնական գործընթաց, արտացոլվում են դասընթացների ծրագրերում:

Դատողություններ

Հետազոտական գործունեությունը ՄՈՒՀ-ում սահմանափակ է ինչպես միջազգային հետազոտությունների իրականացման, այնպես էլ ուսանողների և դասախոսների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածության աստիճանի տեսանկյունից: Հետազոտական գործունեությունը համակարգող կենտրոնի ստեղծումը կարող է նպաստել համալսարանում հետազոտության կանոնակարգված իրականացմանը, ռազմավարական ծրագրում նշված նպատակների համակարգված իրականացմանը: Գիտահետազոտական գործունեության զարգացման նպատակով ՄՈՒՀ-ը դեռևս չի որդեգրել միասնական ռազմավարական մոտեցում: Այն հանգամանքը, որ հետազոտական ոլորտի ֆինանսական պլանավորում չի իրականացվում, իսկ բյուջեից գիտահետազոտական զարգացման նպատակով գումար չի հատկացվում, մտահոգիչ է, քանի որ վերջինս սահմանափակում է հետազոտական գործունեության ծավալները, հետևաբար նաև խոչընդոտում ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության խրախուսումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող երկարաժամկետ ռազմավարության և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի մշակումը հնարավորություն կտա համալսարանին

ստեղծել միջամբիոնային հետազոտական կապեր, ուշադրություն դարձնել մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ապահովմանը:

Չնայած համալսարանում առկա է բնագիտական լաբորատորիա, այդուհանդերձ գիտական հետազոտությունների համար լաբորատոր պայմանները, ինչպես նաև անհրաժեշտ սարքավորումներով հագեցվածությունը բավարար չեն: Լաբորատորիաները համալրման խիստ անհրաժեշտություն ունեն: Միայն այդ պայմանների ստեղծմամբ հնարավոր կլինի ապահովել իրականացվող հետազոտությունների բարձր որակ, ամրապնդել ՄՈՒՀ-հետազոտություն-գիտություն կապը, ինչպես նաև ստեղծել հիմնարար պայմաններ համալսարանի կողմից ներդրումային քաղաքականությունն առավել արդյունավետ իրականացնելու համար:

ՄՈՒՀ-ում գիտահետազոտական գործունեության կառավարման ոչ կանոնակարգվածությունը, հստակ քաղաքականության և ընթացակարգերի բացակայությունը խոչընդոտում են ՄՈՒՀ-ում գիտահետազոտական աշխատանքների ուղղորդված և արդյունավետ իրականացմանը: Միջամբիոնային հետազոտությունների և ամբիոնների միջև կուտակած փորձի փոխանակման բացակայությունը չի նպաստում համաչափ զարգացմանը ու ձեռքբերումների տարածմանը:

ՄՈՒՀ-ի հետազոտության միջազգայնացման, հետազոտության արդյունքների ճանաչման մասին խոսել հնարավոր չէ՝ պայմանավորված հետազոտական գործունեության ինստիտուցիոնալացված իրականացման բացակայությամբ:

Գիտության միջազգայնացման գործընթացների օժանդակումը և դրա համար նախատեսվող ֆինանսական միջոցների հատկացումը կնպաստի համալսարանի միջազգային հետազոտական տարածքին ինտեգրման խնդիրների արդյունավետ լուծմանը, համապատասխանաբար կխթանի դասախոսների և ուսանողների շարժունությունը, միջազգային փորձի ինտեգրմանը կրթական գործընթացում: Մտահոգիչ է, որ հետազոտական ոլորտում առկա ձեռքբերումները հիմնականում պայմանավորված են առանձին անհատների սեփական նախաձեռնություններով: ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացմանն ուղղված քայլերը շատ պասիվ են, ինչը պայմանավորված է նաև նրանով, որ այդ ուղղությամբ հստակ քաղաքականություն սահմանված չէ: Միջազգային կապերը ՄՈՒՀ-ը չի օգտագործում համատեղ հետազոտական ծրագրերի և ուսումնասիրությունների իրականացման համար: Արդյունքում այդպիսի ծրագրերն ու գործընթացները բացակայում են: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ դասախոսների, ուսանողների շարժունությունը խթանող մեխանիզմները բացակայում են, համապատասխանաբար սահմանափակելով վերջիններիս մասնակցությունը միջազգային գիտաժողովներին և հրապարակումները միջազգային գրախոսվող ամսագրերում: Այս ամենը խոսում է այն մասին, որ ՄՈՒՀ-ը բավարար կարևորություն չի տալիս հետազոտական գործունեության միջազգայնացմանը:

Պետք է նշել, որ ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքում կրթական ծրագրերի շրջանակներում իրականացվում է հիմնականում կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի միջոցով: Ուսանողների և դասախոսների համատեղ հետազոտական գործունության բացակայությունը ռիսկային է դարձնում հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցումը: Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործընթացները դեռևս բացակայում են և էականորեն չեն ազդում կրթության որակի և արդյունավետության վրա ու չեն նպաստում ուսանողների մոտ հետազոտական **համապատասխան**[17] կարողությունների ձևավորմանը: Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հստակ մեխանիզմների սահմանված չլինելը թույլ չեն տալիս ուսուցման գործընթացում հետազոտական նոր բաղադրիչի անմիջական և պարտադիր ներմուծում, իսկ դասընթացները հետազոտությունների արդյունքների հիման վրա չեն բարելավվում: Մինչդեռ մագիստրոսական կրթական ծրագրերում գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներգրավման տեսանկյունից ուսումնական պլանների և դասընթացների ծրագրերի վերանայումը կարող է փոխել ՄԿԾ-ների որակը՝ դրանք դարձնելով ավելի մրցունակ և գրավիչ շահակիցների համար:

---

[17] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է ***«....ամբողջական....»:***

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռևս մշակված չեն հետազոտական գործունեությունը կանոնակարգող քաղաքականությունները, ընթացակարգերն ու մեխանիզմները, հետազոտական ուղղությունները հստակ տարանջատված չեն, առանձնացված չեն հետազոտական առաջնահերթությունները, ուսանողների ներգրավվածությունը հետազոտական գործընթացներում խիստ սահմանափակ է, իսկ հետազոտությունն ու կրթական գործունեությունը փոխկապակցված և համակարգված կերպով չի իրականացվում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 6 –ի պահանջներին ***գնահատում է անբավարար:***

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

ՓԱՍՏԵՐ

7.1. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Համալսարանը կրթական ծրագրերի իրականացման համար գործունեություն է ծավալում ԳՊՀ 3 մասնաշենքերում: Համալսարանն ունի լսարանային ֆոնդ, լաբորատորիաներ, համակարգչային լսարաններ, գրադարաններ, էլեկտրոնային ուսուցման «E-learning.gsu» համակարգ, ընթերցասրահներ, բուժկետ, մարզադահլիճներ, մարզադաշտեր, հանրակացարան, սննդի կետեր, պաշտոնական ինտերնետային կայք և այլն: Համալսարանը լսարանային պայմաններով հիմնականում ապահովված է, այդուհանդերձ ՄՈՒՀ-ի կողմից ուսումնական միջավայրի բարելավման անհրաժեշտություն կա:

ԳՊՀ-ում բնագիտական մասնագիտությունների համար առկա է արդի տեխնիկայով և սարքավորումներով համալրված լաբորատորիա, սակայն լսարանների և լաբորատորիաների հիմնական մասը բավարար հագեցված չեն նյութատեխնիկական բազայով, պայմանները մասամբ համապատասխանեցված չեն նաև ինտերակտիվ ուսումնառություն իրականացնելու համար: ԳՊՀ-ում առկա են համակարգչային լսարաններ, որոնք ուսանողների համար հասանելի են միայն դասաժամերին: Բնագիտական ֆակուլտետում առկա էր համակարգչային լաբորատոր լսարաններ հագեցված համապատասխան սարքավորումներով, սակայն վերջինիս առկայության անհրաժեշտություն կա նաև հումանիտար ֆակուլտետում:

Կենտրոնական մասնաշենքում առկա համակարգչային լսարանը, որը դասաժամեր չլինելու դեպքում բաց է ուսանողների ու դասախոսների համար, ծրագրային ապահովման առումով առկա է միայն Microsoft Office փաթեթ, բացակայում են հետազոտական փաթեթները, վիճակագրական վերլուծության ծրագրերի լիցենզավորված փաթեթները: Ուսանողների տեղեկացվածությունը վերջիններիս վերաբերյալ ցածր է: Համալասրանը չունի հստակ մոտեցում անհրաժեշտ ծրագրային փաթեթների ապահովման համար: Չնայած ԳՊՀ-ը պատրաստում է լեզվի մասնագետներ, լինգոֆոնային լսարանը հագեցված չէ անհրաժեշտ սարքավորումներով: Ապահովված է միայն տեսաֆիլմերի դիտման հնարավորությամբ:

ԳՊՀ-ում առկա գրադարանները գրականության նորացման, արդիականացման

անհրաժեշտություն ունեն: **43700 գրքից թվայնացված է շուրջ 500-ը**[18], ուսանողները հնարավորություն չունեն էլեկտրոնային տեսքով պատվիրելու: Համալսարանը դեռևս միջազգային գրադարանային ֆոնդերին հասանելիություն չունի:

ՄՈՒՀ-ում առկա է Wi-Fi ծածկույթ:

7.2. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարումն իրականացվում է տարեկան կտրվածքով: Ֆինանսական միջոցների հիմնական մասը ձևավորվում է վճարովի հիմունքներով սովորող ուսանողների ուսման վարձավճարներից: Բյուջեում բաշխումը նկարագրված չէ ըստ ռազմավարական ուղղությունների, հիմնական հատկացումը կատարվում է աշխատավարձային ֆոնդին, որոշ մասերով ապրանքանյութական պաշարների ձեռքբերմանը, տրանսպորտային միջոցներին, տպագրական ծառայություններին, թերթերի և ամսագրերի բաժանորդագրությանը, կրթական բարեփոխումներին և կարիերայի կենտրոնին, մարքեթինգին և գովազդին, գործուղմանը, ուսանողների ինքնակառավարման մարմիններին, կրթաթոշակներին և այլն:

ԳՊՀ-ն մշակել է ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմունքներ, այնուամենայնիվ ֆինանսական կառավարման համակարգը չի արտացոլում ռեսուրսների ծախսն ըստ ռազմավարական ուղղությունների /հետազոտական գործընթացների ընդլայնում, միջազգայնացման գործընթացի կայունության ապահովում/: Ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմունքներում սահմանվել են ֆինանսների կառավարման և արդյունավետության գնահատման մեթոդներ, սակայն դրանց կիրառումը հստակ ապահովված չէ: Բացակայում են ծախսային արդյունավետության վերլուծություններ: ՄՈՒՀ-ում նկատվում է լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների հայթհայթմանն ուղղված նախաձեռնողականություն՝ ուսանողներին կրթաթոշակներ տրամադրելու համար:

Գավառի պետական համալսարանի 2016-2021թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանում սահմանված չեն գործողությունների իրականացման հստակ ժամկետները ըստ տարիների և դրանց համապատասխան բյուջեի բաշխման համադրությունը:

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն գործունեությունը ապահովելու համար տրամադրվում են ֆինանսական, նյութատեխնիկական ռեսուրսներ: Այդուհանդերձ ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսների համալրման նպատակով ծախսային արդյունավետության գնահատումներ չեն իրականացվում, որի արդյունքում բավարար չափով ուշադրության չեն արժանանում խնդիրների այլընտրանքային լուծման հնարավորությունները:

7.3. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ֆինանսական ռեսուրսների բաշխումը ամրագրված է «ԳՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշիվ» փաստաթղթում: Ֆինանսական կառավարումը իրականացվում է ԳՊՀ կանոնադրությամբ: Ֆինանսական ռեսուրների բաշխումը կատարվում է կարճաժամկետ (տարեկան) կտրվածքով: Կրթական ծրագրերի մակարդակում ֆինանսական պլանավորում չի իրականացվում: ՄԿԾ-ի մակարդակով ֆինանսական հատկացումները փաստացի իրականացվում են ծրագրերի հիման վրա ձևավորված ամբիոնային ծանրաբեռնվածության հաշվարկով: Բացակայում է ֆինանսական ռեսուրսների հատկացումների փաստացի հիմնավորումները: Ինստիտուցիոնալ մակարդակում՝ գործող ՄԿԾ-ների իրականացումն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետության գնահատման

[18] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է ***«.... ունեն՝ գրքերը թվայնացված չեն,....»:***

չափանիշները և ցուցանիշները սահմանված չեն, դրանց ուղղակիորեն առնչվող վերլուծությունը ներկայացված չէ: Բյուջեի ձևավորման կարգը, ֆինանսների բաշխումը, ծախսերի իրականացման հաշվետվությունն իրականացվում են ըստ ՄՈՒՀ-ի գործունեության ոլորտների:

7.4. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Ըստ ինքնավերլուծության համալսարանը տարին մեկ անգամ իրականացնում է ռեսուրսների և ուսումնամեթոդական նյութերի առկա վիճակի հաշվեգրում, որոնց արդյունքներով գնահատում և բարելավում է կրթական միջավայրը: ԳՊՀ-ն մշակել է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման և ուսումնամեթոդական բազայի բարելավման ընթացակարգ: Մշակվել է կրթական միջավայրից դասախոսների, ուսանողների բավարարվածության հարցաթերթեր, սակայն դրանցում ընդգրկված հարցերի ձևակերպումները և 1-5 գնահատման միավորների կամ «այո», «ոչ» պատասխանների կիրառումը թույլ է տալիս գնահատել գոհունակությունը, սակայն չի բացահայտում դասախոսների և ուսանողների կարիքի վերաբերյալ պատկերը: Հարցաթերթիկներում ռեսուրսների բազայի հագեցման խնդիր է բարձրացված, որը մինչ օրս արդիական է:

Համալսարանի նյութատեխնիկական բազայի զարգացումը, ինչը կարևոր է կրթության որակի շարունակական բարելավման և կայունության ապահովման առումով, չի պլանավորվում, իսկ որակի շարունակական բարելավումն ու կայունությունն ապահովելու նպատակով ԳՊՀ-ի ռեսուրսային բազայի արդյունավետությունը վերլուծված չէ:

7.5. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները ԳՊՀ-ում կանոնակարգվում են «ԳՊՀ գործավարության կարգ»-ով, որով սահմանվում է համալսարանում ստացված թղթակցության ընդունումը, գրանցումը, շարժը: Համալսարանում առկա է նաև արխիվի կանոնակարգ:

Համալսարանում տվյալների կառավարման էլեկտրոնային համակարգը ներդրման փուլում է և դեռևս համակարգի գործարկումը ամբողջական չէ, ինչը ՄՈՒՀ-ը իր թույլ կողմերում ևս նշում է:

Տեղեկատվության ապահովումն իրականացվում է ԳՊՀ պաշտոնական կայքի միջոցով, որտեղ նախատեսված են փաստաթղթերի, խորհուրդների որոշումների, գնումների, ԵՄ միջազգային ծրագրերի վերաբերյալ պատուհաններ:

Ամբիոնների հետ աշխատանքը կազմակերպվում է խմբային էլեկտրոնային փոստերի միջոցով:

ԳՊՀ-ում գործում է «Office.365» բազմագործառութային համակարգ:

7.6. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ԳՊՀ-ում առկա են առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ենթակառուցվածքներ՝ անվտանգության ծառայություն, բուժկետ, սննդի կետ: Համալսարանի մուտքն անցաթղթերով է, մասնաշենքերում առկա են տարհանման սխեմաներ: Բուժկետում աշխատում են մեկ բժշկուհի և երկու բուժքույր: Սակայն ուսանողների հետ հանդիպման ընթացքում, պարզվեց, որ չնայած վերջիններս բավարարված են վերոնշյալ ծառայություններից, այդուհանդերձ կան որոշ ծառայություններ, որոնց վերաբերյալ ուսանողների իմացությունը ցածր է, մասնավորապես՝ տարհանման սխեմաների կամ տագնապի հայտարարման ձևերի մասին:

Ուսանողների ֆիզիկական կուլտուրայի դասընթացները կազմակերպվում են երկու մարզասրահում, որոնք ունեն անբավարար պայմաններ՝ բացակայում են սարքավորումները, լոգարանային բարեկարգ պայմանները: Համալսարանը գիտակցում է խնդիրը և քայլեր է ձեռնարկում բարելավման ուղղությամբ. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով

նախարարություն է ներկայացվել մարզասրահի հիմնանորոգման ծրագրի հայտի նախագիծ:

ԳՊՀ շենքային պայմանները հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

7.7. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Համալսարանը չունի ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման քաղաքականություն, ընթացակարգեր: Որպես մեխանիզմներ կիրառվում է միայն հարցումների եղանակը: ԳՊՀ-ում լրացվում է կրթական միջավայրից դասախոսների և ուսանողների բավարարվածության հարցաթերթ: Դասախոսների շրջանում իրականացվում է հարցումներ կրթական միջավայրից բավարարվածության վերաբերյալ: Փորձագիտական այցի ընթացքում ևս տարբեր շահակիցներ նշեցին, որ ռեսուրսայի բազան հարստացման և արդիականացման կարիք ունի: Այդուհանդերձ որպես այդպիսին վերլուծություններ ներկայացված չեն, հարցի դիմաց որոշակի տոկոսներ են նշված, հարցաթերթը չունի մեթոդաբանություն, ընտրանքի հիմնավորում, հարցման անցկացման մեթոդաբանություն, հստակ չէ իրականացման հաճախականությունը: Հարցաթերթում գնահատման սանդղակից չի երևում՝ որն է առավելագույնը, որը նվազագույնը: Ավելին դեռևս 2012թ.-ի վերհանվել են խնդիրներ, որոնք մինչ օրս ակտուալ են:

Գործիքների հուսալիության, վավերության վերաբերյալ տվյալներ ներկայացված չեն, բացակայում են արդյունավետության վերաբերյալ տվյալները ու վերլուծությունները:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համալսարանը տրամադրում է նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ կրթական ծառայությունների մատուցման, իր առաքելության և նպատակների իրականացման համար: Համալսարանը լսարանային պայմաններով հիմնականում ապահովված է, սակայն լսարանների և լաբորատորիաների հիմնական մասը հագեցված չեն բավարար նյութատեխնիկական բազայով, մասամբ համապատասխանեցված չեն նաև ինտերակտիվ ուսումնառություն իրականացնելու համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ կարիքները բացահայտող հստակ մեխանիզմների ստեղծումը կնպաստի ՄԿԾ-երի իրականացմանը անհրաժեշտ ուսումնական միջավայրի գնահատմանը, առկա խնդիրների վերհանմանը և արդյունավետության բարձրացմանը: Չնայած, որ ներկայումս համալսարանի շենքային ռեսուրսները բավարար են, սակայն երկարաժամկետ կտրվածքով դրանք ռիսկային են: ՄՈՒՀ-ը կարիք ունի նորագույն սարքավորումների, քանի որ դա կբարելավի ուսումնական գործընթացը, ինչպես նաև կնպաստի ուսանողների և ՊԴ կազմի մոտիվացիայի բարձրացմանն ու հետազոտական գործունեության իրականացմանը: ՄՈՒՀ-ի գրադարանները նույնպես կարիք ունեն նորագույն գրականության, նաև՝ թվայնացման:

Համալսարանի բյուջեն հիմնականում ձևավորում է ուսանողների վարձավճարների հաշվին: Ֆինանսական ռեսուրսների կառավարման հստակ համակարգի, ինչպես նաև ֆինանսական կայունությունը երաշխավորող հստակ մեխանիզմների բացակայության պատճառով, փորձագիտական խումբը գործող ծրագրերի և այլ ծառայությունների շարունակականությունը ռիսկային է համարում: Ֆինանսական միջոցների ճիշտ բաշխման շնորհիվ և հստակ պլանավորման միջոցով միայն ՄՈՒՀ-ը կարող է նկատելի առաջընթաց գրանցել՝ հնարավորություն ունենալով ապահովելու ՄԿԾ-երի արդյունավետ իրականացումը: Այն հանգամանքը, որ Ֆինանսական կառավարման համակարգը չի ենթադրում ռեսուրսների հստակ բաշխում ըստ ռազմավարական գերակա ուղղությունների, կարող է հանգեցնել լրացուցիչ դժվարությունների ռազմավարական նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար և արդյունքում ձախողվի ռազմավարության իրականացումը: Ֆինանսական ռեսուրսների ծախսն ըստ ռազմավարական զարգացման ծրագրի նպատակների և ուղղությունների հնարավորություն կտա ըստ հատկացումների ծավալների հասկանալ, թե որքանով է համալսարանը կարևորում այս կամ այն ոլորտը և ինչպիսին է այդ հատկացումների դինամիկան: Իսկ ֆինանսական միջոցների տեղաբաշխման և օգտագործման

արդյունավետության վերլուծությունը թույլ կտար գնահատել ու վերլուծել համալսարանի ֆինանսական կայունության ցուցանիշները և զարգացման հնարավորությունները: Համալսարանը ձգտում է ընդլայնել և զարգացնել ռեսուրսային բազան, սակայն ֆինանսական ռեսուրսների սահմանափակ լինելու պատճառով ռազմավարական պլանով նախատեսված խնդիրներն ամբողջությամբ իրականացնելու համար կարող են խնդիրներ առաջացնել: Ֆինանսական կառավարման ռազմավարության առկայությունը կապահովի ոչ միայն ծախսային արդյունավետություն, այլ կնպաստի ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացմանը՝ ներգրավելով գործընկեր կազմակերպությունների, ինչպես նաև ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների ու խնդիրների որակյալ և արդյունավետ իրականացմանը:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության ոլորտների կանոնակարգերը թույլ են տալիս եզրակացնել, որ ԳՊՀ-ում այդ ոլորտների գործունեությունն ապահովող առկա մարմիններն (գործավարությունը, արխիվը) ունեն անհրաժեշտ փաստաթղթեր, որոնց հիման վրա կարող են իրականացնել իրենց գործառույթները: Սակայն համալսարանում տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու միասնական մոտեցման որդեգրումը, ինչպես նաև տեղեկատվության կառավարման էլեկտրոնային համակարգի ամբողջական գործարկումը հնարավորություն կտա համակարգելու անհրաժեշտ տեղեկատվության քանակը, դրա ստացման, ուսումնասիրության, վերլուծության և տարածման աշխատանքները:

ՄՈՒՀ-ը ուսումնական գործընթացի կազմակերպման համար ստեղծել է անվտանգ միաջավայր: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը պետք է մշտական ուշադրության տակ պահի նաև հատուկ կարիքներ ունեցող ուսանողների և էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն ու կարիքների վերհանումը՝ հնարավորինս նպաստավոր պայմաններ ստեղծելով վերջիններիս ներգրավմանը, ինտեգրմանն ու հարմարմանը ուսանողական կյանքին: Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար ենթակառուցվածքային ռեսուրսներով ապահովելու միջոցառումների բացակայությունը խոչնդոտում է ՄՈՒՀ-ի հնարավոր դիմորդների քանակի աճին: Հատուկ կարիք ունեցող ուսանողների համար ապահով և անվտանգ միջավայրի ստեղծումը կարող է նպաստել այդպիսի կարիքներով դիմորդների հոսքին:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության ու արդյունավետության գնահատման մեխանիզմների համակարգված կիրառումը հնարավորություն կտա ուսանողներին և դասախոսներին արտահայտել իրենց կարծիքը ու կարիքները ռեսուրսների տարբեր ասպեկտների վերաբերյալ: Այդ տեղեկատվությունը կարող է օգտագործվել ՄՈՒՀ-ի կրթական անհրաժեշտ միջավայրի ձևավորման և հետագա բարելավման համար:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով այն, որ սահմանված առաքելության արդյունավետ իրականացման համար ՄՈՒՀ-ում առկա ռեսուրսները բավարար չեն, սահմանափակ միջոցներ է տրամադրվում ուսումնական միջավայրի ստեղծման համար, ՄԿԾ-ների դասավանդման և ուսումնառության մեթոդների համար ՄՈՒՀ-ում միշտ չէ, որ կան համապատասխան նյութատեխնիկական բազա, ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները համակարգված չեն, առկա չէ ֆինանսական ռեսուրսների կառավարման հստակ համակարգ, դեռևս ամբողջովին չի գործարկվում տեղեկատվության էլեկտրոնային կառավարման համակարգը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն չի բավարարում չափանիշ 7-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 7 –ի պահանջներին ***գնահատում է անբավարար:***

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ՓԱՍՏԵՐ

8.1. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ԳՊՀ-ում առանձին փաստաթղթի ձևով բացակայում է հաշվետվողականության սահմանված կարգը, որտեղ ամրագրված կլիներ, թե համալսարանը կամ նրա ստորաբաժանումները, ինչ պարբերականությամբ և ում պետք է ներկայացնեն իրենց գործունեության մասին հաշվետվություններ, սակայն փաստացի որոշակի համակարգ գործում է: ԳՊՀ հաշվետվողականությունը համալսարանի գործունեության գրեթե բոլոր բնագավառների ու հիմնախնդիրների վերաբերյալ ապահովվում է ռեկտորի և բոլոր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների միջոցով, որոնք քննարկվում են համալսարանի խորհրդում:

Ռեկտորի տարեկան հաշվետվությունները հասանելի են համալսարանի կայքէջում, սակայն հաշվետվություններում գրեթե բացակայում են վերլուծական տվյալներն ուսումնական գործընթացի, ռազմավարական նպատակների, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների ծախսային արդյունավետության վերաբերյալ: Այնուամենայնիվ համալսարանում բացակայում են հաշվետվողականության ապահովման եղանակների արդյունավետության ստուգման մեխանիզմներն ու գործիքները:

8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ԳՊՀ-ում ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության, հրապարակայնության և հասարակությանը հասանելի դարձնելու հիմնական գործիքներ են Գավառ համալսարանական թերթը, Քյավառ հեռուստաընկերությունը, Մամուլը ԳՊՀ-ի մասին ալբոմ ժողովածուն, համալսարանի պետական կայքէջը, ուսանողի և դասախոսի ուղեցույցները և այլն: ԳՊՀ-ը կարևորում է հանրության իրազեկումը՝ որպես ՄՈՒՀ-ի վարկանիշի բարձրացման և դիմորդների ներգրավման միջոց:

Թափանցիկության ապահովման նպատակով համալսարանի կայքէջում տեղադրված են համալսարանի պատմության համառոտ ակնարկը, ռեկտորի տարեկան հաշվետվությունները, տեղեկատվություն համալսարանի ուսումնական, գիտական գործընթացների, համագործակցության մասին, ուսանողական կյանքի ու նորությունների վերաբերյալ: Կայքէջում բացակայում են հարցումների արդյունքները կամ դրանց վերլուծությունները, ՄԿԾ-ների իրականացման որակի վերաբերյալ տեղեկատվությունը: Ինտերնետային կայքէջի թարմացման մեխանիզմները ևս բացակայում են (մասնավորապես՝ ինչպիսի հաճախականությամբ է կայքէջում ներկայացված տեղեկատվությունը թարմացվում, ինչ մոտեցմամբ և այլն):

2010թ.-ից հիմնադրվել է Համալսարանի հանրության հետ կապերի և լրատվության բաժինը, որը զբաղվում է հասարակայնության հետ կապերի ձևավորման ու ամրապնդման հարցերով: Այդուհանդերձ, գործընթացների թափանցիկության և հասանելիության ապահովման մեխանիզմների արդյունավետությունը վերլուծված չէ: Գործընթացների, ընթացակարգերի թափանցիկության ապահովման հստակ քաղաքականությունը ՄՈՒՀ-ում բացակայում է: Համալսարանում բացակայում են նաև տեղեկատվության տարածման քաղաքականության սկզբունքները:

8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հասարակության հետ հետադարձ կապն ապահովելու, այդ հարաբերությունները համակարգելու և համալսարանի աշխատանքն ավելի բաց ու թափանցիկ դարձնելու նպատակով

համալսարանն իրականացնում է սեփական գործունեության լուսաբանման աշխատանքներ՝ կազմակերպելով մամլո ասուլիսներ ու հարցազրույցներ, օգտագործում է իր պաշտոնական վեբ-կայքի հնարավորությունները, ԳՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կայքէջը և այլն: Որպես ոչ պաշտոնական հետադարձ կապի մեխանիզմներ են ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջում տեղադրված ՄՈՒՀ-ի կոնտակտային տվյալները, ԳՊՀ վստահության արկղիկը, հակակոռուպցիոն բլոգը: Որպես ոչ ֆորմալ մեխանիզմ դիտարկվում է ռեկտորի, պրոռեկտորիների, ֆակուլտետի դեկանների, ամբիոնների վարիչների կողմից արտաքին և ներքին շահակիցների ընդունելությունները: Այնուամենայնիվ, համալսարանում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման հստակ քաղաքականություն դեռևս մշակված չէ, կիրառվող մեխանիզմների արդյունքների վերլուծություններ գրեթե չկան: ԱՐԱՐԱՏ ծրագրի շրջանակներում իրականացվել է գործատուների և շրջանավարտների հարցում, սակայն նրանց հետ կապը կայուն չի կարելի համարել:

8.4. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ԳՊՀ-ն հարակությանը տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն, իրականացնում է տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ մեկամյա դասընթացներ, համալսարանի պրոֆեսորների մասնակցությամբ պատրաստում և հեռարձակում է հաղորդումներ, մարզի դպրոցներին է առաքում ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուներ, Գավառի մանկատան համար կազմակերպում է գրական-գեղարվեստական ծրագրեր, մեթոդական աջակցություն է ցուցաբերում մարզի մանկավարժներին, հնարավորություն է ընձեռում ՄՈՒՀ-ի ամսագրում տպագրվելու: Սակայն մշակված չեն հասարակությանը գիտելիքի փոխանցման, ինչպես նաև լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականություն և ռազմավարություն, ինչպես նաև ընթացակարգեր:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՊՀ-ում հաշվետվողականության ապահովման համակարգը հիմնականում սահմանափակվում է ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա կառուցված ռեկտորի տարեկան հաշվետվությամբ, որը զետեղվում է նաև համալսարանի պաշտոնական վեբ-կայքում արտաքին լսարանի համար՝ դրանով իսկ ապահովելով հասարակության իրազեկումը ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ: Ռեկտորի հաշվետվությունները կազմվում են հիմնականում ըստ գործունեության ոլորտների, այլ ոչ թե ըստ ռազմավարական ծրագրի նպատակների կամ խնդիրների, որը հնարավորություն կտար մշտապես գնահատել ՌԾ-ով սահմանված խնդիրների արդյունավետ իրականացումը, ձեռքբերումներն ու բացթողումները՝ համապատասխանաբար մատնանշելով բարելավման անհրաժեշտություն ունեցող կետերը: Համալսարանում չի վերլուծվում հաշվետվողականության կիրառվող մեխանիզմի արդյունավետությունը, որը կօգներ գնահատելու, թե որքանով է ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը նպաստում ռազմավարական նպատակների ձեռքբերմանն ու կառավարման համակարգի բարելավմանը: Դժվար է գնահատել, թե հաշվետվությունները որքանով են փոխկապակցված ՌԾ-ի իրականացման ժամանակացույցի գործողությունների հետ: Համալսարանում գործում են ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանն ապահովվելու որոշ մեխանիզմներ, սակայն վերջիններս ավելի շատ միտված են հասարակության տեղեկացմանը:

Թեև ՄՈՒՀ-ը հասարակության հետ կապեր ձևավորել է, այդուհանդերձ, հետադարձ կապի ապահովմանն ուղղված քաղաքականության բացակայությունը և կայուն մեխանիզների ոչ լիարժեքությունը (հատկապես կրթական գործընթացների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքը), լուրջ խոչընդոտ կարող է լինել կրթական գործընթացների բարելավման ու ՄՈՒՀ-ի՝ որպես հանրապետության կրթական ոլորտում բարձրորակ կադրերի պատրաստող կրթօջախի վարկանիշի բարձրացման տեսանկյունից: Շրջանավարտների տվյալների բազան ձևավորման փուլում է, սակայն այն փաստը, որ չեն իրականացվում **տարածաշրջանի աշխատաշուկայի**[19]

[19] Փոփոխվել է համալսարանի դիտողությունների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է *«.... իրականացվում աշխատաշուկայի ամբողջական վերլուծություններ ....»:*

վերլուծություններ, իսկ գործատուների հետ հետադարձ կապը թույլ է, վտանգի տակ է դնում կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումը: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը մասնագետներ է պատրաստում նաև հանրակրթական դպրոցներում աշխատելու համար, այդ ոլորտի հետազոտությունների բացակայությունը մտահոգման տեղիք է տալիս՝ ՄՈՒՀ-ի ազդեցությունը հանրակրթական ոլորտի զարգացման և կատարելագործման գործընթացում նկատելի չէ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում ակտիվ են հասարակությանը գիտելիքի փոխանցման և լրացուցիչ կրթական ու խորհրդատվական ծառայությունների իրականացման միջոցառումները, սակայն գտնում է, որ պետք է հստակեցնել ռազմավարությունը, ընթացակարգերը, քանզի վերջիններիս արդյունավետ, համակարգված իրականացումը կնպաստի ՄՈՒՀ-ի վարկանիշի բարձրացմանն ու դիմորդների թվի աճին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Հաշվի առնելով, որ ԳՊՀ-ը ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը, ստեղծել է հասարակությանն արժեքների փոխանցման մեխանիզմներ, հաշվետվողականության համակարգի ներդրման ու հասարակության հետ հետադարձ կապի ամրապնդմանն ուղղված ՄՈՒՀ-ի ջանքերը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 8 -ի պահանջներին ***գնահատում է բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Արտաքին համագործակցության ծրագրերի պատշաճ իրականացումը համալսարանը սահմանել է որպես առաքելության մի մաս: Այն արտացոլված է նաև ՌԾ-ում, մասնավորապես՝ նախանշվում է համալսարանի ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության խրախուսման, միջազգային ծրագրերին անդամակցության, կրկնակի և համատեղ աստիճանաշնորհմամբ կրթական ծրագրերի իրականացման, միջազգային գիտաժողովներին գիտամանկավարժական կազմի անդամների մասնակցության, միջազգային գրախոսվող գիտական պարբերականներում հետազոտությունների արդյունքների հրապարակման խրախուսման կարևորության մասին:

Փորձի փոխանակմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի զարգացման նպատակով արտաքին կապերի հաստատումը խրախուսող ընթացակարգեր դեռևս մշակված չեն, այդուհանդերձ ՄՈՒՀ-ի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը սահմանված է: Համալսարանի միջազգայնացման զարգաման ուղղությամբ ՄՈՒՀ-ի կողմից ֆինանսական հատկացումներն իրականացվում են բացառապես միջազգային ծրագրերի շրջանակներում: Միջազգային համագործակցության խթանման նպատակով համալսարանի կողմից համապատասխան ֆինանսական միջոցներ չեն հատկացվում: ՄՈՒՀ-ի տարեկան ֆինանսական պլանավորման մեջ և ծախսերում դրանք արտացոլված չեն:

Համալսարանն իր գործունեության կարևոր նպատակներից է համարում արտաքին կապերի ընդլայնումը և եվրոպական ծրագրերին անդամակցումը: Սակայն, համալսարանի գործողությունների պլանում, որը պետք է բխի ռազմավարական ծրագրից, սահմանվել են միայն միջազգայնացման գործընթացի երկու արդյունքային ցուցանիշներ՝ «միջազգային բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում հրատարակումների քանակ» և «միջազգային գիտաժողովներին մասնակցած դասախոսների քանակ, տպագրությունների քանակի աճ»: Արտաքին կապերին անդրադարձ չկա:

Համալսարանը կարևորում է Հայաստանի և զարգացած պետությունների առաջատար ՄՈՒՀ-երի փորձի ուսումնասիրման և տեղայնացման գործընթացները, սակայն դրանք ռազմավարությունում և գործողությունների ծրագրում նույնպես հստակ արտացոլված չեն:

ՄՈՒՀ-ի կողմից մշակված մի շարք փաստաթղթերում կարևորվում է արտաքին կապերի ընդլայնման և միջազգայնացման նպատակը, սակայն, այդ նույն փաստաթղթերում սահմանված չեն արտաքին կապերի ընդլայնման և միջազգայնացման սկզբունքները, իրականացման քայլերն ու մեխանիզմները, որոնց իրագործմամբ հնարավոր կլինի ապահովել ՄՈՒՀ-ում կազմակերպվող բարձրագույն կրթության բովանդակային և/կամ կառուցվածքային բարեփոխումները, ՄՈՒՀ-ի միջազգայնացման գործընթացը, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը և նյութատեխնիկական վերազինումը:

Ֆակուլտետների և ամբիոնների մակարդակով խրախուսվում է արտաքին կապերի ակտիվացումը և միջազգայնացմանը միտված ծրագրերի իրականացումը: Որոշ ուսանողներ և դասախոսներ ներգրավված են փոխանակման ծրագրերում:

Ըստ ինքնավերլուծության ԳՊՀ-ը պարբերաբար կատարում է արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ, որի վերաբերյալ համապատասխան ուսումնասիրություններն ու վերլուծությունները նույնպես բացակայում են:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ԳՊՀ-ում բացակայում է համապատասխան կառույց, որի գործառույթներից պետք է լինեն միջազգային համագործակցության և արտաքին կապերի հաստատումը և զարգացումը: Ներկայումս տեղական հաստատությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքներն իրականացնում է ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժինը, միջազգային ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքները կատարվում է ապակենտրոնացված ցանցային եղանակով, իսկ նամակագրությունն ապահովում է որակի ապահովման կառույցի աշխատակիցներից մեկը: Վերջինս, այդուհանդերձ, ըստ հաստիքի և աշխատանքային նկարագրի, պատասխանատու է միջազգայնացման գործընթացների որակի ապահովման համար:

Կրթական գործունեության միջազգայնացմանն ուղղված աշխատանքները չունեն հստակ համակարգված բնույթ և հիմնականում չեն փաստաթղթավորվում՝ ծրագրերի հետևանքների, նշանակալի արդյունքների և դրանք հետագայում ՄՈՒՀ-ում տեղայնացման տեսակետից:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ՄՈՒՀ-ն ունի համագործակցության պայմանագրեր ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան մի շարք կազմակերպությունների հետ:

ՄՈՒՀ-ը ներգրավված է 22 միջազգային ծրագրում, այդ թվում՝ Եվրոպական Միության 11 TEMPUS ծրագրերի (ARARAT, ATHENA, ARMENQA, GOVERN, HEN.GEAR, LAMANCHE, LeAGUe, PACT, PICASA, RETHINKe, VERITAS), երեք ERASMUS.MUNDUS ծրագրերի (EURO-EAST, HERMES, TEMPO), մեկ ERASMUS+DOCMEN ծրագրի և Սևծովյան տարածաշրջանային մեկ ծրագրի (BLACK-SEA-Սևծովյան տարածաշրջանային զբոսաշրջության ուղիների որոնում): Այդ ծրագրերի շրջանակներում համագործակցում է շուրջ 75 միջազգային կազմակերպության հետ: Համալսարանը կապեր ունի Հայաստանում գործող մի շարք ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ: Բավականին ակտիվ է համագործակցությունը ՀՀ Գեղարքունիքի

մարզում գործող տարբեր կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ պրակտիկաների կազմակերպման նպատակով:

RETHINKe ծրագրի շրջանակում Իսպանիայի Կորունա համալսարանի հետ համատեղ իրականացվում է «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությամբ կրկնակի դիպլոմի շնորհման ծրագիր: Միջազգային ծրագրերի շրջանակներում որոշ աշխատակիցներ մասնակցել են սեմինարների, վերապատրաստումների, աշխատաժողովների:

ՄՈՒՀ-ն իրականացնում է ՄԿԾ-ների բենչմարքինգ միայն Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության ուսումնական հաստատությունների շրջանում: Բենչմարքինգի իրականացման վերաբերյալ առկա են որոշ ձևակերպումներ, սակայն կիրառվող մեթոդաբանությունը հստակ չէ, քանի որ փոխառումները հստակ արտացոլված չեն:

Չնայած որ ՄՈՒՀ-ը ամեն կերպ կարևորում է արտաքին կապերի ընդլայնումը և միջազգայնացման գործընթացը՝ հստակ ձևակերպված չեն համագործակցության շրջանակներում ձեռքբերված նվաճումները, համալսարանի կողմից դեռևս գնահատված չէ համագործակցության փաստացի կամ գոնե հնարավոր ազդեցությունը ՄԿԾ-ների և ՄՈՒՀ-ի այլ ծառայությունների որակի վրա:

Միջազգայնացմանն ուղղված գործունեության արդյունավետությունը դեռևս ՄՈՒՀ-ում ուսումնասիրված չէ, բացակայում են համապատասխան վերլուծություններ:

ՄՈՒՀ-ի գործունեության շրջանակներում ձեռքբերված լավագույն փորձի տարածման ուղղությամբ դեռևս հստակ քայլեր չեն ձեռնարկվել:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Միջազգայնացման գործընթացների խթանման համար ՄՈՒՀ-ը կարևորում է ուսանողների և դասախոսների կողմից օտար լեզվի տիրապետումը: Այդ նպատակով 2007թ.-ից ԳՊՀ-ն անվճար իրականացնում է վերապատրաստման դասընթացներ ՊԴ կազմի և ուսանողների շրջանում օտար լեզվի մակարդակը բարձրացնելու նպատակով: 2014թ.-ից Ամերիկյան համալսարանի հետ համագործակցության շնորհիվ, իրականացվում են անգլերենի ուսուցման/վերապատրաստման դասընթացներ: 2006թ.-ից կազմակերպվում են օտար լեզվի վերապատրաստման դասընթացներ դասախոսների և ուսանողների շրջանում: Սակայն, ՄՈՒՀ-ում սովորող ուսանողների 12%-ն է տիրապետում օտար լեզվի, իսկ 2%-ը՝ ընդհանրապես հետաքրքրված չէ տիրապետելու օտար լեզվի: Իսկ իրականացված վերապատրաստումների արդյունավետությունը դեռևս գնահատված չէ:

Թեպետ համալսարանը կարևորում է կարողությունների հզորացման գործընթացը, որի մասին վկայում են նաև մասնակցությունը միջազգային ծրագրերին, այդուամենայնիվ համալսարանի ուսանողների և դասախոսների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակ բարձր չէ, որի մասին ինքնավերլուծության մեջ ՄՈՒՀ-ը ևս նշում է: Հարկ է նշել, որ թեև օտար լեզվով դասավանդվող ՄԿԾ-ներ չկան, ներգնա շարժունություն ապահովելու նպատակով մշակվել են օտարալեզու դասընթացներ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՊՀ-ն կարևորում է արտաքին համագործակցության ծրագրերի պատշաճ իրականացումը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ը ձգտում է ստեղծել միջազգայնացմանը նպաստող միջավայր: Սակայն միջավայրի զարգացմանն ուղղված ռազմավարական մոտեցումների, խնդիրների ու դրանց լուծման քայլերի, ժամանակացույցի, ուսանողներին և դասախոսներին ընդգրկման սկզբունքների ու մեխանիզմների հստակ բացակայությունը սահմանափակում է կատարվող գործընթացների արդյունավետ և համակարգված իրականացմանը: Վերջիններիս մշակումը համալսարանին կարող է օգնել նաև հստակեցնելու գործողությունները, առավել ակտիվացնել գործնական համագործակցությունը ուսումնական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների և գիտական կենտրոնների հետ՝ նպաստելով ուսանողների ու դասախոսների շարժունությանը: Արտաքին կապերի հաստատումը խրախուսող առանձին փաստաթղթավորված ընթացակարգերի բացակայությունը խոչընդոտում է փորձի փոխանակմանը

և միջազգայնացմանն ուղղված գործողությունների ուղղորդված իրականացումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանում արտաքին կապերի և միջազգային համագործակցությանն ուղղված աշխատանքների ներկայիս համակարգումը բավարար է, սակայն ընդլայնման ու զարգացման համար կարևոր է կառույցի ձևավորումը: Համալսարանում արտաքին կապերի և միջազգային համագործակցության կառույցի բացակայությունը նվազեցնում է արտաքին կապերի ամրապնդման և միջազգայնացման գործընթացների լիարժեքորեն, համակարգված և հետևողականորեն ապահովման հնարավորությունը: Համապատասխան ստորաբաժանման առկայությունը, որի կանոնադրական խնդիրները կլինեն հստակ ձևակերպված, իսկ աշխատակիցները կունենան իրենց պարտականությունների և գործընթացների հստակ նկարագրություններ, պետք է ապահովի արտաքին կապերի և միջազգայնացման ծրագրերի մշակման և արդյունավետ իրականացման գործընթացները, ինչպես նաև՝ դրամաշնորհային ծրագրերի կառավարումը: Վերջինս կնպաստի նաև համալսարանի կողմից իրականացվող արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացի ապահովման քաղաքականության հստակեցմանը:

Միջազգային համագործակցության խթանման նպատակով ֆինանսական ռեսուրսների բացակայությունը խոչնդոտում են տեղական և միջազգային հաստատությունների ու կառույցների հետ արդյունավետ համագործակցության գործընթացին՝ համապատասխանաբար սահմանափակելով ՄՈՒՀ-ի գործունեությունը և վտանգելով ծրագրի շարունակականությունը: Նոր ֆինանսական աղբյուրների ուղղությամբ համալսարանի նախաձեռնողական քայլերը կարող են նպաստել ՊԴ կազմի և ուսումնառողների շարժունության ավելացմանը:

Հարկ է նշել, որ ԳՊՀ-ն իր գործունեության ընթացքում ձգտում է ներդնել միջազգային լավագույն փորձը և համապատասխանաբար բարելավել կրթական գործունեությունը: Սակայն միջազգայնացմանը միտված աշխատանքները չեն կրում համակարգված բնույթ և հիմնականում չեն փաստաթղթավորվում, մասնավորապես՝ ինչպիսի հետևանք կարող է կամ պետք է ունենա մասնակցությունը միջազգային ծրագրերին և ինչպես ու երբ պետք է այն տեղայնացվի համալսարանում:

Միջազգային համագործակցության արդյունավետության վերաբերյալ հետադարձ կապի ապահովումը հնարավորություն կընձեռի նաև նորարական մոտեցումներ կիրառել համալսարանի կրթական գործընթացներում՝ բարելավելով կրթական ծրագրերի որակը: ՄՈՒՀ-ում արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման գործընթացները չեն կապվում ներքին շահակիցների կարիքների և պահանջների հետ:

Փորձագիտական խումբը ողջունում է միջազգային դրամաշնորհային ծրագրերում համալսարանի ակտիվ ներգրավվածությունը, քանի որ վերջիններս հնարավորություն են տալիս ՄՈՒՀ-ին ընդլայնել համագործակցության շրջանակը, նպաստել ՄԿԾ-ների և այլ կրթական ծառայությունների շարունակական բարելավմանը:

ԳՊՀ-ը համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների հետ, սակայն այդ համագործակցությունների շոշափելի ազդեցությունները վերլուծված չեն և թույլ չեն տալիս հիմնավորել, թե որքանով են նպաստել ուսումնական միջավայրի, կրթական ծրագրերի, դասավանդման և ուսումնառության մեթոդների կատարելագործմանը: Համագործակցությունների արդյունավետության գնահատման մեխանիզմների և վերլուծությունների բացակայությունը դժվարեցնում է հետագա գործունեության հստակ և իրատեսական պլանավորումն ու արդյունավետ իրականացումը:

Չնայած միջազգային ծրագրի շրջանակում ԳՊՀ-ը հնարավորություն է ստացել մեկ մասնագիտության ուղղությամբ իրականացնել կրկնակի դիպլոմի շնորհում, այնուամենայնիվ ՄՈՒՀ-ն իրականացնում է ծրագրերի բենչմարքինգ միայն Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության ուսումնական հաստատությունների շրջանում: Այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում չի իրականացվում միջազգային բենչմարքինգ, սահմանափակում է միջազգային մակարդակով մրցունակ կադրերի պատրաստումը, ինչպես նաև չի նպաստում ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ների բովանդակային

բարելավումներին՝ այլ նմանատիպ ՄԿԾ-ներին համահունչություն ապահովելու տեսանկյունից:

Թեպետ համալսարանը կարևորում է կարողությունների հզորացման գործընթացը, որի մասին վկայում են նաև մասնակցությունը միջազգային ծրագրերին, այդուամենայնիվ միջազգայնացման գործընթացների խթանման համար համալսարանի ուսանողների և դասախոսների շրջանում օտար լեզուների իմացությունը չունի բարձր մակարդակ: ՄՈՒՀ-ը գիտակցում է օտար լեզվի իմացության պատշաճ մակարդակ ապահովելու անհրաժեշտությունը, իրականացնում է դասընթացներ, սակայն օտար լեզուների իմացության աստիճանը կամ տիրապետման մակարդակը դեռևս ցածր է թե ուսանողների, թե դասախոսների շրջանում: Հաշվի առնելով կրթության զարգացման ժամանակակից միտումները՝ օտար լեզվի թերի իմացությունը՝ թե դասախոսների, թե վարչական աշխատակազմի աշխատակիցների և ուսանողների, մեծապես կխոչընդոտի ՄՈՒՀ-ի միջազգայանացումն ու դրա զարգացումը:

Միջազգային ծրագրերի շրջանակներում ձեռքբերված լավագույն փորձի տարածման ուղղությամբ դեռևս հստակ քայլեր չեն իրականացվում, մինչդեռ դրանք պետք է լինեն համալսարանի ռազմավարական ուղղությունների կարևոր բաղադրիչներից:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով ՄՈՒՀ-ի միջազգայնացմանն ուղղված քայլերի ու գործունեության առկայությունը, միջազգային ծրագրերին ակտիվ մասնակցությունը, ուսանողների և դասախոսների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակի բարելավմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում չափանիշ 9-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 9 -ի պահանջներին ***գնահատում է բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՓԱՍՏԵՐ

10.1. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԳՊՀ որակի ներքին ապահովման (ՈՆԱ) համակարգի գործունեության մեթոդական հիմք է ծառայում 2015թ. համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատած «Որակի ապահովման ձեռնարկ»-ը, որտեղ արտացոլված են որակի ապահովման ընդհանուր դրույթները, որակի ապահովման համակարգի առկա իրավիճակը ԳՊՀ-ում, կրթության որակի ապահովման հիմունքները, կրթության որակի ապահովման համակարգում ներգրավված մարմինները և դրանց գործառույթները, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակի ապահովման հիմունքները և որակի ներքին ապահովման համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումների կառուցվածքային գծապատկերը: Ձեռնարկում հստակ ձևակերպված չէ ԳՊՀ ՈՆԱ նպատակը, գործընթացների որակի ապահովան մեխանիզմներն ու գործիքակազմը: ԳՊՀ որակի ապահովման ձեռնարկում հստակ սահմանված չեն, թե ՄՈՒՀ-ը ինչպես է ընկալում որակի ապահովումը: ՈԱ ձեռնարկում ՈԱ մեխանիզմների և ՌԾ-ում սահմանված նպատակների կապը արտացոլված չէ: Որպես այդպիսին որակի ապահովման ընթացակարգեր ևս մշակված չեն: Մշակվել

են որոշ գործընթացների վերաբերյալ հարցման անցկացման ընթացակարգեր:

Բացակայում են ՈԱ տարբեր գործընթացների կատարողականի գնահատման ցուցիչները: Ներկայումս համալսարանում որպես ՈԱ հիմնական մեխանիզմ դիտարկվում են հարցումները, որոնք համակարգված կերպով՝ հետադարձ կապի պահպանմամբ, չեն իրականացվում, ինչպես նաև դրանց գործիքակազմի հուսալիությունն ու արդյունավետությունը գնահատված չէ: Իսկ իրականացված հարցումների համընդգրկուն վերլուծությունները բացակայում են: Վերլուծությունների մակարդակով բացակայում են պատճառների, արդյունքների և հետևանքների վերլուծություն: Իրականացված հարցումների ազդեցությունը կրթության որակի ապահովման խնդիրներին ուղղված գնահատված և վերլուծված չէ: Ինչպես նաև հարցումների մեթոդաբանությունը նկարագրված չէ: Առկա չեն հիմքեր առ այն, թե հարցումների միջոցով բացահայտված խնդիրներն ինչ ընթացք են ունենում: Իսկ համալսարանում կատարվող բարեփոխումների հիմքում ոչ միշտ են ընկած վերլուծական տվյալներ:

Իրականացվող այլ ծառայությունների ՈԱ համապատասխան մեխանիզմներ դեռևս ներդրված չեն:

10.2. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2010թ.-ին ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության կազմում ստեղծվել և գործում է որակի ապահովման բաժին, որի գործունեությունը անմիջականորեն վերահսկվում է ուսումնագիտական գծով պրոռեկտորի կողմից: Բաժինը ապահովված է մարդկային, նյութական և ֆինանսկան ռեսուրսներով: Բաժնին հատկացված է աշխատասենյակ, որը ՀԲ դրամաշնորհային ծրագրի շրջանակում համալրվել է անհրաժեշտ գույքով և նյութատեխնիկական ռեսուրսներով: Ներկայումս բաժինն ունի 4 աշխատակից: Աշխատակիցներից մեկը պատասխանատու է միջազգայնացման որակի ապահովման գործառույթների համար: Բաժնի աշխատակցի գործառույթների ուսումասիրությունը ցույց տվեց, որ վերջիններս ավելի շատ միջազգայնացման կազմակերպմանն ու իրականացմանն են միտված, քան նշված գործընթացների որակի ապահովմանը: Ինչ վերաբերում է բաժնի մյուս աշխատակիցների գործառույթներին ու պարտականություններին, վերջիններս հստակ տարանջատված չեն:

Ֆակուլտետներն ունեն որակի ապահովման պատասխանատուներ: Ըստ ինքնավերլուծության ԳՊՀ-ում ամենամյա ինքնագնահատման համար ռեկտորի հրամանով հաստատվում են ինքնավերլուծության գործընթացի կազմակերպման համալսարանական և ֆակուլտետային աշխատանքային խմբեր, որոնցում ընդգրկվում են ուսանողներ, դասախոսներ, ամբիոնների վարիչներ, դեկաններ, փոխդեկաններ, ուսումնաօժանդակ անձնակազմ: Որակի ներքին ապահովման համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումների կառուցվածքային գծապատկերի համաձայն գործում են նաև որակի ապահովման ֆակուլտետային խորհուրդներ, սակայն սահմանված չէ վերջիններիս դերը, աշխատանքային նկարագրեր չկան:

ՈԱԿ աշխատակիցների հավաքագրման գործընթացում մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջները բացակայում են: Հարկ է նշել, որ ՈԱԿ-ի աշխատակիցների կատարողականի գնահատում և կարիքների վերհանում չի իրականացվում, համապատասխանաբար այդ գործընթացներից բխող հատուկ մասնագիտական վերապատրաստումներ չեն իրականացվում /բացառություն են կազմում ՈԱ բաժնի նախկին աշխատակիցները, ովքեր վերապատրաստվել էին ՈԱԱԿ-ի կողմից, սակայն այլևս ՈԱ գործընթացներում ներգրավված չեն/: ՄՈՒՀ-ը տրամադրում է համապատասխան նյութական և ֆինանսական ռեսուրսներ (աշխատակիցների աշխատավարձերի տեսքով) գործընթացներն իրականացնելու համար: Այդուհանդերձ տրամադրված ռեսուրսների արդյունավետության գնահատում չի իրականացվում: Առհասարակ բացակայում են որակի ապահովման գործընթացների արդյունավետության վերլուծությունները:

10.3. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

ԳՊՀ-ն տարբեր ձևերով որակի ապահովման գործընթացներում փորձում է ներգրավել իր

շահակիցներին: Համալսարանը հնարավորություն է տալիս հիմնական շահակիցներին մասնակցել որակի ապահովման բաժնի գործընթացներին: Որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին շահակիցների մասնակցությունն ապահովող հիմնական մեխանիզմը հարցումներն են: Այնուամենայնիվ, հարցումները ոչ միշտ են իրականացվում համակարգված կերպով, և ՄՈՒՀ-ի գործունեության ոչ բոլոր ոլորտներին են անդրադառնում: Թե ներքին, թե արտաքին շահակիցները հիմնականում ներգրավված են որպես հարցվողներ, ՈԱ-ը միտված հարցաշարերի կազմմանը, հարցումների կազմակերպմանն ու անցկացմանը, հարցումների վերլուծությանը ներգրավվածության հիմքեր չկան: Շահակիցների ներգրավվածությունը /հատկապես արտաքին շահակիցների/ որակի ապահովման գործընթացներում թույլ է: Արտաքին շահակիցները հիմնականում մասնակցում են ՈԱ գործընթացներին ՄԿԾ-ների կամ առանձին դասընթացների մակարդակով բարելավման առաջարկությունների ներկայացման տեսքով: Մինչդեռ կապը նրանց հետ կանոնակարգված և ֆորմալ կերպով չի իրականացվում:

10.4. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Համալսարանում որակի ներքին ապահովման համակարգը գործում է արդեն վեց տարի, սակայն համակարգի վերանայման հաստատված քաղաքականություն և ընթացակարգ դեռևս չի մշակված: Որակի ապահովման համակարգի ընթացիկ մշտադիտարկման և գնահատման համակարգ դեռևս ներդրված չէ, համապատասխանաբար բացակայում են նաև արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները: ՊԻԳԲ շրջափուլը դեռևս ամբողջովին փակված չէ: Համալսարանի տարբեր գործընթացները հիմնականում գտնվում են պլանավորման, իրականացման փուլերում, մասամբ իրականացվում են գնահատումներ, իսկ բարելավումները վերլուծական հիմք չեն պարունակում: Չնայած ՄՈՒՀ-ում ամենատարբեր գործընթացները հաճախ վերանայվում են, սակայն հիմնավորված չէ փոփոխությունների անհրաժեշտությունը: Հաճախ վերանայումը գնահատման արդյունքներով չի հիմանվորվում և պայմանավորված չէ ուժեղ և թույլ կողմերի վերլուծությամբ: Որակի համակարգի բենչմարքինգ չի իրականացվել: Որակի մշակույթի ձևավորման մասին գնահատում կատարելը դեռևս վաղ է:

10.5. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Արտաքին գնահատման գործընթացների համար բավարար հիմքեր ապահովելու նպատակով յուրաքանչյուր տարի ռեկտորի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը իրականացնում է ԳՊՀ-ն գործունեության տարեկան ինքնավերլուծություն: Չնայած ամենամյա ինքնավերլուծության իրականացմանը, դուրս բերված խնդիրները չեն արտացոլվում տարեկան պլաններում, չեն ներկայացվել բարելավման պլաններ բացահայտված խնդիրները հաղթահարելու նպատակով:

Աշխատանքներ են տարվում ՏԵՄՊՈՒՍ-ի GOVERN ծրագրի շրջանակում ԳՊՀ-ում Ռեգիստրարի՝ համալիր և բազմագործառութային ծրագրի ներդրման ուղղությամբ, որը ՄՈՒՀ-ի հիմնական գործընթացների կազմակերպման և կառավարման, տեղեկատվության հավաքագրման և պահպանման էլեկտրոնային համակարգ է:

10.6.Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԳՊՀ-ն փորձում է գործընթացների որակի մասին տեղեկատվություն ապահովել ներքին և արտաքին շահակիցների համար: Այդ նպատակով ՄՈՒՀ-ը կիրառում է հետևյալ մեխանիզմները՝ կոլեգիալ կառավարման մարմիններում ներկայացուցիչների առկայություն, ՄՈՒՀ-ի ինտերնետային կայքում նախատեսված բաժնում համապատասխան տեղեկատվության տեղադրում, ռեկտորի տարեկան հաշվետվություններ, տեղեկատվական թերթիկներ, հրատարակած ուղեցույցեր, ձեռնարկներ: ՄՈՒՀ-ը որպես թափանցիկության և հրապարակայնության ապահովման հիմնական մեխանիզմ դիտարկում է կայքը, սակայն ՄՈՒՀ-ի

գործունեության տարբեր ոլորտների կամ գործընթացների որակի վերաբերյալ վերլուծություններ հրապարակված չեն: Թափանցիկության ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատված չէ:

Ավելին՝ 2011-2016 ՌԾ իրականացման գործողությունների պլանում ՄՈՒՀ-ը արդյունավետության գնահատման ցուցիչ սահմանել է կրթության որակի վերահսկման նոր կառուցակարգերի և հաշվետվողականության նոր ձևերի առկայությունը՝ ներքին և արտաքին շահառուների բավարարվածության աստիճանի աճը, սակայն վերջինիս իրականացումը փաստող հիմքերը բացակայում են:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ՄՈՒՀ-ի ջանքերը ՈՆԱ համակարգի ներդրման ու գործարկման ուղղությամբ: ԳՊՀ-ում որակի ներքին ապահովման համակարգը և որակի մշակույթը դեռ կայացման փուլում են: Այնուամենայնիվ, համակարգի արդյունավետ գործարկմանն ուղղված քայլերը դեռևս անհրաժեշտ արդյունքների չեն հանգեցրել: Չնայած ՄՈՒՀ-ը մշակել է որակի ապահովման ձեռնարկ, սակայն հստակեցված և ամբողջական չեն այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտային գնահատել հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավման ընթացքը: Տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների և գործիքակազմի անկատարությունը և վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չեն տալիս գնահատել ՈԱ գործընթացների ազդեցությունը ՄԿԾ-ների և համալսարանի գործունեության բարելավման վրա: Չնայած մշակվել է փաստաթղթային հենքը, ստեղծվել է համապատասխան ստորաբաժանում, այնուամենայնիվ որակի ապահովման համակարգը դեռևս ամբողջովին ինտեգրված չէ ՄՈՒՀ-ի գործընթացներում: Որակի մշակույթի ձևավորում դեռևս կայացման փուլում է, իսկ ՄՈՒՀ-ի գործունեությունը ոչ ամբողջովին է միտված որակի մշակույթի ձևավորմանը: ՊԻԳԲ շրջափուլը դեռևս անբողջովին չի ներդրվել: Հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման, իրականացման, մասամբ նաև գնահատման փուլերում, իսկ բարելավումը իրականացվում է եզակի դեպքերում:

Փորձագիտական խումբը նկատեց, որ թեև որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, այդուհանդերձ որակի ապահովման պատասխանատուների պարտականություններն ու գործառույթներն հստակեցման կարիք ունեն: Այս հանգամանքը մտահոգիչ է այն առումով, որ վերջինս կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ որակի ապահովման գործընթացների կառավարման և հետագա զարգացման տեսանկյունից:

Այն հանգամանքը, որ Որակի ապահովման բաժինը Ակադեմիական քաղաքականության վարչության ենթակայության տակ գտնվող, իսկ վերջինս ուսումնական գծով պրոռեկտորի ենթակայության տակ գործող կառույց է, ռիսկային է դարձնում որակի վերահսկողության և ապահովման գործընթացների անկախությունը:

Այն փաստը, որ բաժնի ներկայիս աշխատակիցների հավաքագրման գործընթացում մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ չեն ներկայացվել, իսկ հետո նրանց համար մասնագիտական վերապատրաստումներ չեն կազմակերպվել, վտանգվում է որակի ապահովման գործընթացների արդյունավետ կազմակերպումը, իսկ նպատակների իրականացումը դարձնում անիրատեսական: Համալսարանը տրամադրում է նյութական ռեսուրսներ որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար, սակայն չի վերլուծվում, թե այդ ռեսուրսները ինչքանով են արդյունավետ տնօրինվում:

Ինչ վերաբերում է ներկայացված ինքնավերլուծության զեկույցին, այն պարունակում է հիմնականում նկարագրական տեղեկատվություն, որը հիմնավորված չէ վերլուծական տվյալներով: Ինքնագնահատման զեկույցը բավականաչափ քննադատական չէ, գնահատման գործընթացների արդյունքները հաճախ ներկայացված չեն: Ուստի և ակնկալվում է, որ պետք է մշակվեն մեխանիզմներ և գործիքներ, որոնց միջոցով կապահովվեն անհրաժեշտ հիմքեր ներքին վերլուծությունների և որակի ապահովման արտաքին գնահատման համար:

Փորձեր են արվում հնարավորինս ընդլայնելու նաև արտաքին շահակիցների

ներգրավվածության աստիճանը, ինչը կավելացնի վստահությունը համալսարանի գործունեության նկատմամբ: Համալսարանը կարող է օգտագործել նաև այն շահակիցների փորձը, ովքեր իրենց կազմակերպություններում զբաղվում են որակի ապահովման գործընթացներով:

Փորձագիտական խումբը որակի ներքին ապահովման համակարգի գործունեության արդյունավետության պարբերաբար գնահատման անհրաժեշտություն է տեսնում: Համալսարանում որակի ապահովման համակարգի վերանայման համակարգված գործընթացի բացակայությունը թերևս բացատրվում է որակի ներքին ապահովման համակարգի դեռևս կայացման փուլում գտնվելով:

ՊԻԳԲ շրջափուլով որակի ապահովման գործընթացների ոչ պարբերական լինելը, այդ գործընթացներին արտաքին շահակիցների պասիվ մասնակցությունը, տեղեկատվության կառավարման համակարգի ոչ լիարժեքությունը (ներառյալ կրթական ծրագրերի վերաբերյալ քանակական և որակական տվյալների հավաքագրման ու վերլուծության գործընթացները և այլն) կարող են խոչընդոտել ՄՈՒՀ-ի գործունեության շարունակական բարելավմանը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ, չնայած որակի ապահովման գործընթացները կանոնակարգող փաստաթղթային հենքի առկայությանը, որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղղությամբ համալսարանում իրականացվող քայլերը համակարգված չեն, ՈԱ համակարգը դեռևս ձևավորման փուլում է, ներդրված որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը բավարար չափով չի կիրառվում գործընթացներում, ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում պասիվ է, իսկ ՈԱ գործընթացերում ներգրավված անձնակազմի մասնագիտական կոմպետենցիաները բավարար չափով ուշադրության չեն անդրադառնում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 10 –ի պահանջներին ***գնահատում է անբավարար:***

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
I. Առաքելություն և նպատակներ	Բավարար
II. Կառավարում և վարչարարություն	Բավարար
III. Կրթական ծրագրեր	Բավարար
IV. Ուսանողներ	Բավարար
V.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարար
VI.Հետազոտություն և զարգացում	Անբավարար
VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Անբավարար
VIII. Հասարակական պատասխանատվություն	Բավարար
IX. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարար
X. Որակի ներքին ապահովման համակարգ	Անբավարար

06 ապրիլի 2017թ.

Անգին Մարտիրոսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Անգին Մարտիրոսյան –2006թ. ավարտել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը (ԵՃՇՊՀ) և ստացել ճարտարագետ-շինարարի դիպլոմավորված մասնագետի որակավորում: Ապա Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան հիդրոտեխնիկայի և ջրային հիմնահարցերի ինստիտուտում եղել է հայցորդ: 2013թ.-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2013թ.-ից ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ) «Նյութերի դիմադրություն» ամբիոնի ասիստենտ, 2015թ.-ից ՃՇՀԱՀ Կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական վարչության պետ: 2005թ.-ից աշխատել է ԵՃՇՊՀ-ում՝ որպես գիտահետազոտական սեկտորի գիտաշխատող, Կրթության բարեփոխումների վարչության մասնագետ, ապա Կրթության որակի գնահատման և վերահսկման բաժնի մասնագետ, Կրթական բարեփոխումների ապահովման բաժնի պետ: 2009թ.-ին եղել է Կրթության ազգային ինստիտուտի Նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների մշակման աշխատանքային խմբի անդամ: Գիտատեխնիկական ամսագրերում 15 հոդվածների, 14 մեթոդական ցուցումների, 1 ուսումնական ձեռնարկի և 1 ուսումնամեթոդական ձեռնարկ հեղինակ է: Մի քանի անգամ եղել է ՈԱԱԿ փորձագետ, ինչպես նաև Համաշխարհային բանկի «Կրթության որակ եվ համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրում որակի խորհրդատու:

Արկադի Պապոյան – 1996թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) և ստացել կենսաքիմիկոսի դիպլոմավորված մասնագետի որակավորում: 1993թ.–1994թ. եղել է Լեհաստանի գիտությունների ակադեմիայի կենսաքիմիայի և կենսաֆիզիկայի ինստիտուտի ուսանող-հետազոտող: 1996թ.-1999թ. եղել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի կենսաքիմիայի ամբիոնի ասպիրանտ: 1999թ.-ից Կենսաբանական գիտությունների թեկնածու է: 1998թ.–2002թ. աշխատել է որպես ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի կենսաքիմիայի ամբիոնի դասախոս: 1999թ.-2007թ.-ը եղել է ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի կենսաքիմիայի ամբիոնի գիտական հետազոտող: 2002թ.-2003թ. աշխատել է որպես «Երեխաների նախաձեռնությունը Հայաստանում» /SIDA/ փորձնական ծրագրի կոորդինատոր, իսկ 2002թ.-2008թ. եղել է ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ: 2008թ.- առ այսօր աշխատում է որպես ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետի տեղակալ, ՀՀ ԿԳՆ Թայեքս ծրագրերի պատասխանատու: 2009թ.-առ այսօր դասավանդում է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնում՝ որպես ավագ դասախոս: 2013թ.-2014թ. հանդես է եկել որպես Բոլոնիայի հետամուտ «Կառուցվածքային բարեփոխումներ» աշխատանքային խմբի անդամ:

Մհեր Մարկոսյան – 1976թ. ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտ «Կիբեռնետիկայի» ֆակուլտետը: 1976-1978թթ. Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի հաշվիչ տեխնիկայի ամբիոնում եղել է որպես ասիստենտ: 1978-1981թթ. եղել է Ն.Է.Բաումանի (տ.գ.թ. –1981) անվան Մոսկվայի բարձրագույն տեխնիկական համալսարանի ասպիրանտ: 1981թ.-ից Ն.Է.Բաումանի անվան Մոսկվայի բարձրագույն տեխնիկական համալսարանի տեխնիկական գիտությունների թեկնածու է: 1981-1984թթ եղել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի հաշվողական տեխնիկայի ամբիոնի ասիստենտ: 1984-1990թթ. եղել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի հաշվողական տեխնիկայի ամբիոնի դոցենտ, ինչպես նաև համակարգչային ցանցերի գիտական խնդիրներով զբաղվող լաբորատորիայի ղեկավար: 1990-1992թթ. աշխատել է «Լոկոս Մարվոլ» Սովետագերմանական համատեղ ձեռնարկության Երևանի ինֆորմացիոն տեխնոլոգիաների կենտրոնում՝ որպես տնօրեն: 1992-ից մինչ օրս Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտի տնօրենը և գլխավոր կոնստրուկտորն է: 2007-2012թթ եղել է Հայ Ռուսական Սլավոնական համալսարանի ԵրԿՄԳՀԻ-ում «Հեռահաղորդակցություններ» բազային ամբիոնի վարիչ: 2008-ից մինչ օրս Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի, Ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր ամբիոնի վարիչ: 2010թ.-ից տեղնիկական գիտությունների

դոկտոր է:

Մարգարեթ Բյուլոու Շրամ – 1970 թ.-ն ավարտել է Ֆրանկֆուրտի Յ.Վ. Գյոթեի անվան համալսարանը: 1986–1996թթ. սովորել է Հանովերի համալսարանում /Լեյբնից համալսարանում/, 2009թ.-ն ավարտել է Համբուրգի համալսարնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր է:
2014թ. թվականից աշխատել է Բարձրագույն կրթության գիտահետազոտական կազմակերպությունում՝ որպես նախագահ, իսկ մինչ օրս աշխատում է որպես նույն կազմակերպության փոխնախագահ, ինչպես նաև գերմանական կրթության և գիտության գիտահետազոտական կենտրոնի, Ռուր-Արևմուտյան կիրառական գիտությունների համալսարանի խորհրդատվական մարմնի անդամ է, Համբուրգի կրթության և գիտության արհմիության և դիտորդական խորհրդի անդամ է: Նա հանդես է գալիս գերմանական մի շարք գիտահետազոտական մամիների ամդամ: Ունի մի շարք որակավորումներ՝ որակի ապահովման, բարձրագույն կրթության դասավանդման, դասավանդման նորարարական մեթոդների կիրառման, ինչպես նաև կառավարման:

Սնադա Սարգսյան – 2016թ.-ն ավարտել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետը, մինչ օրս ՀՀ պետական կառավարման ակադեմիայի նույն ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանող է: մասնակցել է *«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»* հիմնադրամի *«Ուսանողության ձայն»* նախագծի կազմակերպած *«Ուսանող-փորձագետների վերապատրաստման»* եռամսյա դասընթացին, մասնակցել է նաև <<Մտավոր սեփականությունը որպես միջոց գիտելիքների վրա հիմնված տեսությունը զարգացնելու համար>> վերնագրով եռօրյա համաժողովին, ինչպես նաև մասնացել է մի շարք այլ սեմինարների և վերապատրաստումների:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

05.12.2016թ.-08.12.2016թ.

	05.12.2016 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	9:00	9:25	25 րոպե
2	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	9:30	10:30	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ	10:30	11:30	60 րոպե
4	Հանդիպում պրոռեկտորների և ռազմավարական ծրագրի վերանայման պատասխանատուների հետ	11:45	12:45	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ	12:45	13:45	60 րոպե
6	Հանդիպում դեկանների և ակադեմիական քաղաքականության վարչության պետի հետ	14:00	15:00	60 րոպե
7	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ (կադրերի և հատուկ բաժին, շրջանավարտների միության և կարիերայի կենտրոն, հաշվապահություն, հասարակության հետ կապերի և լրատվության բաժին...)	15:15	16:00	45 րոպե
8	Ռեսուրսների դիտարկում (գրադարան, IT կենտրոն, համակարգչային լսարաններ, ստորաբաժանումներ, մարզասրահ, բուժկետ)	16:00	16:45	45 րոպե
9	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ քննարկումներ	17:00	18:00	60 րոպե
	06.12.2016 թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	9:00	9:15	15 րոպե
2	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	9:30	10:30	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունում ներկայացված երեք ՄԿԾ-ների պատասխանատուների, ՄԿԾ-ներն իրականացնող մասնագիտական ամբիոնների վարիչների և ծրագրերը մշակող խմբի հետ	10:45	11:30	45 րոպե
4	Հանդիպում հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հետ (8 հոգի)	11:45	12:30	45 րոպե
5	Հանդիպում համատեղությամբ աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (8 հոգի)	12:45	13:30	45 րոպե
6	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
7	Հանդիպում ՈՒԽ և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ (8 հոգի)	14:30	15:15	45 րոպե
8	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (առկա բակալավրիատ, մագիստրատուրա, 8-10 հոգի)	15:30	16:15	45 րոպե
9	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (հեռակա բակալավրիատ, մագիստրատուրա, 8-10 հոգի)	16:30	17:15	45 րոպե
10	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ քննարկումներ	17:15	18:00	45 րոպե

	07.12.2016 թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	9:00	10:00	60 րոպե
2	Դասալսումներ	10:20	11:30	70 րոպե
3	Հանդիպում շրջանավարտների ներկայացուցիչների հետ	11:45	12:30	45 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ	13:45	14:30	45 րոպե
6	Բաց հանդիպում	14:45	15:15	30 րոպե
7	Ռեսուրսների դիտարկում՝ դեկանատներ, ամբիոններ, լաբորատորիաներ, կաբինետներ	15:15	16:15	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն	16:15	17:00	45 րոպե
9	Փորձագիտական խմբի փակ քննարկումներ	17:00	18:00	60 րոպե
	08.12.2016 թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի փակ քննարկումներ	10:00	12:00	120 րոպե
2	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:00	13:00	60 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:00	15:00	60 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ քննարկումներ	15:00	17:30	150 րոպե
6	Հանդիպում ռեկտորի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չ/Չ
1.	Կառավարման խորհրդի կազմ	2.1
2.	Ստորաբաժանումների աշխատակիցների գործառույթներն ամրագրող փաստաթղթեր	2.1
3.	Արհմիության, իրավաբանական կլինիկա, թանգարան, բժշկական ծառայություն, տնտեսական բաժին, պահեստ, հանրակացարան – կանոնակարգող փաստաթղթային հենք/ կանոնադրություններ	2.1
4.	Գիտական խորհրդի կազմ	2.1
5.	Հակակոռուպցիոն ռազմավարական 2016-2021թթ. ծրագրի իրականացման ժամանակացույցերը՝ պատասխանատուները, կատարման ցուցիչները	2.3
6.	Ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմունք	2.3
7.	Գործատուների կարծիքները որոշ գործընթացների վերաբերյալ	2.4
8.	Իրավական և ենթաօրենսդրական ակտերի վերլուծություն, ներքին իրավական ակտերի բարեփոխումների հիմքեր	2.4
9.	Ստորաբաժանումների, ամբիոնների, ֆակուլտետների աշխատանքային պլանների նմուշներ	2.5
10.	Ստորաբաժանումների, այդ թվում ամբիոնի վարիչի հաշվետվությունների նմուշներ	2.5
11.	Ամբիոնում պահվող փաստաթղթերի ցանկ	3.1
12.	3 ՄԿԾ-ների հեռակայի ուսումնական պլաններ	3.1
13.	Առարկայական ծրագրեր 3 ՄԿԾ-ների համար, այդ թվում հեռակա ուսուցմանը	3.1
14.	ՄԿԾ-ի կայունության և ռիսկայնության վերաբերյալ վերլուծություններ /Տարրական կրթություն, ինֆորմատիկա SWOT/	3.5
15.	Ըստ UNESCO CEPES-ի մշակված դիպլոմի հավելված	3.1
16.	Պրակտիկայի օրագրի, ծրագրի և հաշվետվության նմուշ Պրակտիկայի պայմանագրի օրինակ	3.2
17.	Ամփոփաթերթ, հաճախումների մատյան/դասամատյան	3.2
18.	Դասախոսների դասալսումների ձևաչափ,	3.2
19.	Դեկանների տարեկան ֆակուլտետային հաշվետվություն	3.2
20.	Ուսանողների ինքնուրույն աշխատանքներ՝ ռեֆերատ, կուրսային աշխատանքներ (յուրաքանչյուր մասնագիտությունից 2-ը՝ գերազանց և անբավարար գնահատված), խմբային աշխատանքների նյութեր	3.3
21.	Ուսանողների ավարտական աշխատանքներ՝ թեզեր, դիպլոմային աշխատանքներ (յուրաքանչյուր մասնագիտությունից 3-ը՝ բավարար, գերազանց և անբավարար գնահատված)	3.3
22.	Քննական հարցաշարեր, տոմսեր	3.3
23.	Քննական թեստերի օրինակներ	3.3
24.	Թեզերի պատրաստմանը ներկայացվող պահանջներ	3.3
25.	Ուսանողների ընդունման-ավարտելիության ցուցանիշ վերջին 3 տարվա համար	3.3
26.	Ուսանողների և դասախոսների շարժունությունը կանոնակարգող փաստաթուղթ	3.4
27.	ՄԿԾ-ների բենչմարքինգի փաստաթղթային հիմքեր/ իրականացված վերլուծություններ	3.4
28.	Դասավանդման և ուսումնառության արդյունավետության գնահատման կանոնակարգ	3.5
29.	Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից կազմակերպված հանդիպման, քննարկման հիմքեր /մասնակցության թերթիկ տարեկան մեկ անգամ/	3.5
30.	Ուսանողների տեղափոխությունները առկայից հեռակա և հակառակը/ վերջին 5	4.1

	տարվա համար	
31.	Ուսանողի հետ կնքվող պայմանագրի օրինակ	4.7
32.	Ուսանողի ուղեցույց	4.7
33.	Դասախոսների թղթապանակի օրինակներ, 3 ՄԿԾ-ների ուղղությամբ	5.1
34.	Ուսումնաօժանդակ կազմի /լաբորանտներ, գործավարներ, մեթոդիստներ, գրադարանավարներ/ գործառույթները	5.1
35.	Դասալսումների և հարցումների վերլուծությունների արդյունքները	5.3
36.	Ամբիոնի, ֆակուլտետի խորհրդի , ռեկտորատի, գիտխորհրդի նիստերի համապատասխան արձանագրություններ	5.3
37.	Դասախոսների մասնագիտական վերապատրաստումների ծրագիր, ժամանակացույց	5.4
38.	Դասախոսական կազմի շարժի/ հոսունության ցուցանիշներ վերջին 5 տարվա համար	5.5
39.	Սեմինարների, ժողովների թեմաներն ու ժամանակացույցը	5.5
40.	Միջազգային պայմանագրեր և հուշագրեր	5.6
41.	Հետազոտական ուղղվածություններ/ ամբիոնային հետազոտությունների ուղղություններ, այդ թվում՝ ամբիոնային հետազոտական պլաններ	6.1
42.	ՄՈՒՀ-ում կրթական միջավայրից դասախոսի բավարարվածության հարցաթերթ /2012-2013 ուս. տարի, 2013-2014 ուս. տարի /	6.2
43.	ՄՈՒՀ-ում արված ստացած կրթությունից ուսանողների բավարավածությունը գնահատող հարցաթերթ /2010-2014 ուս. տարի/	6.3
44.	ՄՈՒՀ-ում կրթակն միջավայրից դասախոսների բավարարվածության հարցաթերթ /2012-2013 ուս. տարի, 2013-2014 ուս. տարի /	6.4
45.	Դասախոսների՝ բուհի աջակցությամբ տպագրված հոդվածների ցանկ	6.4
46.	Միջազգային գիտաժողովներում ուսանողների և դասախոսների զեկուցումների	6.4
47.	ՄՈՒՀ-ում ստացած կրթությունից ուսանողի/շրջանավարտի, ծնողի բավարարվածությունը գնահատող հարցաթերթ, /հավելված 5/	6.5
48.	Ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում (%)	6.5
49.	3 ՄԿԾ-ներով մագիստրոսական թեզերի թեմաները վերջին երեք տարվա համար	6.5
50.	ՄՈՒՀ-ի ՄԿԾ ինքնավերլուծության ձևաչափ	6.7
51.	Գործատուի կողմից լրացված հարցաթերթ ՄՈՒՀ-ում իրականացվող ՄԿԾ-ի շրջանավարտի մասնագիտական կատարողականի վերաբերյալ	6.8
52.	Բերչմարքինգի փաթեթ՝ Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա 2015 թ. մասնագիտություն	6.9
53.	ՄՈՒՀ-ի 2011-2012, 2015-2016, 2013-2014 ուսումնական տարիների ուսումնագիտական գործունեության աշխատանքային պլան	7.1
54.	ՄՈՒՀ-ի ուսանողի պրակտիկայի ղեկավարի հաշվետվության ձևաթերթ	7.3
55.	Տեղական և միջազգային բուհերի/կառույցների հետ համագործակցության պայմանագրերի ցանկ/ պայմանագրի նմուշ	9.3
56.	ՈԱ գործընթացների իրականացման պլան	10.1
57.	Որակի ապահովման բաժնի աշխատակիցների գործողությունների նկարագիր	10.1

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Դեկանատներ
3. Ամբիոններ
4. Կաբինետ-լսարաններ
5. Լաբորատորիաներ
6. Ստորաբաժանումներ
7. Գրադարաններ
8. Բուժկետ
9. Մարզասրահ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԳՊՀ**_Գավառի պետական համալսարան
2. **ԵԲԿՏ** _ եվրոպական բարձրագույն կրթական տարածք
3. **ԵԿԿՓՀ** _ եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ
4. **ԿԳՆ** – Կրթության և գիտության նախարարություն
5. **ԿՀՑ** _ կատարողականի առանցքային ցուցիչներ
6. **ՀՀ** _ Հայաստանի հանրապետություն
7. **ՄԿԾ** _ մասնագիտության կրթական ծրագիր
8. **ՄՈՒՀ** _ մասնագիտական ուսումնական հաստատություն
9. **ՈԱ** _ որակի ապահովում
10. **ՈԱԱ**_ որակի արտաքին ապահովում
11. **ՈԱԱԿ**_"Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն" հիմնադրամ
12. **ՈԱԵՉՈՒ** _ որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշեր
13. **ՈԱԿ**_ որակի ապահովման կենտրոն
14. **ՈԱՇ** _ որակավորումների ազգային շրջանակ
15. **ՈՆԱ**_ որակի ներքին ապահովում
16. **ՈՆԱՀ**_ որակի ներքին ապահովման համակարգ
17. **ՊԴԿ** _ պրոֆեսորադասախոսական կազմ
18. **ՊԻԳԲ** _ պլանավորել-իրականացնել-գնահատել-բարելավել
19. **ՌԾ** _ ռազմավարական ծրագիր
20. **ՌՊ** _ ռազմավարական պլան
21. **ՏՏ** _ տեղեկատվական տեխնոլոգիաներ
22. **ՈԻԳԸ** _ ուսանողական գիտական ընկերություն
23. **ՈԻԽ** _ուսանողական խորհուրդ